

515

Հ Բ Ժ Ա Յ Ո Ւ Թ Ա Ը

ԿՐՈՆԻ

ՀԱՅՈՒԹՅ

Դ Ա Ս Ա Տ Ի Ա Խ Թ Ի Ի Ն Ե



ԹԻՇՁԻՆ ԲԱԺՄՆՄՈՒՆՔՈՒՄ

Բարոյախօսական առակներ
նւ
Ծիստսի կեանքից պատմուածներ:

220

661-40

Կազմեց ՔԱՄԱԼԵԱՆՑ Ա. ՊԱՓԻՐ

(Նախկին կրօնուսոյց Ներս. հոգ. դպրանոցի, այժմ
հար լեզ. և կրօնի դասատու. թիֆլիսի նոր առևտրա-
կան դպրոցի):

Ձ(02)

Ձ-17

— — — — —

ԹԻՖԼԻԶ
Դպարան «ԷՊՈԽԱ», Գանովսկայա, № 3
1909

29.08.2013

220
659-44 F-17

03 AUG 2009

ԿՐՈՆԻ

ԴԱՍՏԱԽԱՐԱԳԻՒՅՆ

ՐՈՅԹԻ ԲԵՔԵՆՄՈՒՆՔՈՒԹ

7/XI 1922

Քարուախօսական առաջնորդության և ի համարության վեցամյակ աշխատանքը:

Ցիոնական պատմուածներ,

1004
986
1

Կազմեց ՔԱՄԱԼԵԱՆՑ Ա. ԴՊՒ

(Նախկին կրօնուասոյց Ներս. Հոգ. գպրանոցի, այժմ
հայ լեզ. և կրօնի դասատու թիֆլուսի նոր առետրա-
կան գպրոցի):

ԹԻՖԼԻԶ
Տպարան «ԷՊՈԽԱ», Գանովսկայա, № 3.
1909

Հ Օ Ն

Տէր Յարութիւնեանց մեծ. սլարոն Գրիգորին

Իբրև կլօնուսոյց ես չորս տարի (1903—07 թ.) ծառայելով Ներսիսեան հոգևոր դպրոցում, փորձով համոզուեցի, որ Աղքային Սերմնարանի բազմաթիւ պաշտօնեաներից ոչ ոքի, լինի տեսուչ, ուսուցիչ, հոգաբարձու թէ վերակացու, հազարաւոր աշակերտները, մանաւանդ գաւառացիք, օտարերկրացիք, այնպիսի վստահութեամբ չէին մօտենում իրանց վիշտը, իրանց կարիքը յայտնելու ինչպէս Զեզ: Լքուած սրտերը ձեր առաջ էին բաց անում իրանց ծածուկ ծալքերը: Դուք հայրական անսպառ սիրով վերաբերուելով՝ սրբում էիք հայ աղգի չքաւոր զաւակների արցունքները ու մխիթարում ձեր քաղցր եղանակով: Ուսուցչի ու վերակացուի պաշտօնով այդ դաստիարակչական վեհ գործն անշեղ, լոիկ մնջիկ տարել էք ամբողջ լիսուն տարի Ներսիսեան դպրոցի պատերի մէջ: Յիսուն ձիգ տարիներ ծառայել մի աղգային հիմնարկութեան մէջ տարբեր ուղղութեան տեսուչների, հոգաբարձուների իրաւունքի տակ ու դեռ նոյն հոգով ու անձնուիրութեամբ շարունակել: — դա ներկայ հայ իրականութեան մէջ ոչ թէ հազուադէպ երեսյթ, այլ հրաշք է:

Այդպիսի գործունէութեան համար Զեզ՝ վաղեմի սիրելի ուսուցիչ, կոթող է արժանի, որ անշուշտ Ներս. դպրոցի շնորհապարտ աշակերտութիւնը (սկսած 1858 թ.) ապագայում կրկանգնի, իսկ առ այժմ ինձնից, որ մէկն եմ ձեր անթիւ հոգևոր զաւակներից, ընդունեցէք այս փոքրիկ նուէրը. չնչին է, բայց անկեղծ սրտից բղխած: Անչափ գոհ եմ բաղդից. որ առաջինն ինձ վիճակեց բազմնրախտ պարոն Գրիգորի անունով զարդարել մի գրաւոր աշխատութեան ճակատ:

Քամալեանց Ս.

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Կրօն ասելով մենք հասկացել ենք սրտի կրթութիւն։ Այդ ուղղութեամբ ընթանալով մենք կրօնուսոյցի պաշտօնը համարել ենք ամենազժուարինը։

Ով կարծում է թէ կրօն աւանդելը չոր ու ցամաք աղօթքներ սերտել տալու, նին ու նոր ուխտից ոլոշ զլուխներ պատմել տալու և եկեղեցական ծէսեր բացարելու մէջ է, նա մանկավարժ չէ, այլ դուրգար, որ սովոր է ուրագով մի քանի րոպէում փայտի կտորները տաշոտել ու վերջացնել։

Հոգեբան կրօնուսոյցն այդպէս չի անում, նա համբերութեամբ զինուած շարունակ ուսումնասիրում է աշակերտին, ամեն կերպ աշխատում է թափանցի նրա ներքին աշխարհը, որ իրա խնամքին յանձնուած մանուկի լուսաթաթախ հոգին կրթելով նրանից մի ազնիւ մարդ կերտի։ Այդպիսի վեն նպատակի համաելու համար նա դասի միջոցին ջանք է թափում բռնիշ աշակերտի սրտից և ոչ թէ ականջից ու մազերից, ինչպէս անում են այժմ էլ տգէտ խալֆաները։

Կրօնագիտութիւնը մեր դպրոցներում արտօնեալ ու նախագաս առարկայ է եղել միշտ, բայց փաստն այն է, որ աշակերտների աշքում խիստ ընկած է։ Թեթև մտածողներն ասում են. «որա պատճառն այն է, որ կրօնը փատած առարկայ է, նիւթ չունի մէջը, ուստի չի հետաքրքրում աշակերտներին»։ Այդպէս մտածելու հետկանքն էր, որ վերջին տարիներին կրօն բառը շատ տեղ դասացուցակներից հանեցին. (օրինակ՝ թիվ. Գայ. օր. դպրոց)։ Ներս. հոգ. դպրանոցն էլ իրա Ե. և

Զ. դասարանների ծրագրից Ուսումն Ս. գրոց Է Քրիստ. վարդապետ. առարկաներն արտաքսեց։

Կրօնի դէմ եղած հալածանքը սխալ քայլ էր։ Դպրոցում թէ հրապարակում դատափետուում էր կրօնը թիւրիմացութեամբ. հաստատ կարելի է ասել, որ մեղը կրօնինը չէր, որ ձանձրալի ու անհետաքրքիր էր աշակերտներին, այլ ծրագրինը, դասատուինը, դասագրքինն էր, որ կրօնի ուսուցումը սխալ տանելով նրան վարկարեկել էին։

Խոշոր սխալը նկատելի է Ա. տարուց։ Հայ. մանկավարժն ու դպրոցն աւելորդ են համարել լուրջ ուշադրութիւն դաշնել կրօնի սկզբնական ուսուցման վրայ։ Գիւղացի անդրագէտ մայրը նորածին մանուկին առաջին ամիսներին դիւրամարս կաթով է կերակրում, ապա պինդ բաների ընտելացնում, հայ դպրոցում կրօնի դասին դրա հակառակն են վարւում, այսինքն նորեկ 7 տարեկան մանուկին ստիպում են գրաբառ աղօթք ներ սերտել։ Շատ էլ դրանք չափազանց հեռու են նրա սրտից ու խեղքից, ով է նրա կամքը հարցնում, դահճի պէս գլխին կանգնած նահատակելով սերտել են տաշիս։ Ի՞նչ զարմանք, որ դրանից եաւ աշակերտն ատելով ատում է կրօնի դասը, որովհետև սիրտը կրթելու փոխարէն նրան բթացնում ու զգուեցնում է։

20—30. տարի առաջ էլ հայ երեխան գրագէտ դասնալու համար անցնելու էր «այբուբենաւուի անշուսափելի կամրջով։ Մեզանից ով չի յիշում այդ պատուհաս մետողի ձերից կրած տանջանքները։ Փառք Տէրին, շնորհիւ նոր մանկավարժութեան՝ բթացնող Քերականն ու գրաբառ Սաղմուց վերացել են, լեզուի ուսուցման նիւթն ու եղանակն այնքան դիւրացել ու սրտագրաւ են դարձել, որ մանուկը հըճուելով է կարդալ-գրել ուսանում։ Նոյն էվոլյուցիան անպայման հարսկաւոր է, որ տեղի ունենայ նաև կրօնի դասատութեան մէջ։ Հոգեբանութիւնը բոլոր առարկաներից

անխտիր նոյն պահանջն է անում, միշտ հեշտից դէպի դժուարը, մօտիկից դէպի հեռուն, ծանօթից դէպի անձանօթը: Միակ բացառութիւն կազմողը կրօնն է, որ դեռ առաջ է տարւում հին, անքնական եղանակով: Դասատուները զեկավարուելով եղած ծրագրով ու Ա. տարրուայ կրօնի դասագրքերով՝ դաւառացի մանուկին հարկադրում են «Հայր մեր, Ամենաքարի, Գոհանամբ, Տասն պատգամք, Հանգանակ հաւատոյ» բերան անել, երբ նա չի կարողանում գրական լեզուով մի նախադասութիւն ճիշտ արտաքերել: Ստիպում են քարտէղների վրայով ճանապարհորդել դէպի Քանան, Պաղեստինէ, պատմել բոլորովին օտար Հերովդէսի, Աքրահամի և այլոց մասին, երբ նա դեռ չի ճանաչում իրաշրջապատը, դպրոցի թաղը, իրա յարաբերութիւնները դէպի ծնողները:

Մանկավարժական այդ թերին սպասելի էր, որ լրացնէր 1908 թ. երկրորդ տպագրութեամբ լոյս տեսած մեծադղորդ կենորոնական ժողովի ծրագիրը: Դժբաղդաբար նրա մշակող մասնաժողովը խորթ աշխով է նայել կրօնի վրայ. ամեն մի առարկայի համար դրել է առանձին երկար հրահանգ կամ բացարութիւն, իսկ կրօնի համար ոչ մի հատիկ խօսք: Ա. տարրուայ դասընթացի նիւթը դասաւորած է հակամանկավարժորէն. – 1) աղօք, 2) նոր ուստից պատմութիւններ, 3) մանկական հերիարքներ: Ընթերցողն էլ պարզ կարող է նկատել, որ սա ոչ թէ ժամանակակից մանկավարժութեան ցուցմունքների համեմատ չէ, ինչպէս մշակող մասնաժողովն է պնդում իրա ընդհանուր բացարութեան մէջ, այլ ուղղակի հոգեբանութեան պահանջներին հակառակ է: Փորձառու կրօնուայցը ոչ թէ պիտի այդ ծրագրի ցուցումին հետևի, այլ նրա հակառակը վարուի, տակից սկսի ու գնայ դէպի վերև, որ դուրս գայ նոր մանկավարժութեան ուզածը: Կրօնի դասատութիւնը լեզուի ուսուցման պէս նորեկ մա-

նուկի հետ պիտի սկսուի այնպիսի նիւթերով, որ մօտ ու ընտանի են նրա սրտին ու մտքին: Հայրենագիտութիւնն է մայր հողը, ուրիշ առարկաների հետ կրօնի սկզբնական ուսումն էլ պիտի բղխի այդ տեղից: Եթէ հայ լեզուն ու կրօնը մի ուսուցչի ձեռին են, նա կարող է միևնոյն բարոյախօսական առակից նիւթ վերցնել թէ առաջնի և թէ երկրորդի վարժութեանց համար: Կարիք չկայ պահանջելու, ինչպէս ներկայ կրօնուայցներն են անում, որ մանուկը կրօնի դասին նստի միշտ մըլած ու անժպիտ: Նա կարող է լինել զուարթ ու անկաշկանդ, ինչպէս միւս դասերին: Երբ դասարանում անտարբեր է մանուկը, դա նշան է, որ իրա հասակի ու հասկացողրեթեան անհամապատասխան նիւթի առաջ է նստած: Տուեք այնպիսի նիւթ, որի մէջ մանուկը կենսական շահերն ու կրօնի սկզբունքներն իրար շոշափեն, կըտեմնէք, որի մանուկ սիրտը կըսիրի ձեզ էլ, ձեր առարկան էլ:

Կրօնի դասատութիւնը ամուր հիմքի վրայ դնելու համար պիտի ընդունել ընական, խելացի եղանակը, այն է՝ սկզբից ունենալ մի նախաշաւիղ, որի նիւթով ուսուցիչը մանուկներին վարժեցնի խօսելու, մտածելու և զգալու մէջ: Այդ նախապատրաստութիւնից ետ միայն պիտի անցնել ս. գրքից վերցրած պատմութիւններին: Գըաբառ ոչ մի աղօթք. դիւրըմբռնելի աշխարհաբար աղօթքներ ու երգեր սովորցնել նիւթերին կից յարմարաւոր տեղում:

Աշակերտի համար կրօնի հիմք կազմում են այն յարաբերութիւնները, որ կան իրա և ծնողների մէջ: Ուստի նախաշաւղի ամենագեղեցիկ նիւթը կը կազմեն այն տպաւորութիւնները, որ մանուկը մինչև դպրոց մտնելն զգացել է ընտանեկան ծանօթ շրջանում, ծնողների մօտ: Ապա նախաշաւղի մէջ կըմտնեն այնպիսի բարոյախօսական առակներ, որոնց բովանդակութիւնը պտտում է մանուկների, կենդանիների կեանքի շուրջը:

Նախապատրաստական նիւթը աչքի առաջ պիտի ու-
նենայ երկու նպատակ, որոնք և կազմում են առհա-
սարակ կրօնագիտութեան ուղղ ու ծուծը. այն է՝ կեն-
դանիների, մանուկների վրայ խօսեցնելիս արծարծել
ու վառ պահել սանիկի սրտի մէջ ընկերութեան
կայծը, իսկ ծնողների առթով խօսեցնելիս՝ Աստուած-
տիրութեան կայծը։ Պեստալոցին ասում է. «սիրոյ,
վստահութեան և երախտագիտութեան զգացումներն իմ
մէջ աւելի վաղ պիտի զարգացած լինեն, որ ապա ես
նրանց գործադրեմ Աստծու վրայ։ Այս զգացումները
բղխում են այն յարաբերութիւնից, որ կայ մանուկի և
իրա ծնողի մէջ»։

Մանուկի զպրոց բերած տպաւորութիւններն ու
զգացումները անտարակոյն ցան ու ցիր և աղօտ են.
զրուցատրութեան եղանակի շնորհով—որ հոգեբանու-
թեան յայտնի կամուրջն է—այդ ամենն աշակերտի
մէջ գառնում է ամփոփ ու պարզ։ Աշակերտին Աստծու
հայրական բարութիւնը ըմբւնելի դարձնելու համար,
պիտի վերոյիշեալ սոկրատեան մետողի (հարց ու պա-
տասխանի) նիւթ շինել ծնողների կրած հոգսերը, նե-
ղութիւնները զաւակների ամեն կարիքի ժամանակ։
Հերքարտն ասում է, «մանուկի համար ընտանիքը պի-
տի լինի տիեզերքի կարգաւորութեան սիմբոլը։ Ծնող-
ներից իդէալացնելով պիտի առնել Աստուածութեան
յատկութիւնները»։

Ահա այս մեր հաւանած ու գործադրած ուղղու-
թեան համեմատ աշխատել ենք կազմել ներկայ ձեռ-
նարկը Ա. բաժանմունքում կրօն աւանդելու համար։
Գլխաւորապէս աչքի առաջ ենք ունեցել նոր սկսող,
երիտասարդուսուցիչներին, բայց սա կարող է ուղե-
ցոյց լինել դաստիարակների, ծնողների համար և։—
Առաջին 7 պլուխը բովանդակում են նախաշաւղի նիւ-
թը, մնացածը Յիսուսի կեանքից վերցրած պատմուած-
ներ են։ Աղօթքներին առանձին բաժին չի յատկա-

ցուած։ Նրանք կցուած են նիւթերին իբրև լրացուցիչ
մասեր։

Մենք դէմ ենք այն աղօթք ասելու ձեմն, որ առ-
հապարակ տիրում է մեր դպրոցներում, ծաղր ու ծա-
նակով իրար բերանից խլում են աշակերտները «Հայր
մերը» կամ «Դոհանամք»-ը ու մի կերպ վերջացնում,
դասարանից դուրս փախչում։ Կրօնի սկզբնական ու-
սումը պիտի այնպէս խնամքով տանուի, որ աղօթելը
մանուկ սրտի համար դառնայ սրբազն սովորութիւն,
երախտագիտական զգացում։ Դժբաղդպար դպրոց ե-
կող հայ մանուկը մեծ մասամբ բարբառախօս է, փոքր
մասամբ թիւքքախօս, վիրախօս կամ ուտիախօս, իսկ
մեր աղօթքները զրաբառ են կամ զրական լեզուով։
Խամ աշակերտը ոչ այն կարող է ճիշտ սովորել, ոչ
այն, քանի որ շատ բառերի իմաստը նրա համար մութ
է։ Կիսատ պուատ արտասանած աղօթքն էլ ոչ մի ար-
ժէք չունի։ Այս դէպրում մնում է գործադրել ընտա-
նիքի մանկավարժութեան ձեւը, այսինքն մօր օրինակը։
Դորովագութ մայրը փոքրիկ տղային կամ աղջկան
գոգն առած, նրա թաթիկներն իրա ձեռների մէջ
միացրած՝ բարձրածայն աղօթում է թէ իրա և թէ որ-
դու համար։ Այդպէս էլ ուսուցիչը պիտի սկզբում ինքն
աղօթի ողջ գասարանի համար։ Աշակերտը նրա աղօ-
թելը տեսնելով, լսելով, ինքնաբերաբար հետևում է
նրա բովանդակութեան և սովորում է ինքն էլ աղօ-
թել Հարկաւոր է, որ աղօթքի խօսքերը բղխեն ուսուց-
չի սրտի խորքից, ձայնի մէջ նկատուի ջերմութիւն,
անկեղծութիւն, դէմքն արտայայտի բարեպաշտ վեհու-
թիւն։ Այս հանգամանքներից մանուկն այնպէս աղդը-
ռում է, որ ամբողջ մարմնով զառնում է երկիւղածու-
թիւն և հոգին իսկապէս զգում է թէ բնչ է նշանա-
կում աղօթք։

Ա. տարրուայ աշտկերտների համար աւելորդ հա-
մարեցինք նիւթը մշակել հինգ աստիճաններով։ Մեր

Նպատակն է եղած դասատուի գործը դիւրացնել և ոչ
թէ ձևականութիւններով կաշկանդել: Մետողական
միութեան ծանր կէտը երկրորդ աստիճանն է, մշա-
կութեան մէջ ամենամեծ ուշադրութիւնը դարձրել ենք
դրա վրայ:

Միանգամայն աւելորդ ենք գտնում տարուայ
սկզբին անգրագէտ մանուկի ձեռը կրօնի դասատետր
կամ դասագիրք տալը, թէկուզ այդ լինի պատկերա-
զարդ: Կրօնի դասին ամենաընտիր դասագիրքը կրօ-
նուսոյցի անձնաւորութիւնն է: Անջուղտ իբրև օժան-
դակ միջոց, նա իրա ձեռի տակ կունենայ մեծադիր
պատկերներ ողջ դասարանին ցոյց տալու: Դիտողա-
կան ուսման կամ կիօնագիտութեան համար մի քանի
կարևոր պատկերներ ձհոք բերելը ամեն մի փոքր ի
շատէ բարեկարդ դպրոցի պարտականութիւնն է: Եթէ
դպրոցն աղքատ է, ուսուցչի առաջնորդութեամբ կա-
րելի է օգտուել եկեղեցու խաչկալի շուրջը եղող սրբ.
Նկարներից, որոնք ահազին գումարներ են կլանում
համայնքից և միայն իբրև զարդարանք են ծառայում:
Դրանցից համեմատաբար աւելի ճաշակ կստանան 8
տարեկան աշակերտները, քան թէ դասագրքի մէջ դրած
խիստ փոքր, մրոտ պատկերներից: Շեշտում ենք՝ ա-
շակերտի կրօնի դասագրքի մէջ պատկերներ զետեղելը
շատ տեսակէաներով հակամանկավարժական է:

Ներկայ աշխատութիւնը տպւում է սակաւաթիւ
օրինակներով: կազմելիս աչքի առաջ ենք ունեցել
պրօֆ. Ե. Տրէնդորֆի երկը (ստորին բաժանմունքի
համար), որը սակայն նախաշաւիղ չունի:

Սրա աշակերտական բաժինը, շուտով կը տպագ-
րենք, կարժենայ միայն տաս կոպէկ. մանուկների
ձեռը պիտի տալ միայն յունվար ամսից, երբ ընթեր-
ցանութեան մէջ վարժ են:

Եթէ միջոց ունենանք, հետզհետէ մամուլին կը
յանձնենք յաջորդ տարիների դասընթացները: Ուսուց-

չական բաժինների հետ կլինեն նոյնպէս համապատաս-
խան դասագրքերը աշակերտների համար:

Բ. տարի. Նահապետների կեանք:

Գ. տարի. Խորայէլ ժողովրդի պատմութիւն. Մով-
սէսից մինչև Եղիա:

Դ. տարի. Գրող մարգարէներ:

Ե. տարի. Ցիսուսի կեանքը:

Զ. տարի. Առաքեալների ժամանակաշրջան և Հա-
յաստանի լուսաւորիչներ:

ՅՈՐԻՆՈՂ

1909 նոյ. Թիֆլիս.

8 Ա. Ն Կ

1. Մայր և զաւակ
2. Ընտանիք.
3. Որբ.
4. Աստուած ամեն բան տեսնում է.
5. Որդու զղումը.
6. Ճամբորդ պատանին և արտուալը.
7. Ազնիւ սիրու.
8. Ցիսուսի ծնունդը.
9. Արևելքից եկած իմաստունները.
10. Եգիպտոս փախչելը.
11. 12 տարեկան Ցիսուսը տաճարում.
12. Ցիսուսի մկրտութիւնը.
13. Պետրոսի ձկնորսութիւնը.
14. Հինգ հազար հոգու կերակրելը.
15. Ցայրոսի դուստրը.
16. Ողորմած սամարացի.
17. Ցիսուս և մանուկներ.
18. Ցիսուսի Երուսաղէմ մտնելը.
19. Ցիսուսի խաչելութիւնը.
20. Ցիսուսի յարութիւնը.
21. Վերջին պատուէր տալը և համբառնալը.
22. Քրիստոնէական առաջին համայնքը.

1. ՄԱՅՐ ԵՒ ԶԱՀԱԿ

1. Նպատակ. ի՞նչ պատմեց որդին մօրը.

Ո՞րտեղ են խաղում մանուկները: —Բակում, պատշգամբում: Տան մօտ ի՞նչ կարող է լինել: —Պարտէզ, այգի: Ինչե՞ր են բանում այնտեղ: —Թփի վրայ ի՞նչ է լինում: Տե՞րն, պտուղ: —Բայց մի օր փոքր Սուրէնը վագենով տուն եկաւ, մօրն ասեց, որ պարտէզի թփի վրայ թոշումի բուն է տեսել: Ի՞նչ կլինէին նրա մէջ: Զու կամ ձագելու: —Մօտիկ անցնելիս ճիւ ճիւ ձայներ է լսել: Ի՞նչ կուզէր անել: —Տեսել է տկլոր ձագեր: Նրանք երբ զգացել են, որ մօտեցող կայ իրանց բնին, կտուցները բաց են արել և ճաճւացել: Ի՞նչ էին ուզում: Կեր: — Նրանք ի՞նչ էին կարծում: — Որ իրանց մայրը գալիս է: —Փոքր Սուրէնն ի՞նչ կանէր: Աչքերը չուծ մտիկ կանէր, թէ ի՞նչպէս են թոշիկները կլափները ճւճալէ բաց ու խուփ անում: — Ուր էր նրանց մայրը: Գնացել էր կեր ճարելու: Ի՞նչ կըլսէր: Նրանց ձայնը: Ցետիյ: Կշտապէր նրանց մօտ: — Այո, նրանց մայրը եկաւ, կողքի թփի ճիւղին կանգնեց և չըրթչըրթաց: Ի՞նչ էր կարծել նա: Որ մէկն իրա ձագերին վլաստում է: Զըրթ-չըրթ ձայնով ի՞նչ ասելիս կլինէր: «Չագերիս ճեռ մի տալ, հեռացիր»: Սուրէնն ի՞նչ կանէր եը հեռանար: — Այո, թփից հեռու լուս կանգնեց: Թոշումն ի՞նչ կանէր: Եը թոշէր բունը: Տկլոր ձագերին ի՞նչ կանէր: Թեկրով կըծածէր: Սուրէնի վրայ ուրախ նայեց: Ի՞նչ կարելի էր կարդալ նրա փայլուն աչքերում: «Ենորհակալ եմ, որ ձագերիս վիաս չըտուիր»:

Ամիովումն. Փոքր Սուրէնն ուր էր գնացել: Ի՞նչ

լսեց: Ի՞նչ տեսաւ:—Ի՞նչ խնդրեց թոշունը:—Ի՞նչպէս վարուեց Սուրէնը:

Ի՞նչ կը պատահէր, եթէ Սուրէնը բնին ձեռ տար: Զագերը կը վախենային: Բունը ձագերի համար նոյնն է, ինչոր օրօրոցը նորածին մանուկի համար: Մանուկը միշտ ում է տեսնում: Հօրն ու մօրը: Անծանօթ մարդ տեսնելիս ի՞նչ է լինում: Լաց է լինում: Ի՞նչն է: Վախենում է: Այդպէս կըլինէր և ձագերի հետ: Նրանք միշտ ում էին տեսել: Իրանց մօրը:

Ի՞նչպէս կը վարուէր Սուրէնը, եթէ չար տղայ լինէր: Ի՞նչից երևաց, որ նա լաւ տղայ էր: Թփից հեռու կանգնեց: Ի՞նչն է: Որ չուած աչքերով ձագերին չըվախեցնի: Չըվախեցնելու համար էլ ուրիշ ի՞նչ արեց: Լուռ հանգիստ մնաց:

Թոշունն ի՞նչն շտապ եկաւ թփի մօտ: Կարծեց, որ ձագերին փորձանք է պատահել: Վրդովմունքից ի՞նչ էր անում: Չըթչըթում էր ու ճիւղի վրայ անհանգիստ շարժում: Դրանից ի՞նչ էք հասկանում: Ուզում էր ձագերին պաշտպանել:—Դուք ուր էր վազում, երբ մէկը ձեզ ծեծում է: Դէպի տում: Ո՞վ է հոգս տանում, որ ձեզ մնաս տուող չինի: Ծնողները: Նրանք ձեզ ի՞նչ են անում: Հովանաւորում են:

Փոքր մանուկը լաւ ման գալ չի կարում: Ի՞նչ կարող է նրան պատահել: Վէր կընկնի, գլուխը գետնին կը դիպչի: Ի՞նչպէս է մայրը հեռու պահում այդ փորձանքից: Գրկած է ման ածում:—Մանուկները սիրում են խաղալ դանակի, մլրատի հետ: Ի՞նչ մնաս կարող է առաջ գալ: Ի՞նչ են անում ծնողները, որ երեխան անմնաս մնայ: Նրանք հսկում են: — Ի՞նչն թոշունը չէր թողում, որ ձագերին փորձանք պատահի: Սիրում էր նրանց:—Ծնողներն ի՞նչն են հսկում զաւակների վրայ: Սիրում են նրանց:

Ամփոփումն. Ո՞վ է հսկում փոքր ձագերին: Ո՞վ է հսկում մանուկներին: Թոշունը ի՞նչ է, անում իրա

ձագերին (սիրում է): Ծնողներն ի՞նչ են անում իրանց զաւակներին:

2. Նպ. Ի՞նչ պատմեց մայրը որդուն

Մայրն ի՞նչ կասէր որդուն:—Դու էլ մի ժամանակ թոշունի ձագի պէս պատիկ բան էիր: Որդին ի՞նչ կը հարցնէր:—Հապա ես ի՞նչպէս մեծացայ: Մայրը պատմեց. «Հայրդ և ես քեզ զրինք բնի մէջ, ծածկեցինք ամեն կողմից, որ տաք մնաս: Երբ քաղցում էիր, ճռալով լաց էիր լինում, մենք իսկոյն քու բերանում բան էինք դնում: Այսպէսով դու աճեցիր, զօրացար: Այժմ կարողանում ես արդէն վազվել և ցատկուելու»:

Ի՞նչն ձագերը խեղճ բաներ էին: Տկու էին և տկլոր: Իայց նրանք տաք ու փափուկ պարկած էին բնի մէջ: Թոշունն ի՞նչ էր դրել այնտեղ: որ ձագերը տաք լինեն: Բուրդ, աղուամազ: Անձրեկ ու քամու ժամանակ մայրը նրանց ի՞նչ էր անում: Մածկում էր: Ի՞նչն վ: Թևերով:—Իմացանք, որ Սուրէնն էլ փոքր ժամանակ խեղճ բան էր: Ի՞նչն վ: Զէր կարում ոչ մանգաւ, ոչ կանգնել և ոչ խօսել:—Ի՞նչ տեսակ բնի մէջ է պարկեցրել մայրն իրա զաւակին: Օրօրոցի, անկողնի մէջ: Ի՞նչպէս է տաք պահել զաւակին: Վերմակով ծածկել է: Ուրեմն մայրը նոյնն է անում զաւակների համար, ի՞նչ որ թոշունը իրա ձագերի համար:—Ի՞նչն էին ձագերը կտուցնին. բաց ու խուփ անում: Ի՞նչ էին ուզում անել իրանց մայրիկին:—«Սիրելի մայրիկ, մի բան տուր ուտենք, քաղցած ենք»: Ո՞ւր էր թոշուն նրանց մայրը: Կեր բներելու:—Երբ վերադառնում էր, ձագերն ի՞նչ էին անում: Իրար եանից ճճուում էին: Ի՞նչ էին ասում դրանով: «Ինձ տուր մայրիկ»:—Զէ, ի՞նձ, ասում էր միւսը:—Զէ, ի՞նձ, պահանճում էր երրորդը: Մօր բերածը մի ճիճու էր, միթէ ամնին հերիք էր: Ի՞նչ պիտի անէր մայրը: Գնար դարձեալ կեր բերէր: Այդպէս անում էր մինչեւ երեկոյ: Ուտելով

աճում էին ձագերը և շահանում: —Փետուրները դուրս գալուց ետ ի՞նչ էին սովորում:

Երբ փողը մանուկները խօսել չգիտեն, ի՞նչպէս են ասում թէ քաղցած են: Լաց լինելով: —Ի՞նչպէս է լուցնում մայրը: Հանում է օրօրոցից, գիրին առնում, ծիծ տալիս: Դրանից ի՞նչ է լինում երեխան: —Ատամները դուրս գալուց ետ ի՞նչով ին կերակրում նրան: —Երբ ոտները պնդացել են, մանուկն ի՞նչ է սովորում: Վազել, ցատկել: —Ի՞նչ անկողին է տալիս թոշունն իրա ձագերին: —Ի՞նչպէս է նրանց տաք պահում: —Ի՞նչ է անում, որ չըքաղցեն, այլ աճեն ու շահանան: Թոչունը ինամք է տանում ձագերի համար: Ի՞նչու է այդքան խնամք տանում: Որովհետեւ սիրում է նրանց: —Մայրն ի՞նչպէս է ինամք տանում զաւակի համար: Քնացնում է օրօրոցում, տաք է պահում, կրծքին կպցրած ծիծ է տալիս, հագցնում, լողացնում է, գրկած ման է ածում: Ի՞նչու է արդքան խնամք տանում մայրը: —Որովհետեւ սիրում է զաւակին:

Ամփոփումն. Ո՞վ է խեղճ եղել թոշունի ձագի պէս: Սուրէնը: Ո՞վ է նրա վրայ ինամք տարել: Մայրը:

3. Նպ. Ի՞նչպէս որդին սիրում է մօրը.

Սուրէնի համար ով էր այնքան նեղութիւններ քաշել: —Ի՞նչ էր կարծում, Սուրէնը սրտի մէջ գո՞ն: Էր մօրից թէ չէ: —Այն, գո՞ն էր, թուան նրա գիրկը և ասեց. «Ա՛ն, մայրիկ ջան, որ իմանաս, ի՞նչքան եմ սիրում քեզ»: Մայրն ի՞նչ կանչըր: —Համբուրեց Սուրէնի թուշը և հարցրեց. «Ի՞նչու ես ինձ սիրում, զաւակս»: Սուրէնն ի՞նչ կառէր: —Փաթաթուեց մօր վզով և խօսեց. «Քեզ սիրում եմ նրա համար, որ մանուկ ժամանակս ինձ ծիծ ես տուելք պահել, գրկած ման ես ածել, լուացել ես, հագցրել ես, թուշս այսպէս քաղցր համբուրել ես. ախ, մայրիկ, քեզ այնքան եմ սիրում, որ լեզուով չեմ կարող ասելք: —Սուրէնն ի՞նչով ցոյց տուեց, որ մօրը սիրում է: Փաթաթուեց վզով: Ի՞նչու

էր սիրում մօրը: —Որովհետեւ նա անցավ բարեկայի էր: Ի՞նչ էր արել Սուրէնին: —Իսկ մանցապէս նովոթիւնը: 1922 թաթից բռնել էր: —Փողոցում խառնութեան Հայութական Ապահովագույն մար Աստծուն աղօթել: Եւրեմն Սուրէնն ի՞նչուերապէս բռում մօրը: —Որովհետեւ նրան պահել պահապանել էր:

Ամփոփում. Ի՞նչ պատմեց որդին մօրը: Ի՞նչ պատմեց մայրը որդուն: —Ի՞նչպէս Սուրէնը սիրում էր մօրը:

Ի՞նչ կարող ենք սովորել այստեղից: —Ի՞նչ տեսակ տղայ էր Սուրէնը: —Եթէ դուք էլ ուզում էք լաւ տղաներ լինել, պիտի աշխատէք նրա պէս լինել: —Ի՞նչ կանես, (դիմել մի աշակերտի), եթէ տեսնես ծիծեռնակին բռն շինելիս սրահի անկիւնում կամ հերթի տակին: —Եթէ ձեռ տաս, թոշունն ի՞նչ կանի: —Կը ըրարկանայ, կանիծի իրա ճմլոցով, յետոյ ճարահատած կը փախչի: —Բնի վրայ գործ դրած աշխատանքը զուրկանցնի: Իսկ եթէ թոշունը ձուաների վրայ նստած է, մօտ կը գնամա, թէ հեռու կը մնաս: —Եթէ թոշունը փախչի, ձուաներն ի՞նչ կլինին: —Կը սառչեն ու կը լականան: —Երբ թոշունը տկուռ ձագեր ունի, կը վերցնեմ: —Ի՞նչու ոչ: —Տեսել էք արդեօք. թէ մայրն ի՞նչպէս է ողբում իրա կորած կամ մեռած զաւակի վերայ: —Այսպէս տխուր է թոշունը, երբ նրա ձագերից մինը վերցնում ես: —Թոշունն առաւօտից մինչև երեկոյ չարչարում է, որ իրա զաւակները տնակ ունենան: Թեերով ծածկում է տկլոր ձագերին, որ չըմբսեն: —Յետոյ Աստուած նրանց տալիս է տաք փետուրէ հագուստ: —Ողջ օրը մայրը կեր է փնտրում ձագերի համար, որ չըքաղցեն:

Սուրէնն իրա մօրը սիրում էր: —Դժւ էլ սիրում ես մայրիկիդ այդպէս ջերմ: —Ի՞նչու համար: —Ի՞նչ ես անում, եթէ մօրդ սիրում ես: —Ի՞նչ ասում է, կատարում եմ. աշխատելիս օդնում եմ: Իսկ երբ մայրիկը

հիւանդ է:—Աղօթք-վ խնդրում եմ Աստծուն, որ առղջացնի: Երբ առաւօտը գալիս է զարթեցնելու, կամ երեկոյին գործի բարձիդ դրած քեզ համար հեքեաթ է ասում, դու ի՞նչ ես անում:—Համբուրում եմ սիրելի մայրիկիս:

2. Ը Ն Տ Ա Ն Ի Ք

1. Նպ. Ինչպէս ծնողները հոգս են քաշում զաւակներին կերակրելու համար:

Այսօր առաւօտ ի՞նչ ես կերել:—Ի՞նչ ես բերել հետդ ուսումնարան: Ո՞վ է քեզ հաց, պանիր տալիս, որ բերես ուսումնարան:—Մայրը:—Ո՞վ է քեզ համար ճաշ պատրաստում: Ո՞վ է հոգում, որ տանն ուտելիք և խմելիք ունենաս:—Մայրը:—Երեկոյեան մի է ընթրիք տալիս:—Մայրը:—Բայց տեսնենք, արդեօք հայրը չի օգնում, որ դու ուտելիք և խմելիք ունենաս:—Ասա, մայրդ որտեղից է գտնում հացը. (հացթուխից է գնում):—Ո՞րտեղից է ճարում միսը (նոյնպէս գնում է):—Ո՞րտեղից է այն իւղը, որով փլաւ էք շինում կամ կերակրի մէջ զցում (գնում է):—Դրանց համար ի՞նչ է վճարում:—Փող:—Փողը որտեղից է ստանում քումայրը:—Հայրս է վաստակում, Դրա համար նա ի՞նչ է անում:—Իրա արհեստը բանացնում է: Եթէ հայրդ չաշխատի, մայրդ ի՞նչ չի ունենալ:—Փող: (Գիւլացի հայրը վաճառում է իրա այգու կամ արտի բերքը՝ պատողը, խաղողը, ցորենը, նրա տեղ փող ստանում և տան կարիքը հոգում): Մայրիկի հետ էլ մի է հոգում, որ դու մնունդ ունենաս: Հայրը:—Ուրեմն մվեր են հոգս քաշում քու ապրուստի համար:—Հայրն ու մայրը:

Անինիւնն. Մայրը փողով է ձեռք բերում զաւակի համար ուտելիքն ու խմելքը:—Հայրն է վաստակում այդ փողը:—Ծնողները միասին են հոգում զաւակի ապրուստի համար:

2. Նպ. Ինչպէս ծնողները հոգս են քաշում զաւակների հագուստի համար:

Թոչունն ի՞նչ էր անում, որ տկլոր ձագը չըմրսի: Թևերով ծածկում էր: Յետոյ Աստուած ի՞նչ է տալիս ձագին: Փետուրէ տաք ծածկոց:—Մարդիկ ի՞նչ են անում ցուրտ եղանակին:—Ինչո՞ւ է լաւ բան հագուստը: Տաք է պահում:—Ո՞վ է տուել քեզ այդ հագուստը:—Մայրը:—Ի՞նչ է անում նա, երբ հագուստդ պատռուում է: Կարկատում է:—Ի՞նչ է անում, երբ հագուստդ կեղտուում է: Լուանում է:—Թոչունն ի՞նչո՞ւ թևերը ձագերի վրայ փոռում էր:—Մածկում էր, որովհետև տկլոր էին:—Մայրդ քեզ համար ի՞նչ է կարել կամ գործել:—Շապիկ, գուլգաւ:—Հայրն էլ արդեօք օգնել է, որ դու հագուստ ունենաս:—Նա է փող վաստակում ու տալիս մայրիկին, որ ինձ համար հագուստ առնի:—Ուրեմն մվեր են հոգս քաշում ձեր հագուստի համար: Ծնողները:—Մայրն ի՞նչպէս է հոգում: Իսկ հմյրն ի՞նչպէս:

Անինիւնն. Տկլոր ձագին մի է հագուստ տալիս: Հագուստն ի՞նչո՞ւ է լաւ բան: Զաւակի հագուստի համար մվեր են հոգս քաշում:

3. Նպ. Ինչպէս են ծնողները հոգում ընակարանի համար:

Արդեօք գալնան ժամանակ իսաղացել էք դաշտելում: Յետոյ էլ կարմիր, ղեղին, կապոյտ, սիպտակ ծաղկներ քաղած փունց կապել:—Երբ յանկարծ երկինքը գուգուացել է ու սև ամպերը ձեր գլխավերեւ հաւաքել, դուք ի՞նչ էք արել:—Վաղել ենք դէպի տուն: Ինչժաւ: Որ անձրեսի տակ չընկնենք:—Տուն որ հասաք, քակում կանգնեցք: Ոչ, սենեակը մտանք: Միթէ անձրեք ձեզ չըթրջեց տան մէջ: Ոչ, տունը ծածկ, տան նիք ունի: Ուրեմն տան մէջ պատսպարուած էիք անձն ընից:—Կարմզ էք ասել թէ էլի երբ էք սենեակի մէջ լինում:—Անձրեսի, ձիւնի, քամու և ցրտի ժամանակ: Այդ լաւ է, որ ձեզանից ամեն մինը օթևան ունի, ինկ

թուշունի ձագերը վատ եղանակին՝ ինչիք տակ կը պատսպարուէին։ Մօք թևերի տակ:—Դիշերը մրտեղ էք լինում: Տանը:—Ո՞րտեղ է ձեր անկողինը: Տան ներսը: Ինչու ոչ բակում:—Այնտեղ կարող է անձրև: Ճիւն գալ, ցուրտ լինել, քամի անել, —Ձեզանից շատերի ծնողները սեպական տուն կունենան. իսկ միւսների ծնողներն ի՞նչ են վճարում բնակարանի համար: Վարձ:—Դրա համար մվ է փող ճարում:—Հայրն ի՞նչպէս է ճարում: Իրա արհեստը բանացնելով:—Իսկ քու հայրը: —Իմ հայրն էլ առուտուր անելով:—Դիւղացի հմյրը: Գիւղում վարձով տան մէջ չեն ապրում, գիւղացի հայրըն ինքն է անտարից գերաններ բերում և շինում: Տեսնում էք, քաղաքացի թէ գիւղացի հայրերն աղսատում են, որ իրանց զաւակները բնակարան ունենան: —Հապա մվ է հոգս քաշում, որ տունը միշտ մաքուր ու սիրուն լինի ու ամեն բան կարգին իրա տեղը:—Դրա համար մայրն ի՞նչ է անում: Վեր է քաղում, սրբում է, դարսում է: Ուրեմն մվքեր են հոգս քաշում զաւակների բնակարանի համար: Ծնողները:—Ինչու:

Ամփոխումն. Բնակարանի մէջ պատսպարում են ցրտից, անձրեկից և այլն: Թոշունն իրա թևերով պատըսպարում է տկուռ ձագերին, որ չըմրսեն: Զաւակների բնակարանի համար հոգում են ծնողները, որովհետև նրանց սիրում են:

4. Նպ. Ինչպէս ծնողները հոգում են զաւակի խաղալիքների համար:

Փոքը երեխէքը բացի ուտել-խմելը ուրիշ ի՞նչ են շատ սիրում: Խաղալը: Մայրերն ի՞նչ են տալիս նրանց խաղալու: Օրօրոցի երեխանց չխչխկան են տալիս:— Իսկ մեծ երեխէքը ի՞նչ են սիրում խաղալ:— Իսկ աղջիկները: Խաղալիս դուք ի՞նչ էք անում: Ուրախանում ենք: Ուրեմն ծնողներն ինչու են ձեզ խաղալիքներ տալիս:— Ծնողներդ քեզ ի՞նչ են տալիս, որ չըքաղեսաւ ի՞նչ են տալիս, որ չըմրսես: Ի՞նչ են տալիս, որ անձ-

քեփց, ցրտից պատսպարուես:— Ծնողներդ այս ամեն բանը ինչու են տալիս քեզ: Որովհետև ինձ սիրում են: Ամենից առաջ ծնողները զաւակին ի՞նչ են տալիս: Սնունդ:— Ցետրի: Հագուստ: Նրանից յետրի: Բնակարան, խաղալիք: Ինչու:— Որովհետև սիրում են զաւակներին:

5. Նպ. Ինչպէս ծնողները խնամում են զաւակին:

Ցիշում էք Սուրէնին. նա մի աշխոյժ տղայ էր: Վազվում էր տանը, գուանը, պարտէզում: Բայց յանկարծնա հիւանդացաւ: Ծնողներն ի՞նչպէս կլինէին: Կը տկրէին:— Ցետրոյ ի՞նչ կանէին:— Ի՞նչ են անում քու ծնողները, երբ հիւանդանում ես: Բժիշկ են կանչում: Չուր են տալիս խմելու, յետոյ կանֆէտ, մրգեր են ընծայում:— Ի՞նչ են անում գիշեր ժամանակ, երբ դու ծանր հիւանդ ես:— Մնում են անքուն մօտս նստած:— Ո՞ւմ են աղօթքով խնդրում, որ դու կրկին առողջանաս: Մինչև անգամ ի՞նչ են վառում: Խստակ մոմ: Մյս ամենը, որ ծնողներն անում են հիւանդ երեխի համար, կոչւում է խնամել:— Զեր ծնողներն ի՞նչ են անում ուրեմն, երբ հիւանդ պարկած էք: Խնամում են:— Ձեզանից մվ պստիկ եղբայր կամ քոյր ունի:— Նրանք ի՞նչ չեն կարողանում անել: Վազել: Ծնողներն ի՞նչ են անում նրանց: Թևի վրայ ման են ածում:— Փոքը մանուկը շոր հագնել չի կարողանում, մվ է նրան հազինում:— Մանուկը չի կարող լուացուել: Մվ է նրա երեսը, ձեռները լուանում:— Երեխէն լալիս ծնողներն ի՞նչ են անում: Նրան գրկում, գուրգուրում են, ի՞նչ է անում մայրը, երբ մանուկը յոգնել, նղեկ է:— Օրօրոցն է դնում, օրօրում— Երբ ճանճերը կծում են երեխի ձեռները, երեսը և չեն թողնում, որ քնի, ի՞նչ է անում մայրը:— Օրօրոցի մօտ նստելով ճանճերը քշում է ու նամիկ ասելով քուն դնում:— Ո՞վ գիտէ թէ

մայրն ի՞նչ խօսքերով է նանիկ ասում: Ահա լսէք, ես
ասեմ.

«Նանիկ արա, նանիկ, նանիկ,
Նանիկ արա, սիրուն մանկիկ,
Նանիկ արա, նանիկ, նանիկ,
Նանիկ արա, սիրուն բալիկ»:
Ահա ուրիշը. «Օրօր օրօր, իմ բալսա,
Երկար ումբը ունենաս,
Օրօր կասեմ քե վրայ.
Անուշ մանկիկս, նանա»:

Ի՞նչ որ ծնողները պատիկ եղբօրդ համար անում
են, նոյնն արել են քեզ համար, երբ փոքր էիր: Ի՞նչ
է կոչում այդ: — Խնամել:

Սմիտիումն. Ծնողները ձեզ ի՞նչ ու ի՞նչ են տա-
լիս: Երբ փոքր էք, նրանք ձեզ ի՞նչ են անում: — Դար-
ձեալ երբ են ձեզ խնամում: Ինչիւ են այդ նեղու-
թիմները քաշում զաւակների համար:

Զեր ծնողներն մեմ են սիրում: — Դուք մեմ պիտի
սիրէք: Ի՞նչպէս ցոյց կըտաք, որ ծնողներին սիրում
էք: Կըկատարենք ամենը, ինչ որ նրանք ասում են: —
Եթէ ուշակալ լինէք, ով կուրախանայ ձեր վրայ: — Եթէ
ալարկոտ և ծոյլ լինէք պատուէրներ կատարելու մէջ
մեմ սիրտը կը վշտացնէք: — Երբ ծնողները առողջ են,
որդու սիրտն ի՞նչպէս կըլինի: Ուրախ: — Իսկ երբ հի-
ւանդանայ հայրը կամ մայրը, որդու սիրտն ի՞նչպէս
կըլինի: Տրտում: Այդ ժամանակ լաւ որդին ի՞նչ կարող
է անել: — Աղօթքով խնդրել Աստծուն, որ ծնողներից
հիւանդութիւնը հեռացնի: Էլի ի՞նչ բաներից: Չարից,
փորձանքից: — Այս, կասենք. «Երկնաւոր հայր, մեզ
փրձութեան մի տանիլ, այլ փրկիր չար բաներից»:

3. Ո Ր Բ

Նպ. Այսօր ծեզ պատմելու իմ մի անտէր
որք տղայի մասին:

1. Կտոր. Տարուայ մէջ Երբ է շատ շոգ լինում:
— Ե՞րբ է դաշտը, մարգագետինը կանաչ խոտով ու ծա-
ղիկներով զարդարւում: Գալրնան: — Հապա որ եղանա-
կին են այդիների խաղողը քաղում, գինի պատրաս-
տում: Աշնան, — Արևը Երբ է ծագում: Ո՞րտեղից: —
Իրիկնադէմին արեն ի՞նչ է լինում: Ո՞րտեղ: — Արևը
Երբ է լոյս մալիս: Ճորեկը: Իսկ գիշերը: Լուսինը: —
Մեր պատմութիւնն այսպէս է սկսում: «Փայլուն ա-
րեն արդէն մայր մտաւ, Լուսինն էլ վաղուց զնաց թագ
կացաւ: Կրկնիր, դռն, դռւ: Խմբով: — Երբ երկնքում ոչ
արե կար և ոչ լուսին, ի՞նչը կըպատեր երկրին: Մու-
թը խաւարը: Այդ ժամանակ աշուն էր. ի՞նչ էք կար-
ծում, ի՞նչը կը փչէր: Քամին: — Տաք քամին: Ոչ,
ցուրտ: — «Գիշերուայ մութը աշխարհս պատեց, Եւ աշ-
նանային ցուրտ քամին փչեց: Կրկնեցէք հետս խմբով:

Սմիտիումն. Փայլուն արեն ի՞նչ եղաւ: Յետոյ՝
լուսինն ի՞նչ եղաւ: — Գիշերուայ մութն ի՞նչ արեց: Աշ-
նանային ցուրտ քամին ի՞նչ արեց: Կրկնեցէք:

2. Կտոր. Մութը երկրի վրայ ընկնելիս մարդիկ
մութ են գնում: Իրանց տները: Դուրսը խաղացող երե-
խէքն մութ են, գնում: Ծնողների մօտ: Մայրն ի՞նչ է
տալիս: Թէյ, ընթրիք: Եւ յետնի: Անկողնի մէջ քնաց-
նում: Քնացնելիս շատ մայրեր ի՞նչ են պատմում: Հէ-
քեաթ: — Ամեն մարդ քաջուց իւր տունը մտաւ, Ամեն
երեխայ մօր գիրկն ընկաւ: — Կրկնեցէք հետս:

Սմիտիումն. Ո՞վքեր գնացին: Մարդիկ: — Յետոյ,
երեխէքը:

3. Կտոր. Խաղացող երեխէքն մութ գնացին: Ծնող-
ներ ունէին այդ երեխէքը թէ ոչ: Իսկ այն երեխան,

որի մասին պատմելու եմ, ի՞նչ էր: Անտէր որբ: Որբն ի՞նչ չունի: Ովքեր. ձեզանից հայր կամ մայր չունեն, թող մատ բարձրացնեն: Այս որբն աւելի թշուառ էր. ոչ հայր ունէր և ոչ մայր: Դու (որբ աշակերտին է ասում ուսուցիչը) եթէ մայր չունես, բայց քոյր ունես: Դու եթէ հայր չունես, բայց եղբայր ունես: Իսկ ինեղն որբը ոչ քոյր ունէր և ոչ եղբայր: Կարծ ի՞նչպէս ասել:—Ոչ մի ազգական չունէր:—Զեզանից ամեն մինը լաւ թէ վատ հագնուած է, իսկ որբը մերկ էր: Զեզանից որբ կոշիկ, որը չուշտ, կամ գոնէ տրեխ ունի ուսներին, իսկ նա բորիկ էր: Դուք այսօր կամ թէյ էք խմել կամ հաց կերել, իսկ որբը բոլորովին բաղցած, անօթի էր: Դուք բնակուելու տեղ ունէք, երեկոյեան կը զնաք, հանգիստ կը քննէք, իսկ նա անտուն, անտեղ շուարել էր դրսումը: Գիշերը մութ էր և ցուրտ, ի՞նչ կանէր խեղճը: Լարով մի տեղ կը փնտրէր, որ պարկէր: Այս, կուչ եկաւ մի տան պատի տակ:

Ամփոփումն. Միայն ինեղն որբը, որ չունէր հայր, մայր, Ոչ մի ազգական, ոչ քոյր, ոչ եղբայր, Ոտքերը բորիկ, տկլոր ու քաղցած, Մի տան պատի տակ մնաց կուչ եկած:

Որբն ի՞նչ չունէր: Ոտքերն ի՞նչպէս էր: Մարմի՞նը: Փո՞րը: Ո՞ւր կուչ եկաւ: Դէմքն ի՞նչպէս կը լինէր: Ի՞նչ կը մտածէր: «Երանի մի մարդ ինձ ներս ընդունի»:

4. Կտոր. Միթէ մարդիկ գուրաը չե՞ն քնում: Ամառը քնում են դռներին, կտրներին: Թող որբն էլ պատի տակ քնէր: Աշնան ժամանակ կարող էր մրսել: Զմրսելու համար ի՞նչ են անում մարդիկ: Տաք շոր են հագնում: Աւելի մը եղանակին: Զմեռը հաստ վերակու, քուրք են գործ ածում: Երբ սենեակը ցուրտ է, ի՞նչ են անում: Կրակ վառելով տաքացնում են: Որբն ի՞նչ չունէր հագին: Դուրսն ի՞նչ էր: Ցուրտ: Ի՞նչ կը պատահէր նրան: Կըսառչիր: Իսկ եթէ երկար անօթի մնար: Սովից կը մեռնէր:

//

Երեկ կամենում էք իմանալ թէ ի՞նչ պատահեց խեղճ որբին:—Այն տունը, որի պատի տակ պարկել էր, բարի մարդու էր պատկանում. վերևից լսեց մանուկի լացն ու խնդիրը: Որբն աղօթում էր Աստծուն: Ի՞նչ խնդրելիս կը լինէր: (Աշակերտների զանազան կարծիքներ): Տանտէրը նայեց որբին ու խճաց: Ի՞նչ կանէր:—Այս, կանչեց իրա մօտ և պահեց: Տարաբաղդ որբի համար ի՞նչ կը լինէր: Բարեբաղդութիւն: Ի՞նչ էր գտել նա: Տէր ու տիրական:

Ամփոփումն. Բարի տանտէրը վերևից նայեց, Մեր թշուառ որբին ներս հրաւիրեց, եւ այսուհետև տարաբաղդ տղան, Ունէր իր համար տէր ու տիրական:—Ո՞վ նայեց վերևից: Որբին ի՞նչ արեց: Այսուհետև նա ի՞նչ ունէր: (Պատմել տալ ամբողջ բովանդակութիւնը: Խմբովին ասել տալ ոտանաւորի ձևով):

Որբն ի՞նչու աշնան կարող էր մրսել: Եղանակը ցուրտ էր և ինքը տկլոր: Ո՞ր եղանակին աւելի շատ կը մրսէր: Զմեռը:—Ի՞նչու սովածահ կը լինէր: Երկար ժամանակ անօթի էր: Ո՞վ օգնեց նրան, որ ոչ մրսի և ոչ սովածահ լինի: Տանտէրը:—Ի՞նչպէս օգնեց թշուառին: Այդ պատճառով ի՞նչ տեսակ մարդ էր տանտէրը: Ո՞վ կասէր տանտիրոջ, որ որբին ներս կանչի:—Նրա սիրտը: Ի՞նչ տեսակ սիրտ ունէր նա: Բարի:—Զեր սիրտն էլ երբեմն ձեղ բան ասեմ է, պատմեցէք:—Ո՞վ էր տանտիրոջ սրտին հրամայել, որ այդպէս լաւ բան անի: Աստուած: Ուրեմն որբին գտնողն ով էր:—Ի՞նչ առած գիտէք այդ մասին:—Որբի պահողն Աստուած է:—Աստծու պահած գառան գայլը չի ուտիլ:

Ի՞նչ տեսակ տղէք էք ուզում դառնալ: Բարի տղէք: Ուրեմն ձեր ձեռով եկած օգնութիւնը ոչոքի չպիտի խնայէք: Լաւ, եթէ տեսնէք մի անմեղ մրջիւն ջրում խեղդում է, ի՞նչ կանէր: Երբ կապած անսունը վիզը մեկնում է ջրի տաշտին և պինչը չի համում, ի՞նչ կանէր: Երբ ձեր՝ ընկերը մատիտը կամ գրիչը

տանը մոռացել է, դասը գրելու բան չունի, ի՞նչպէս կօգնէք:—Երբ տեսնէք մի երեխայ իրանց տան ճանապարհը կորցրած լաց է լինում, ի՞նչ կանէք:—Երբ մի դասընկեր հաց չի բերել դպրոց, տեսնում էք քաղցից թուլացել է, ի՞նչպէս կօգնէք:—Երբ տեսնէք մի պառաւ կնիկ կամ ծեր մարդ ձեռից բան է վէր գցել կունալ չի կարողանում, ի՞նչ կանէք:—Երբ տեսնէք մի կոյր մուրացկան ընկնում է փոսի մէջ, ի՞նչ կանէք: Միշտ ի՞նչ կուզէք անել:—Օգնել, երբ հնար ունենք:

4. ԱՍՏՈՒԱԾ ԱՄԵՆԻ ԻՆՉ ՏԵՍՆՈՒՄ Է

Նպ. Այսօր ծեզ պատմելու եմ՝ թէ ի՞նչպէս միանգամ Սուրէնն ու Գոհարիկը տանը մենակ էին մնացել.

Ո՞ւր գնացած կըլինէին նրանց ծնողները:—Բարեկամը մեռել էր, գնացել էին մխիթարանը խօսելու: Սուրէնն ասեց. «Գոհար, ի՞նչ ենք պարապ նստել, քանի որ հայրիկն ու մայրիկը տանը չեն, արի ուտելու բան գնացրենք ու բերաններս քաղցրացնենք»: Ո՞վ չէր կամենալ, որ պահած բաներին ձեռ տան: Ի՞նչ ասած կըլինէր նրանց մայրը դուրս գնալիս:—Միթէ մայրը բարեկամի տնից կըտեսնէր, եթէ նրա պահարանին ձեռ տային: Եթէ ուրիշ մարդիկ տեսնեն: Մայրիկին իմաց կըտան:—Եթէ ձեր տունը ներքին յարկ է, լուսամուտից նվազ կտեսնի ձեր արածը: Մեր հարեւանները: Ուրեմն եթէ Սուրէնն ու Գոհարիկը մօր պահած մուրաբէն, չուչխելը, խնձորը հանած ուտէին, ով կը տեսնէր: Հարևանը կամ նրա կինը: Գիտէք թէ Գոհարիկն ի՞նչ պատասխանեց: «Եթէ տեսնող չինի, ի՞նչ ուզում ես, հետդ կանեմ»: Գոդարիկն ի՞նչ էր անելու նրա հետ: Ուտելու բան գտնել: Միթէ քաղցած էին: Ոչ, այնպէս:—Մայրը մրտեղ պահած կըլինէր քաղցրելինները: Պահարանում իսկ հաց, պանիր, իւղ

և միւս ուտելեղէնները: Մառանում: Սուրէնն ասեց. «Գոհար, արի հետս գնանք մառան, այնտեղ դրած է կաթան պղինձը, երեսին սերը կանգնած կըլինի, քաշնիք և հացի պատառով ուտենք»: Գոհարն ասեց. «Հէ, այնտեղ հարեւանը կըտեսնի, մտիկ, լուսամուտի դէմը փայտ է կտրատում»: Սուրէնն ասեց, «Երբ այդպէս է, գնանք խոհանոց, պահարանից մեղը հանենք, ուտենք»: Գոհարն ասեց. «ոչ, հարեւանի կինը կըտեսնի, ահա իւրա լուսամուտի առաջ նստած գուլբա է գործում»: Սուրէնը քիչ լուռ մնալուց ետ ասեց. «Լաւ, արի զընանք սարդափը, տանձ, խնձոր ուտենք, այնտեղ բոլորպին մութն է»: Ո՞վ կարող էր տեսնել թէ այնտեղ ի՞նչ են անում:—Բայց Գոհարն ասեց. «ոչ, չեմ կարող գալ, այնտեղ էլ Աստուած կըտեսնի, որ երկնքում նստած մտիկ է անում ամեն կողմ ու մութ տեղն էլ տեսնում է»: Սուրէնը սարսափեց այդ լսելիս. զողողալով ասեց. «Եթէ այդպէս է, Գոհար, աւելի լաւ է, ոչինչ չուտենք»:

Ամփոփումն. Ի՞նչ էր ուզում անել Սուրէնը:—Ո՞ւմ էր ընկերուցնում:—Գոհարն ի՞նչ ասեց դրա դէմ: (Երկու հոգու գուրս կանչել և խօսեցնել Սուրէնի և Գոհարի տեղ):

Եթէ մառան գնային սեր ուտելու, ով կտեսնէր: Դրացին:—Եթէ խոհանոց գնային մեղը ուտելու: Դրացուհին:—Եթէ սարդափը գնային, ով կըտեսնէր նրանց արածը:—Ոչ մի մարդ: Ինչո՞ւ չգնացին: Աստուած կըտեսնէր նրանց գողութիւնը: Թո՞ղ գնային մարափից ձու գողանային: Այնտեղ էլ կըտեսնէր Աստուած: Ուրեմն ուր գնային, որ Աստծու աչքը չտեսնէր: Ոչ մի տեղ: Աստուած տեսնում է ամեն ի՞նչ:

Երեխաններն ի՞նչ պիտի անեն, երբ ծնողները տանը չեն: Անկիւնները չքրքրեն բան ման ուտելու համար: Մայրիկից ծածուկ բան բոնելը լաւ չէ, մեղք է: Ո՞վ է տեսնում այդ:—Երբ երեխէքը ծնողներից ծա-

ծուկ հայհոյում են կամ կուռում են, ով է լսում կամ տեսնում այդ:—Հայհոյելը լաւ բան չէ, յանցանք է: Երբ երեխէրը ծնողների աչքից հեռու սուտ խօսելով մէկին խարում են, ով է լսում նրանց:—Սուտ ասելը յանցանք է: Երբ մէկը հարևանի պարտէզից ծածուկ պտուղ է քաղում, ինչ է նրա արածը: Գողութիւն: Գողութիւնն ինչ է:—Ուրեմն ինչից պիտի հեռու մնալ: Մեղք, յանցանք գործելուց:

5. ՈՐԴՈՒԻ ԶՂՋՈՒՄԸ

Նպ. Ձեզ պատմելու եմ մի տղայի մասին, որ իրան հօթը վշտացրեց.

1. Կտոր. Նրա հայրը գիւղացի էր և տան մօտ այգի ունէր: Այնտեղ մի բանի նոր տեսակի խնձորենիք էր տնկել: Մատաղ ծառերը այս տարի առաջին անգամ պտուղ էին բռնել:—Ո՞վ էր ուրախ այդ բանի վրայ: Հայրը: Ամեն օր այգին էր գնում: Ինչո՞ւ համար: Որ տեսնի խնձորները երբ են հասնում:—Ի՞նչ չգիտէր խնձորների մասին: Թէ ինչ համ ունեն: Գիւղացին Արշակ անունով տղայ ունէր: Կարելի է, նա նոյնպէս սիրում էր խնձորներին նայել:—Հա, ինչ էր ուզում պատմել այդ տղայի մասին:—Թէ նա ինչպէս հօթը վշտացրեց: Այո, նա խնձորները խակ խակ քաղեց, չփողեց որ հասնեն:—Ինչո՞ւ այսպէս արեց:—Զգիտէք, ես ասեմ. Արշակը մի խաղընկեր ունէր. հարևանի տղին էր. սա մի օր Արշակին ասեց. «Մեղ տեսնող մարդ չկայ, արի մտնենք ձեր այգին և խնձորները փոքր ծառերից պոկտենք, ուտենք»:—Հարևանի որդին ինչ տեսակ տղայ էր: Փուչ, անպիտան:—Ներս մտան երկուով և պոկտեցին:—Ո՞վ իմացաւ, որ խնձորները չըկան ծառերի վրայ: Արշակի հայրը:—Ճիշտ ասիր, մի քանի ըոպէ չանցած եկաւ այգին ու տեսաւ ծառերը տկլորած: Ի՞նչպէս կըդառնար:—Շատ կըտխրէր:—Ի՞նչ

կասէր. «ախ, անպիտան, փուչ պտուղները սիրտս տակն ու վրայ արին»:

Ամփոփումն. Ո՞ւմ որդին էր Արշակը: Ո՞վ կամեցաւ նրան գայթակղեցնել: Ի՞նչ պոկտեցին: Ո՞վ տխրեց դրա վրայ: Ի՞նչ պտուղ էր հարևանի տղին:

2. Կտոր. Արշակը հաստ ծառի տակ շուաքում նստած էր, լսեց հօր խօսքերը: Ի՞նչ կըլինէր նրա սիրտը:—Ահ կընկնէր: Ի՞նչո՞ւ:—Վախելուց չէր համարձակւում իրիկունը տուն գնալ, թէպէտ շատ քաղցած էր: Հօ չէր կարող ողջ գիշերը դուրս մնալ:—Վերջապէս տուն մտաւ, երբ հայրը դռան մօտ կանգնած էր: Ի՞նչ պէս կընայէր Արշակի վրայ, (սիրով, քաղցը): Արդեօք հայրը գիտէր Արշակի արարքը: Ոչ: Դրա համար սիրով նայեց վէճն: Բայց Արշակը աչքերը գետնին գցեց: Ի՞նչո՞ւ չէր կարում հօր վրայ մտիկ անել: Կարծում էր, որ հայրն աչքերից կիմանայ նրա արարմունքը:—Ծնթրիքի ժամանակ հայրը երիխանց բաժանեց մի մի ճութ խաղող, Արշակին նոյնպէս: Երեխերն ուրախ դէս դէն թռչուտալով մշրում էին խաղողի հատիկները: Միթէ Արշակն էլ զուարձանում էր նրանց հետ: Ոչ: Նա շարունակ այն ըոպէն էր մտաքերում, թէ ինչպէս հայրը տրտմեց ծառերը պլոկած տեսնելիս: Հօր տխրութեան պատճառն ով էր: Հօր որ խօսքերի վրայ էր նա մտածում: «Անպիտան, փուչ պտուղները սիրտս տակն ու վրայ արին»: Արշակն ի՞նչ էր դուրս եկել: Անպիտան, փուչ պտուղ, — Ուրեմն ի՞նչ տեսակ մարդ էր հայրը, որ Արշակին խաղող տուեց: Բարեսիրտ:—Որովհետեւ բարի հօրն էր վշտացրել Արշակը, դրա համար նրա սիրտն այնպէս կսկծում էր, որ չըկարաց արտասուքը պահել լաց եղաւ:

Մենք գիտենք Արշակի լացի պատճառը, հայրը անտեղեակ էր, ուստի հարցրեց. «աչքի լոյս, ինչո՞ւ ես լաց լինում»: Արշակը խօսեց. «հայրիկ, աղաչում եմ, ներիր ինձ»: Հօր մտքով ամենեին չէր անցկենում, թէ

Արշակը խնձորները պոկած լինի, ուստի հարցը բց, «զաւակս, ինչո՞ւ պիտի քեզ ներեմ, ի՞նչ ես արել ո՞ր»: Ի՞նչ էք կարծում, Արշակը մեղքն ուղիղ կըխոստովանի: — Նա պատասխանեց, «հարևանի տղին ասեց, արի մտնենք ձեր այգին, փոքր ժառերի խնձորները բաղենք»: «Հա, դուք էլ ի հարկէ գնացիք խակ խակ քաղոտեցիք, խօսեց հայրն առանց բարկանալու: Արշակն էլ չկարաց մի խօսք հանել բերանից, սկսեց աղի աղի լաց լինել և արտասուբը կարկտի պէս աչքերից թափել — Երկի յետոյ հայրը կը պատժէր: — Ի՞նչո՞ւ ոչ: Ո՞րովհետեւ տեսնում էր, ո՞ր Արշակն արածի վրայ զդում է: Ճիշտ ես ասում, հայրն Արշակի ձեռից բռնեց, կրծքին սեղմեց և ասեց. «Ներում եմ քեզ, զաւակս, տայ Աստուած, որ միւս անգամ էլ այդպէս բան չըբռնես»:

Ամփոփումն. Արշակն ինչպէս վշտացրեց հօրը: Ո՞վ եղաւ պատճառը: Արշակն իրա վատ արարքի վրայ ի՞նչ արեց: Հայրն ի՞նչպէս վարուեց:

Արշակն ի՞նչ պիտի անէր, երբ հարևանի տղին ուզում էր նրան գայթակղեցնել: Չըպիտի ընկերանար: Ո՞վ էր ուզում Գոհարիկին գայթակղեցնել: Սուրէնը: Ի՞նչից է երեւում, որ հայրը նրան սիրում էր: Քաղցը նայեց տուն մտնելիս, ընթրիքին խաղող տուեց, ձեռից բռնեց, կրծքին սեղմեց, նրան ներեց: — Ի՞նչ արեց Արշակը, երբ տեսաւ՝ հայրն այդքան բարի է: Աղիաղի լաց եղաւ: Միւս անգամ ի՞նչից պիտի զգուշանար: Հօրը վշտացնելուց:

Քու ծնողները նոյնպէս բարի են դէպի քեզ: Ի՞նչից ես իմանում այդ: Նրանք ինձ տալիս են ուրախիք, խմելիք, հագնելիք, բնակարան, խաղալիք, և երբ հիւանդանում եմ, ինձ ինսամում են: — Դու ի՞նչ չըպիտի անես նրանց: Չըշտացնեմ նրանց, Ո՞վ է ուրախանում, երբ դուք լաւ էք: Ծնողները: Ո՞ւմ պիտի ինզըրս ազօթքով, որ քեզ գայթակղութիւնից հեռու պահի:

Աստծուն: Այո, ասա. «Երկնաւոր հայր, սուրբ լինի քու անունը, մեղ փորձութեան մի տանիլ, այլ փրկիր չար բաներից»: Խմբովին ասէք:

6. ՃԱՄԲՈՐԴԻ ՊԱՏԱՆԻՆ ԵՒ ԱՐՏՈՒՏԸԼ

Նպ. Ձեզ պիտի պատմեմ, թէ ինչո՞ւ համար էին երգում պատանին եւ արտուտը.

Ի՞նչ տեսակ մարդուն ասում ենք ճամբորդ: Զեռին ի՞նչ է ունենում: Մէջքին: Խուրջին, պարկ: Նրանց մէջ ի՞նչ է դրած լինում: Հասակաւոր ճամբորդները շատ անգամ բերանին ի՞նչ են ունենում: Ծխամորդ: Մեր ճամբորդն ի՞նչ էր: Պատանի: — Արտուտ տեսած կմք: Ո՞րտեղ: Թուչելիս ի՞նչ է անում: Ծլվլան ձայնով ուրախ երգում է: Ո՞վ կըտեսնէր նրան երգելիս: Ճամբորդը: Ո՞րտեղ: Լուսաբացին արտերի կշտով անցնելիս: Այն, դուք եկաւ նրան թաշունի զիլ ձայնը, կանգնեց նայեց արտուտին և հարցը բց: «ԱՌտուտ, ինչո՞ւ ես այդպէս ուրախ երգում»:

Ապա դուք ասեցէք, ինչո՞ւ էր արտուտն ուրախ երգում: Որովհետև թուչելու շնորք ունի: Ե՞րբ չի կարող թուչել ու երգել: Երբ շունչ չունի: Ո՞վ է նրան շունչ տուել: Աստուած: Ի՞նչ կարող է ան ել արտուտն իրա թեերով: Իրա կտուցնվ, իրա ոտներնվ, իրա աչքերնվ, իրա ականջներնվ: Այդ պատճառով նա ի՞նչպէս է: Ուրախ է և երգում է:

Արտուտն ի՞նչ պիտի ունենայ, որ ապրի: Կեր: Ի՞նչ է ուտում: Հատիկներ, ճիճուներ: Ո՞րտեղ է զլաւնում հատիկներ: Դաշտում: Ո՞վ է բացնում այնտեղ: Աստուած: Ճիճունին հիմ է ստեղծել: Աստուած: Ուրեմն միվ է հոգս քաշել արտուտի համար:

Երբ մայրդ քեզ ինձոր կամ ուրիշ բան է տալիս, ի՞նչ ես անում: — Ասում եմ՝ շնորհակալ եմ: Երբ միշտ այդպէս ես վարւում, մայրդ ի՞նչ է լինում: Ուրախա-

խտնում է: —Արտուրին Աստուած ի՞նչ է տուել: Շունչ, սնունդ: Արդ պատճառով նա էլ գոհութիւն է յայտնում: Ի՞նչ ձեզվ: Բարձրանում է օդի մէջ մինչև ամպերը և ծլվացնում է: Դրանով ի՞նչ է ասում: Ասում է: «Ասեղծող Աստուած, շնորհակալ եմ քեզանից»:

Պատանի ճամբորդը չէր իմանում թէ արտուածն ի՞նչու է ուրախ երգում: Ի՞նչ կըպատասխանէր նրան արտուածը: Յետոյ ճամբորդին հարցրեց: «Արդիօք դու էլ շնորհակալութիւն անում ես Աստծուն»: Ի՞նչ էր կարծում, ի՞նչ պատասխանած կլինի պատանին: «Այո, ծլվան արտուած, ես էլ եմ անում»: Ճամբորդն ի՞նչ ունէր Աստծուց ստացած: Կեանք ու մնունդ: —Այդ ըովէին նոտ առողջ էր. ով էր նրան առողջ պահում: Աստուած: Գիշերն անվտանգ քնել էր և առաւօտը զուարթվեր կացել. ով էր նրան պահպանել: Աստուած: Արտուածն ի՞նչպէս շնորհակալութիւն արեց Աստծուն: Ծլվան երգով: Պատանին Աստծուց ստացած բարիքները յիշելով նոյնպէս շնորհակալութիւն արեց, զիւ ձայնով մի երգ երգելով ճամբէն շաբունակեց: Այդ երգն սկսում էր այսպէս. «Առաւօտ լուսոյ, Արեգակն արդար, Առիս լոյս ծագիա...»:

Ամփոփումն. Առաւօտն ով էր գնում արտերի կշտով: Ի՞նչ տեսաւ: Արտուածն ի՞նչ էր անում: Ի՞նչ հարցրեց պատանի ճամբորդը: Ի՞նչ պատասխանեց թռչունը: Պատանին նոյնպէս ի՞նչ արեց:

Ճամբորդն ի՞նչու էր երգում: Կամենում էր շնորհակալ լինել Աստծուն: Ի՞նչու համար: Ստացած կեանքի համար: —Ուրեմն ով է ստեղծել նրան: Աստուած: Ե՞րբ է ստեղծուել ճամբորդը: Երբ որ ծնուել է մօրից: Դու ի՞նչպէս ես եղել, ես էլ ստեղծուել հմ: —Այո, դու առաջ եղել ես մայրիկիդ կրծքի տակ, նա քեզ կերակրել է իրա արիւնով և յետոյ երբ Աստուած հրամայել է, քեզ լոյս աշխարհ է բերել: —Միթէ քու հայրը միշտ է եղել: —Մի ժամանակ ի՞նչ է եղել:

Պատլիկ տղայ, ոչ ման գալ է իմացել, ոչ խօսել: —Նրանից առաջ: —Իրա մայրիկի կրծքի տակ: —Մայրիկ, բոլոր մարդիկը նոյնպէս մի ժամանակ ծնուած չեն եղել: Նրանց ամենին ով է ստեղծել: —Աստուած: —Ուրիշ խօսքով ի՞նչպէս կասեն: Երկնաւոր հայրը: —Ուրեմն Աստուած ի՞նչեր է ստեղծել: Մարդիկ, արտուած, հատիկ, ճիճու, խոտ, ծաղիկ: —Հապա զաշտելը: Դաշտերը նոյնպէս: —Հապա այն կապոյտ երկնքը, փայլուն արելը, լուսինը, աստղերը: —Ուրեմն որ բաներն է ստեղծել Աստուած: Բոլոր բաները, ինչ որ տեսնում ենք:

Ամփոփումն. Աստուած ստեղծող է ամեն տեսակ բաների:

Արտուածն ուրախ էր, որովհետև Աստուած նրան կեանք ով տուել: —Արդիօք դու էլ ուրախ ես, որ Աստուած քեզ ստեղծել է: —Ի՞նչու համար: —Բայց ի՞նչ կըլինէր դրութիւնդ, եթէ աչքեր չունենայիր: —Սիրելի հայրիկին, մայրիկին չէիր կարող տեսնել: Էլ ի՞նչէր չէիր տեսնիլ և ուրախանալ: —Փառք Աստծու, որ աշքեր ունես: —Բայց եթէ ականջներ չունենայիր, ի՞նչ չէիր կարող լսել: —Խօսելը, կանչելը, երգելը, ծիծաղելը: —Փառք Աստծու, որ ականջներ ունես: —Իսկ եթէ բերան չունենալիիր: —Զէիր կարող ցաւդ, խնդիրդ մայրիկին ասել: —Փառք Աստծու որ ի՞նչ ունես: —Բերան: —Բայց եթէ ձեռներ չունենայիր, ի՞նչպէս շոր կըհապնէիր, կիրակուր կուտէիր, կըխաղայիր կամ կըգրէիր: —Կամ եթէ ոտներ չունենայիր, ի՞նչպէս կըվազգէիր կամ դպրոց կըգայիր: —Փառք Աստծու, որ ի՞նչ ու ի՞նչ ունես: —Զեռներ, ոտներ: Ի՞նչ տեսակ բաներ են աչքերը, ականջները, բերանը, ձեռները, ոտները: Շատ լաւ և հարկաւոր բաներ են: Կարձ կարելի է ասել՝ բարիքները: Ո՞վ է ընծայել քեզ այդ բարիքները: Աստուած:

Իսկ ցորենն ու բրինձը, ծառն ու պտուղը, կոմը թու կաը ի՞նչ բաներ են: Բարիքներ: —Ո՞վ է տալիս

մեզ: Աստուած:—Ուրեմն բոլոր բարիքների տուողն հվէ:—Աստուած:

Ամփոփումն. Ի՞նչ բարիքների համար է, որ մենք Աստծուն փառք ենք տալիս:—Ուրիշ ի՞նչ բարիքներ է ստեղծել մեր ապրուստի համար:

Արտուան ի՞նչպէս շնորհակալութիւն արեց:—Երգով: Այդ երգը նրա կտուցից էր գալիս, թէ սրտից:—Ճամբորդն ի՞նչպէս շնորհակալութիւն արեց: Երգելով «Առաւօտ լուսոյ»:—Հապա ձեր սրտերը չեն ուզում շնորհակալութիւն անել Աստծուն:—Ուզում են: Ի՞նչով: Երգով և աղօթքով: Խսէք, ահա մի երգ.

Հայր մեր երկնաւոր, հայր ամեն մարդի,
Դու ինձ ամեն օր տաս հազար բարի.

—Կեանք, լոյս, կերակուր, հայր ու քաղցրիկ մայր,
Մեծ ու փոքրիկ քոյր, անուշիկ եղբայր:
Կրկնէք խմբովին, մէկ էլ կասիմ:

7. ԱԶՆԻԻ ՍԻՐԾ

Նպ. Ո՞վ է ամենալաւ տղէն.

1. Կտոր. Այն տղէն կամ աղջիկը, որ ամենից առաջ լսում է իրա խղճին, նա ազնիւ սիրտ ունի:—Այն ձայնը, որ մեր ներալ կրծքի տակ լսում ենք, կոչւում է խիղճ:—Բաղդաւոր է այն տղէն, որ միշտ հնազանդում է խղճին և նրա հետ միաբան է:— Լաւ որդի լինելու համար մեմ ձայնին պիտի լսել: Խղճի:—Ուրեմն լաւ որդին ի՞նչ պիտի լինի: Ազնիւ տղայ:—Լաւ եղբայր լինելու համար:—Ազնիւ տղայ:— Իսկ լաւ աշակերտ ու լաւ ընկեր լինմլու համար:—Դարձեալ ազնիւ տղայ:— Իսկ եթէ մէկն ուզում է ջանասէր երկրագործ, պատուական մարդ, ընտիր ուսուցիչ լինել, նա փոքր ժամանակ ի՞նչ պիտի լինէր:—Ազնիւ տղայ:

Ամփոփումն. Ո՞ւմ ձայնին պիտի լսել:— Ի՞նչ բան է խիղճը:— Լաւ որդի, լաւ եղբայր և այն լինելու հա-

համար ի՞նչ պիտի լինել:—Տղայի համար մըն է ամենալաւ յատկութիւնը:

2. Կտոր. Լաւ որդին իրա ծնողներին ի՞նչ պիտի անի: Սիրի:—Որդին ինչով է պարտական ծնողներին: Կեանքով:— Ի՞նչ կայ աշխարհիս վրայ աւելի թանկ քան թէ կեանքը:— Ծնողներն ուրիշ ի՞նչ բաներով են պարտաւորեցնում զաւակներին:— Ի՞նչի՞ ձայնն է ասում զաւակին, որ ծնողին սիրի:— Արդեօք կարժղ է մէկն ուրիշների համար լաւ լինել, երբ իրա ծնողների համար լաւ չէ:— Ծնողներին բացի սիրելը, ի՞նչ պիտի անել իրեկ տան գլխաւորների:— Յարգել:— Սակայն ի՞նչ կասէք այն տղին, որ ամեն բոպէ ընկնում է հօր կամ մօր վզով համբուրում, բայց իրան անկարդ ու անքաղաքավարի է պահում նրանց առաջ:— Օրինակ՝ երբ ծնողները խրատում են, նա ծիծաղում է և նրանց ծաղրի առարկայ շինում: Ծնողների հետ վարում է ծիծաղում է իրեկ հասարակ ընկերի հետ:— Ի՞նչն է ի չարը գործ դնում: Ծնողների բարութիւնը:— Հին ժամանակ երեխանց հետ շատ խիստ էին վարում, չէին թողում իրանց հետ ճաշի նստել:— Նրանք պիտի ծնողների առաջ ոտի կանգնած, գլխակախ մնային: Տարուայ մէջ միայն տօն օրերին էին համբուրում իրանց զաւակներին: Այժմ զուք բաղդաւոր էք. ծնողների հետ էք միշտ ճաշում, քաղցր զրոյց անում, խաղում, ծիծաղում: Եթէ լաւ տղէք էք, ձեր ծնողներին պիտի յարգեք, մեծարէք, որ ցոյց տաք թէ գնահատում էք նըրանց երախտիքը: Միայն վատսիրտ տղէքն են, որ չեն կարողանում սիրել ու յարգել իրանց ծնողներին:

Ամփոփումն. Ո՞ւմ պիտի ամենից շատ սիրէք:— Ի՞նչով էք պարտական նրանց:— Խղճի ձայնն ի՞նչ է ասում:— Իրեկ տան գլխաւորների ծնողներին ի՞նչ պիտի անել:— Անկարգ տղէն ի՞նչպէս է վարում ծնողների հետ:— Հին ժամանակներն ի՞նչպէս էին վարում զաւակների հետ:— Ի՞նչով էք բաղդաւոր այսօր:

3. Կտօր. Ծնողներին սիրովը, յարգողը, նրանց հնազանդ կըլինի՞ թէ ոչ:—Զըհազանդել ի՞նչ է նշանակում:—Ի՞նչ կասէք այն ընկերին, որ միշտ լեզուով ասում է. քեզ սիրում եմ, բայց գործով հակառակն է անում:—Երբ որդին ծնողների պատուէրը կատարում է, նրանց ի՞նչ է անում: Ուրախացնում է:—Երբ արգելած բանն է անում: Վշտացնում է:—Հնազանդուելու համար շատ անգամ հարկաւոր է ենք չուզած բանն անել կամ մեզ զրկել որևէ դուրեկան բանից: Օրինակ ծնողները պահանջում են աշխատել երբ մենք ցանկանում ենք խաղալ:—Նրանք պահանջում են առաւտուր վաղ վերկենալ այն ի՞նչ մենք ուզում ենք աւելի երկար քանի:—Հնազանդութիւնը տեսնում էք, որ միշտ դուրեկան չէ, բայց մենք կատարում ենք: Ի՞նչ ո՞ւ:—Ուրովհետև պահանջողները մեզ սիրով ծնողներն են:—Արդեօք նրանք ձեր սիրու համար չուզած բաներ արել են թէ ոչ:—Այո, մանուկ ժամանակ անթիւ անգամ գիշերը լաց ենք եղել, նրանք իրանց քաղցր քունը կտրելով մեզ ծիծ են տուել, մեր հիւանդ միջոցին անքուն մնացել են նստած մեր կողքին, մեր պատճառով զրկուել են շատ զուարձութիւններից:—Ուրեմն նրանք իրաւունք ունեն ձեզանից հնազանդութիւն պահանջել: Այո:—Բայց երբեմն պատահում է, որ ուզում էք անհնազանդութիւն ցոյց տալ: Եթէ այդ վայրկեանին կանգ առնեք ու ասէք. «այս նեղութիւնը մայրիկի ու հայրիկի համար ենք քաշում, հաւատացած եմ, որ անհնազանդութիւնը կըթողնէք:—Կըլինի՞ ձեր մէջ այնպիսի տղայ, որ տեսնի իրա անհնազանդութեան պատճառով մայրը տփրել, լաց է լինում, ըլֆաթաթուի նրա վզով, ներողութիւն խնդրելով սիրալ չուրախացնի:—Եթէ այդպէս չանի, նշանակում է, նա մօր բարութիւնը չարութիւնով է հատուցանում: Անհնազանդ որդին մի ապերախտ արարած է: Բայց գիտէք, ի՞նչ վատքան է ապերախտութիւնը: Ապերախտ լինում են այն

տղէքը, որոնք սիրու չունեն:—Սիրու չունեցողը ի՞նչ չի ունենալ:—Խիղճ:—Խսկ խիղճ չունեցողը ի՞նչ չի կարող լինել: Ազնիւ տղայ, Բայց մենք ուզում էինք իմանալը թէ ով է ամենալաւ տղէն:—Ով որ ազնիւ սիրու ունի:—Ով որ լսում է իրա խղճի ձախին:

Ամփոփումն. Ի՞նչպիսի որդին հնազանդ կըլինի ծնողներին:—Որդին երբ է ուրախացնում և երբ վըշտացնում ծնողներին:—Արդեօք պէտաք է հնազանդուել երբ պահանջում են մեզանից կամքի հակառակ բան:—Արդեօք երբ և իցէ ծնողներն էլ մեր սիրու համար կատարել են կամքի հակառակ բան:—Անհնազանդ որդին ի՞նչպիսի արարած է:—Ապերախտն ի՞նչ չունի:—Ամենալաւ տղէն ով է:—Ո՞վ է ազնիւ սրտի տէրը:

8. Յիսորիսի ԾՆՈՒԻՆԴԻ (Ղուկ. բ. 1—20)

Նպ. Ժնունդի երեկոյին ինչո՞ւ ենք ուրախութիւն անում:

Ծնունդի տօնն ամենին էլ դուր է գալիս:—Կասեածեր աչքերն էլ փայլեցին այդ խօսքը լսելիս:—Ի՞նչ տօն է գա:—Ի՞նչ ու էք ուրախանում այդ երեկոյին:—Ո՞վ կարող է ասել, թէ Ծնունդի տօնին գիւղերում ի՞նչ են անում:—Քաղաքում ի՞նչպէս են զարդարում տօնածառը և սեղանի վրայ ինչչը են դարսում:—Ո՞րտեղից է գալիս մանուկ Քրիստոսը:—Ի՞նչ էք լսել ձեր ծնողներից նրա մասին:—Ամեն տարի մշտական ո՞ր օրն է գալիս նա:—Շատ տարի առաջ այդ օրն է ծնուել մանուկ Քրիստոսը:—Ուրեմն յունվարի 5-ը ի՞նչ օր է մանուկ Քրիստոսի համար: Ծնունդի օր: Քմանի տարի է անցել այդ մանուկի ծնուելուց դէսը:—Ի՞նչ ու այդքան տարուց եան էլ յիշում ենք այդ մանուկի ծնունդը:—Նա հօ միշտ մանուկ չէր մնալ:—Վերջը նրանից ի՞նչ է դուրս եկել:—Մի բարեպաշտ և ազնիւ մարդ. նա շատ սիրելիս է եղել մարդկանց և ասելիս, որ նրանք իրար

անկեղծ սիրեն և իրար հետ քաղցր լինեն, ինչպէս քաղցր են լինում քոյր ու եղբայրը:—Ի՞նչ հիանալի բան կըլինէր, եթէ մարդիկ աշխարհի վրայ եղբօր ու քրոջ պէս իրար սիրէին:

Տեսնենք, մանուկ Քրիստոսն ինչպէս երեաց աշխարհի վրայ:—Ծնունդի տօնին մեզ մօտ դուրսն ինչպէս է լինում: Ցուրտ, ձիւն:—Բայց այն երկրում, ուր մանուկ Քրիստոսը ծնուեց, եղանակն այնպէս տաք է, որ ամենեին ձմեռ չէ լինում, ոչ ձիւն կայ, ոչ սառուց:—Այդ աշխարհն այստեղից բաւական հեռու է:—Մանուկ Քրիստոսի մօր անունն էր Մարիամ, և հօր անունը Ցովսէփ. սա ատաղձագործ մարդ էր:—Ուրիշն ինչ էր շինում:—Մի անգամ Ցովսէփն ու Մարիամը հեռու տեղ պիտի գնային. ճանապարհ ընկան և հասան մըթնով մի փոքր քաղաք, որ կոչում էր Բեթղեհէմ:—Գիշերն այնտեղ պիտի քնէին:—Ուր գնացած կըլինէին: Հիւրանոց:—Բայց այդ աշխարհում դեռ հիւրանոցներ պահելու սովորութիւն չըկար:—Ուրիշն ճամբարդներն որտեղ կանցկացնէին գիշերը:—Մեր աշխարհում եթէ գիւղ կամ քաղաք են մտնում, բարեկամի, աղգականի տանն են վէր գալիս: Նրանք աղգական չունէին Բեթղեհէմում: Այդ օրը բազմաթիւ օտարականներ էին ժողովուել, ամենն էլ գիշերը մնալու էին. քաղաքացոց տները առաջուց բռնուած էին հիւրերով:—Ի՞նչ կանէին աղքատ ու յոգնած ճամբորդները: Ուրիշ ճար չէր մնում, եթէ ոչ գնալ ոչխարի գրաբախում պատսպարուել: Այն տաք երկրում գիշերը ոչխարները մեծ մասով դուրսն էին լինում:—Փարախում ի հարկէ անկողին չէր լինիլ. այլ միայն այն, ինչ որ ոչխարին պէտք է: Օրինակ ինչ:—Ծզնոտ, որի վրայ անասունները պարկում էին և մսուրներ, որոնց միջից կերակրում էին:—Այդ գիշեր Տէր Աստուածը Մարիամին ուրախացրեց, ընծայեց նրան մանուկ Քրիստոս: Արդեօք ծնողները կարմղ էին մանուկին փա-

փուկ անկողնում պարկեցնել, կակուղ բարձ գլխի տակ դնել:—Ի՞նչն ոչ:—Փարախում ինչ կար միայն:—Ուրիշն ծնողներն ինչ արին: Նրանք ճարահատած մանուկին փաթաթեցին աղքատ բարուրի մէջ և դրին մսուրներից մէկի մէջ:

Ապա, պատոմեցէք ասածս մինչև այստեղ:—Լսեցէք, իս կամենում իմ ձեզ նորից պատմել. ոմանուկ Քրիստոսի ծնողներն ապրում էին մի հեռու աշխարհում, ուր տղջ տարին տաք եղանակ է: Նրա հօր անունն էր Յովսէփ. նա հիւսն էր և տներ էր շինում: Մօր անունն էր Մարիամ: Միանգամ մանուկ Քրիստոսի ծնողները՝ Երկար ճանապարհ գնացին, և մթնով հասան Բեթղէհէմ փոքր քաղաքը, ուր բազմաթիւ օտարականներ էին ժողովուել: Որովհետև այստեղ քնիլու տեղ չըգտան, անճարացած գնացին մի ոչխարի փարախ, որ գիշերն անցկացնեն: Գիշերուայ կիսին Աստուած նրանց պարգևեց անդրանիկ որդին: Նրան փաթաթեցին բարուրով և զրին մսուրի մէջ»:

Այժմ տեսնենք, նրանից ետ ինչ պատահեց մանուկին: Արդեօք ծնողներն ուրախացած կըլինեն թէ ոչ:—Ուրախ ժամին ինչ կանէին:—Դուք ինչ էք անում, երբ ծնողները ձեզ բան են ընծայում:—Մանուկ Քրիստոսի ծնողներն մում պիտի գոհութիւն մատուցանէին:—Բայց նրանք անշուշտ ուրիշ բան էլ արած կըլինեն:—Ի՞նչ էք անում դուք, երբ ստացած լնծայի վրայ չափազանց ուրախանում էք: Լաց ենք լինում:—Ի՞նչ են անում մարդիկ, երբ Աստուած նրանց մանուկ է ընծայում:—Ում են տեղեկութիւն տալիս այդ մասին:—Արդեօք Ցովսէփն ու Մարիամը իրանց ուրախութեան, մասին ուրիշներին տեղեկութիւն տումն կըլինեն:—Ի՞նչն է չէին կարող այդ անել:—Նրանք մինակ էին ու զբաղուած մանուկով, չէին կարող նրանից հեռանալ, ծանօթ էլ չունէին օտար տեղը:—Ողորմած Աստուածն ինքը կամեցաւ, որ մանուկ Քրիստոսի

ծնունդը մարդիկ իմասնան: Ինչու համար: — Ո՞ւմ միշտցով կարող էր այդ բարի լուրջ — աւետիքը իմաց տալ: Քաղաքի բնակիչները արդէն քնած էին. այդ պատճառով Աստուած իրա հրեշտակին ուղարկեց հովիւների մօտ, որոնք գիշերը դաշտում խաշներին հըսկում էին: — Երբ հրեշտակը երևց, նրանց չորս բոլորը միանգամից լուսաւորուեց: Դրա վրայ հովիւները սարսափեցին ու վախեցան: — Ինչու վախեցան նրանք: Ի՞նչպէս կը հանգստացնէր հրեշտակը: Ի՞նչու նրանք չըպիտի վախենային: Ընդհակառակ ի՞նչ պիտի անէին: — Ինչու պիտի ուրախանային: — Ժամանակով ի՞նչ էր դուրս գալու այդ մանուկից: — Մարդիկ ի՞նչ պիտի ուսանէին այդ մարդուց: — Ի՞նչպէս պիտի լինէին իրար հետ: Ոչ թէ կուռել, այլ խաղաղ ապրել: Ի՞նչ կասի Տէր Աստուածը այդպիսի մարդկանց մասին: — Նրանք ինձ հաճելի են: — Ի՞նչ փափագ կըծագէր հովիւների մէջ: — Արդեօք նրանք կըգտնէն մանուկին: — Հրեշտակն ի՞նչ կասի նրանց: — Երբ հրեշտակը մի առ մի պատմեց ու խօսքը վերջացրեց. ահա երկնքից իջան բազմաթիւ հրեշտակներ, որոնք դոփարանում էին Աստծուն և ասում. «Փառք լինի Աստծուն երկնքում, խաղաղութիւն երկրի վրայ այն մարդկանց միջոցով, որոնք Աստծուն համելի են»:

Ամփոփումն. Այդ գիշեր հովիւները դաշտում պահպանում էին իրանց խաշները: Յանկարծ նրանց շուրջը բոլորովին լուսաւորուեց. մի հրեշտակ եկաւ գէպի նրանց: Նրանք շատ վախեցան: Հրեշտակն ասեց. «միք վախենալ, ես ձեզ մեծ աւետիք եմ տալիս, որովհետեւ այսօր ծնուեց մանուկ Քրիստոսը, որ ժամանակով մարդկանց այն տեղը պիտի հասցնի, որ նըրանք իրար հետ եղբօր ու քրոջ պէս սիրով ապրեն: Այդ մանուկին դուք կըգտնէք ձեր փարախում: Նա բարուրով փաթաթած է և ձեր ոչխարի մսուրի մէջ դրած»: Եւ յանկարծ այդ հրեշտակի մօտ եկան բազ-

մաթիւ ուրիշ հրեշտակներ, որ երբելով ասում էին. «Փառք լինի Աստծուն երկնքում և այն»:

Ի՞նչ կանէին հովիւները: — Ո՞ւր կըգնային: — Ո՞ւմ գտան այնտեղ: — Ի՞նչ վիճակում տեսան մանուկ Քրիստոսին: — Ի՞նչ մտածած կըլինեն Յովսէփն ու Մարիամը հովիւների ներս գնալը տեսնելով: — Ի՞նչ կըպատմէին հովիւները նրանց: — Այդ պատմութիւնը լսելիս ի՞նչ կըլինէր ծնողների սիրուը: — Հովիւներն այդ զարմանալի անցը մենակ ծնողներին պատմած կըլինէն թէ ուրիշների էլ: — Մարդիկ ի՞նչ ասած կըլինեն այդ առիթով: — Հովիւներն անշուշտ չէին բաւականանալ մենակ պատմութիւնը հաղորդելով: Ուրիշ ի՞նչ կանէին, երբ նրանք մտածում էին թէ մանուկ Քրիստոսը նոյնպէս իրանց համար է եկել:

Ամփոփումն. Հրեշտակները երկինք վերացան թէ չէ, հովիւներն ասին իրար. «Եկէք գնանք Բեթղէէմ և պատահածը տեսնենք»: Շտապով եկան, գտան մանուկին մսուրի մէջ. Յովսէփին ու Մարիամին էլ նրա կողքին: Մանրամասն պատմեցին, ինչ որ մանուկի մասին լսել էին: Ամենը զարմանում էին այդ բանի վրայ, բայց բոլորից շատ Մարիամի սիրոն էր ցնծում այդ խօսքերից: Հովիւները վերագրածան, ում հանդիպում էին, տեսածի մասին պատմում էին:

Ի՞նչու ենք ուրախանում Ծնունդի երեկոյին: — Գիւղերում տղէքը կտրէ կտուր մանգալով հերթից Ծնունդի երգ, «ալէլուեա» են ասում: — Հովիւների գերն են կատարում: — Ո՞վ գիտէ «ալէլուեա»-ի երգը: — Գրագէտ տղէքն էլ ժամաշապիկ հագած տներն են ման գալիս և երգում Ծնունդի երգը: Ահա դրանից մի կտոր.

«Այսօր տօնն է սուրբ ծննդեան, աւետիս, Մեր Քրիստոսի միծ յայտնութեան, աւետիս, Այսօր արև արդարութեան, աւետիս, Երեցաւ անթիւ մարդկան, աւետիս: Կըկնեցէր հետո խմբովին: — Ծննդի երեկոյին ե-

կեղեցում թէ տանը սեղանի վրայ հւմ վրայ ենք մտածում: Մանուկ Քրիստոսի:—Նա որ մեծանար, մարդկանց ի՞նչ պիտի քարոզէր: «Ով որ միւս մարդկանց սիրի իրա քրոջ ու եղբօր պէս, նա հաճելի կըլինի Աստծուն, մեռնելուց ետ նրա հոգին կըդնայ երկինք, Աստծու մօտ»: — Այդ երեկոյ ժամաշապկով պարտող տղեքը ուրիշ երգ էլ են ասում:

Ահա լսեցէք.

Խորհուրդ մեծ և սրանչելի,
Որ այսօր մեղ յայտնուեց.
Հըեշտակի, հովուի բերնով
Ողջ աշխարհին աւետուեց:
Ծնաւ Փրկիչ, նոր Արքայ
Բեթղէհէմի մօտերքում.
Որդիք մարդկան օրհնեցէք,
Որ մարմացաւ աշխարքում.
Անբաւելին երկնում և երկրում
Բարուրի մէջ փաթաթուեց.
Չըմեկնելով Հօր Աստծուց
Այրի մարումը բազմեց:
Կրկնեցէք խմբովին հետո::

Այժմ կամենում եմ ձեզ ցրյց տալ մի պատկեր,
տեսնեմ ով կարող է բացատրել: (Մանուկներն առանց
ուսուցչի օգնութեան իրանց գիտողութիւններն անում
են, յետոյ ուսուցիչը հարցեր տալով թէյի մացածների
մասին պատկերն ըմբռնելի է դարձնում):

9. ԱՐԵՒԵԼՔԻՑ ԵԿԱԾ ԻՄԱՍՏՈՒՆԵՐԸ

(Ժամ. Բ. 1-14)

1. Նպ. Ինչպէս իմաստուն մարդիկ արեւելքից
եկան մանուկ Քրիստոսին տեսնելու:

Դրանից առաջ հվեր էին եկել մանուկ Քրիստոսին տեսնելու: — Հովիւները որտեղից էին եկել: — Այժմ ի՞նչ մարդիկ էին կամենում նրան տեսնել: Ճիշտ

է, իմաստուն մարդիկ, որոնց մոգ էլ էին ասսւմ: — Ո՞րտեղից գիտէին նրանք, որ մանուկ Քրիստոսը ծնուել է: — Լսէք ասեմ: Նրանք էին գրքերի մէջ կարդացել էին, որ ժամանակով մի մարդ է աշխարհ գալու, ու մարդկանց սրտերն այնպէս ուղղելու, որ նրանք վիճելու, կոռւելու տեղ իրար սիրեն: Երկար ժամանակ սպասում էին այդ մարդուն: Յանկարծ մի զարմանալի բան տեսան: Երկնքում մի այնպիսի աստղ երկաց, որի նմանը ոչ ոք չէր տեսել: Նա աւելի պայծառ ու սիրուն էր փայլում, քան թէ միւս աստղերը: — Այդ տեսնելիս ի՞նչ կը մտածէին իմաստուն մարդիկ: (Աստուած կամենում է այդ աստղի միջոցով մեղ ասել, որ այն բարի մարդը ծնուել է): — Ի՞նչ արին խսկոյն: — Ի՞նչ էին ուզում մանուկից: — Բայց նրանց ճանապարհ գնալը հովիւների պէս հեշտ չէր, որոնք Բեթղէհէմից մօտիկ ոչսար էին պահում: — Ի՞նչո՞ւ ոչ: Իմաստունների աշխարհը հեռու այն կողմն էր, որտեղից արևն է ծագում: — Մատով ցոյց տուէք: Այդ կողմը կոչում է արեկելք: — Իսկ ի՞նչովէս կըկոչուի այդ կողմի աշխարհը: Արևելեան աշխարհ: — Մենք երկաթուղով երկար ժամանակ պիտի ճանապարհ կտրենք, որ այնտեղ հասնենք: — Դէպի ուր պիտի գնացած լինեն: (Բեթղէհէմ): Միթէ նրանք գիտէին, որ Յիսուսը Բեթղէհէմում էր ծնուել: — Բայց գիտէին մօտաւորապէս թէ որ աշխարհում է: — Ի՞նչը կարող էր նրանց ուղեցոյց լինել: — Բեթղէհէմում մօտիկ գտնում էր մի մեծ քաղաք, երուսաղէմ անունով, ու մայրաքաղաքն էր այն աշխարհի, ուր Յիսուսը ծնուել էր: Մայրաքաղաքի մէջ ով է նստում: — Ռուսաստանի մայրաքաղաքը ո՞րն է: — Ո՞վ է նստում այնտեղ: (Նիկողայոս Բ. Կայսրը): Երուսաղէմի թագաւորի անունն էր Հերովդէս: — Ի՞նչ մտածած կըլինեն իմաստունները: — Դէ լսէք: Իմաստունները գնացին երուսաղէմ և հարցըրին: «Ո՞ւր է հրէաների նորածին թագաւորը: Մենք նրա աստղը

տեսել ենք արևելքում, այժմ եկել ենք նրան երկրպագելու»:—ի՞նչու իմաստունները կարծում էին, թէ մասնուկ Քրիստոսը թագաւորի որդի պիտի լինի:—Ո՞ւմ մօտ գնացած կըլինէին:—Բայց Հերովդէս թագաւորը տեղեկութիւն չունէր նորածին թագաւորի մասին:

Ամփոփումն. Ո՞վքեր եկան այժմ մանուկ Քրիստոսի մօտ:—Ո՞րաեղից եկան իմաստունները:—Ո՞րտեղից գիտէին նրանք Յիսուսի ծնուելը:—Առաջ ուր էին որոնում:—Բայց Երուսաղէմում ի՞նչ իմացան:

2. Նպ. ինչպէս իմաստուններն իմացան Յիսուսի ծնուած տեղը:

Մենք այդ գիտենք:—Ո՞ւր էր ծնուել:—Ո՞վքեր էին մանուկ Քրիստոսին այնտեղ փնդրել ու գտել:—Այդ ժամից էին իմացել հովիւնները:—Իսկ Հերովդէսն ժամից:—Բայց ողջ Երուսաղէմում ոչ ոք բան չգիտէր մանուկ Քրիստոսի ծնունդի մասին:—Հերովդէսը հնարյա գտաւ: Նա հորց փորձ արեց իրա քաղաքի իմաստուններին և գիտուն մարդկանց: Նրանք պատասխանեցին. «մեր հին սուրբ գրքերում զրուած է, որ մանուկ Քրիստոսը ծնուելու է Բեթղէհէմ փոքր քաղաքում»: Հերովդէսն այդ լսելով ի՞նչ կանէր:—Հերովդէսն իմաստուններին ուղարկեց Բեթղէհէմ ու ասեց: «Գնացէք փնտրեցէք մանուկին, երբ գտնէք, եկէք ինձ իմաց տուէք, որ ես էլ գնամ երկրպագեմ»:

Ամփոփումն. Հերովդէսն ի՞նչպէս իմացաւ մանուկ Քրիստոսի ծնուած տեղը:—Ի՞նչ հրամայեց նա իմաստուններին:

3. Նպ. ինչպէս իմաստունները գտան մասնուկ Քրիստոսին Բեթղէհէմում:

Միթէ հեշտութեամբ կըտնէին մանուկին Բեթղէհէմում:—Ի՞նչու ոչ:—Ո՞ւր էր մանուկը:—Ի՞նչու իմաստուններն այնտեղ չէին որոնել:—Բայց Աստուած ինքը նրանց ուղիղ ճանապարհը ցոյց տուից: Երբ նըրանք Բեթղէհէմ հասան, տեսան արևելքի պայծառ

աստղն այնտեղ: Երկնքում բարձր նրանց առաջնորդում էր. գնաց ու վերջը կանգնեց մի տան վերև: Այդ ի՞նչ տուն կըլինէր:—Ի՞նչ արին իմաստունները:—Ո՞ւմ գտան փարախի մէջ:—Երբ մանուկին տեսան, ծունը դրին և երկրպագեցին նրան: Նոյնպէս մատուցին նըրան իրանց հետ բերած շատ ուկի և թանկագին ընծաներ:

Ամփոփումն. Ո՞վ էր առաջնորդում իմաստուններին:—Ի՞նչ արին նրանք:

4. Նպ. Արդեօք Հերովդէսն էլ այնպէս ուրախացե՞լ էր մանուկ Քրիստոսի ծնունդի վրայ:

Ո՞վքեր էին մինչև այդ ժամանակ մանուկ Քրիստոսի ծնունդի վրայ ուրախացել:—Ի՞նչու էին նրանք ուրախանում:— Իմաստունները մինչև անգամ ի՞նչ էին արել ուրախութեան ժամանակ:—Ի՞նչ էր կամենում անել Հերովդէսը: (Երկրպագել):—Միթէ նա այդ բանը անկեղծ անելու էր:—Մտաբերցէք թէ ամենից առաջ իմաստունները ուր էին փնտրել մանուկին: Թագաւորին ի՞նչպէս էին սաել:—Միթէ ուրախացած կըլինէր Հերովդէսը, երբ հրէաների նորածին թագաւորի մասին լսէր:—Ի՞նչ կըլինէր նրան, եթէ մի նոր թագաւոր գար:—Միթէ դրա վրայ Հերովդէսը կուրախանար:—Բայց ի՞նչու Հերովդէսը կարող էր բոլորովին հանգիստ մնալ: (Յիսուսը վէճ ու կոիւ չէր կամենում, այլ իսպաղութիւն): Բայց լսեցէք, թէ Հերովդէսն ի՞նչ էր մտադիր: Նա կամենում էր մանուկին սպանել տալ:—Արդեօք դժուր է զալիս ձեզ թագաւորի մտադրութիւնը:—Գովելի՞ բան էր:—Աւելի ի՞նչ տեսակ բան էր:

Ամփոփումն. Հերովդէսն ի՞նչու չէր ուրախանում մանուկի վրայ:—Ի՞նչ էր կամենում անել:

Ո՞վքեր էին սիրում մանուկ Քրիստոսին: Իրածնողները, ելի ովքեր: Հովիւնները:—Ի՞նչով կարող էին յայտնել իրանց սէրը:—Գտաը կընծայէին:—Ելի ովքեր սիրեցին, իմաստունները:—Ի՞նչով ցոյց տուին իրանց

սէրը: Ոսկի և ուրիշ թանկագին ընծաներ տուին: Ո՞ւմ էք կամենում դուք ևս սիրել: Դուք չէք կարող նրան ոսկի ընծայել: —Ի՞նչու ոչ: —Յիսուսն այժմ երկնքումն է: —Բայց դուք կարող էք նրան աւելի լաւ բան ընծայել քան ոսկին: —Ի՞նչ էք կամենում Յիսուսին ընծայել: Մեր սիրտը: —Ի՞նչ պիտի անէք, եթէ Յիսուսին սիրում էք: Ազնիւ և ջանասէր լինել:

Ահա լսեցէք ուրիշ երգ «Աւետիս»-ի, որի բովանդակութիւնը ձեզ ծանօթ պիտի լինի:

«Մելքոն, Գասպար և Բաղդասար, աւետիս,
Շատ պլազան մի աստղ տեսան, աւետիս,
Երբ աստղի հետ մի տեղ հասան, աւետիս,
Մի խոր ու լայն քարայր մտան, աւետիս:
Այստեղ գտան սուրբ մայրիկին, աւետիս,
Ամենասուրբ մանուկ գրկին, աւետիս.
Շատ պարզեներ տուին նրան, աւետիս,
Ոսկի, կնդրուկ շատ պատուական աւետիս:

Մոգերի անունն ի՞նչ էր: —Մանուկ Քրիստոսի ծնուած տեղը ի՞նչպէս է անուանած այս երգի մէջ: Քարայր:

10. ԵԳԻՊՏՈՍ ՓԱԼՁԵԼԸ

(Խոչ. թ. 19. Հ3)

1. Նպ. ի՞նչպէս ազատուեց մանուկ Քրիստոսը,
Հերովդէմն ի՞նչ էր ուզում անել մանուկ Քրիստոսին: —Շատ սպասեց ու երկար նայեց Բեթղէէմի ճանապարհին: Նա մտածում էր. «Եթէ մանուկ Յիսուսին չըգտնեմ, կարող է ժամանակով թագաւոր գառնալ»: —Ի՞նչ կանէր եթէ մոգերը նրան իմաց չըտային: Կըբարկանար: —Ի՞նչ կանէր գտնելու համար: Զինուորներ կուղարկէր Բեթղէէմ փնտրելու: —Արդեօք ծնողները կարող էին մանուկին պաշտպանել զօրեղ թագաւորի դէմ: —Հովիւները: —Միթէ մոգերն էլ չէր կարող մանուկին պատճառ չըւնեն, ի՞նչ կանէին: Աստծուն շնորհակալութիւն կանէին:

Թին յայտնել մանուկի ծնուած տեղը: —Ո՞վ կարգելէր այդ: —Այո, Աստուած գիշերն երազում երեաց մոգերին և ասեց. «Երուսաղէմ միթք գնաւը թագաւորը ցանկանում է մանուկին սպանել»: Հետեւեալ օրը մոգերն ի՞նչ կանէին: —Ի՞նչ ճանապարհով կըգտնային իրանց աշխարհը: —Չէ՞ որ դրանով մանուկը չէր ազատուիլ ի՞նչու: —Հերովդէսի զինուորները կըգտնէին: —Դարձեալ ում պիտի Աստուած զգուշացնէր: Ծնողներին: Այո, հրեշտակը երազում երեաց Յովսէփին և ասեց. «Յովսէփի, վեր կաց, վերցրու մանուկին և իրա մօրը և փախիր Եգիպտոս, կաց այնտեղ մինչև քեզ իմաց կըտամ, որովհետեւ Հերովդէսը կամենում է մանուկին սպանել»: Այդ լսելիս Յովսէփին ի՞նչ կանէր: Կըսարսափէր: —Ի՞նչ կանէր իսկոյն: Այո, զարթեցրեց Մարիամին ու հրեշտակից լսածը պատմեց: —Ի՞նչ կանէր Մարիամը: Կըսարսափէր, լաց կըլինէր: Յետոյ: Մանուկին գրկած դուրս կըգնար Յովսէփի հետ այն օթևանից, որ Բեթղէմի մօտ էր: —Ի՞նչ ժամանակ հեռացան: Դիշերուայ մթանը: —Միթէ չէին վախենում գիշերը: Հետու ճանապարհ գնալով նոր երկիրը պիտի հասնէին: Եգիպտոս: —Ինչու Հերովդէսը չէր կարող մանուկին վկաս տալ: Որովհետեւ չըգիտէր հրտեղ է: —Երբ Մարիամն ու Յովսէփը տեսնէին, որ Հերովդէսից վախենալու պատճառ չըւնեն, ի՞նչ կանէին: Աստծուն շնորհակալութիւն կանէին:

Ամփոփումն. Ի՞նչ վտանգի մէջ էր մանուկ Յիսուսը: —Հերովդէսն ինչու էր կամենում նրան սպանել: —Աստուած ի՞նչ հրամայեց իմաստուններին: Ինչի վրայ շատ բարկացաւ: Յետոյ ի՞նչ արեց մանուկին գտնելու համար: Ի՞նչ հրամայեց Աստուած ծնողներին: —Ո՞վ ազատեց մանուկին: —Մինչև Երբ պիտի մնային Եգիպտոսում:

2. Նպ. Յովսէփն ու Մարիամը ո՞րքան մը-նացին Եղիսլոտոսում.

Ո՞ւմիկ կարիք չունէին նրանք վախենալու:—Բայց դարձեալ նրանց համար վատ էր, որ ապրելու էին օտար աշխարհում:—Եթէ ձեր տանից յանկարծ հեռանաք օտար տեղ, ով կըսիրի ձեղ այնտեղ: Ոչոք:—Եթէ հիւանդ լինէք, ով կըցաւի:—Օտար երկրում ձեր սիրտն ի՞նչպէս կըլինէր: Տխուր:—Ինչի՞ կարօտ կըքաշէք:—Այդ դրութեան մէջ էր նոյնպէս Մարիամի և Յովսէփի սիրտը:—Ոչ որ եգիպտոսում նրանց վիճակով չէր հետաքրքրում:—Նրանց ծանօթներն ու բարեկամ-ները ո՞ր աշխարհում էին: Քանանում: Ինչու չէին զնում այնտեղ:—Հերովդէսը նրանց կըգտնէր և մանուկին կսպանէր:—Ե՞րբ կարող են վերապանալ: Հերովդէսի մահից ետ: Այն ժամանակ ով Յովսէփին կը յայտնէր, որ վերադառնայ: Հրեշտակը, Այո, մի անգամ Յովսէփը երազ տեսաւ, երևաց նրան այն հրեշտակը, որին քանա-նացոց երկրում տեսել էր, և ասեց. «Յովսէփ, վեր կաց, վերջրու մանուկին և իրա մօրը, վերադարձիր հայրե-նիք: Հերովդէս թագաւորը, որ ուզում էր մանուկին սպանել, մեռել է»:—Յովսէփն ի՞նչպէս կըլինէր: Ու-րախ: Նա երազը պատմեց Մարիամին:—Ո՞ր աշխարհը պիտի զնան: Քանան:—Այո, բայց Բեթղէէմ չըմտան, այլ զնացին Նազարէթ ու այնտեղ ապրեցին մանուկ Քրիստոսի հետ:

Ամփոփում. Մինչև Երբ պիտի մնային Յովսէփն ու Մարիամը օտար երկրում:—Ո՞վ իմաց տուեց Յով-սէփին Հերովդէսի մահը:—Ո՞վ էր ուզարկել հրեշտա-կին:—Արդեօք հնազանդեց Յովսէփը Աստծու խօսքին: Այն ժամանակից սկսած ո՞ր քաղաքում բնակուեցին Յովսէփն ու Մարիամը:

Ո՞ւմ կեանքն էր վտանգի մէջ:—Հերովդէսն ի՞նչ կանէր, եթէ զինուորները մանուկին գտնէին:—Ո՞վ խափանեց Հերովդէսի չար միտքը:—Ի՞նչ, արեց Աս-

տուած, որ մոգերը թագաւորին թան չասեն: — Աս-տուած ի՞նչպէս հոգաց, որ զինուորները մանուկին չըգտնեն: (Ուսուցիչը ցոյց է տալիս այն պատկերը, ուր նկարուած են Մարիամն ու Յովսէփը մանուկի հետ Եգիպտոս վախչելիս): Ի՞նչի՞ վրայ է նստած Մարիամը: Աւանակի: — Յովսէփը չքաւոր մարդ էր. օտար երկ-րում ի՞նչով կապրէր: (Սոգերի ընծայած ոսկով): Ո՞վ էր հոգացել մանուկ Յիսուսի և նրա ծնողների համար:—Ո՞վ է պահպանել ձեղ, երբ փոքր էիք:—Այժմ ով է ձեղ համար հոգում:—Արդեօք ձեր ծնողները կարո՞ղ են ամեն վլանգից ձեղ պաշտպանել:—Երբ հիւանդ էք, ով է ձեղ կրկին առողջացնում:—Ո՞վ է ձեր ծնողնե-րին պահպանում, որ նրանք էլ ձեղ համար հոգան:—Դրա համար ի՞նչ պիտի անէին:—Ամեն երեկոյ քնելիս Աստծուն աղօթում ննք.

«Բարերար Աստուած և ողորմած Տէր,
Պահիր, պահպանիր դու մեզ այս գիշեր,

Որ առաւոտեան զուարթ վեր կենանք.

Քո սուլը անունը օրհնենք ու փառք տանք»:

Այդ աղօթքով ի՞նչ խնդրեցիք Աստծուց:—Առաւոտուայ համար ի՞նչ աղօթք գիտէր:

«Ո՞վ Տէր մեր գթոս, Դու լոյս առաւօտ,
Ծագիր և մեզ մօտ քո լոյսդ անաղօտ.

Թող լուսաւորուեն մեր միտքն ու հոգին,

Որ քո լոյս անուան լինենք փառաբան»:

Ի՞նչ էք խնդրում Աստծուց այս աղօթքով:

11. ՏԱՄՆԵՐԿՈՒԻ ՏԱՐԵԿԱՆ ՅԻՍՈՒՍԼ ՏԱՃԱ- ՐՈՒՄ (Ղուկ. Բ. 41—52)

1. Նպ. Ի՞նչպէս պատանի Յիսուսն առաջին անգամ ծնողների հետ մայրաքաղաք գնաց.

Ո՞ւտեղ էին ապրում ծնողները: — Ի՞նչպէս էր մայրաքաղաքի անունը:—Ո՞վ էր այնտեղ ապրել (Հե-

րովդէս): — Յիսուսի ծնողներն ինչո՞ւ էին գնում Երուսա-
ղէմ: — Մեզ մօտ ինչո՞ւ են գնում Անի, էջմիածին: —
Ո՞ւմ են ուզում տեմնել այնտեղ (հին հին շէնքերը,
թագաւորի պալատներ, վանքեր, և յետոյ Հոգեոր տէ-
րին): Յիսուսի ծնողները կամենում էին Երուսաղէմի
գեղեցիկ տաճարի մէջ Զատկի տօնը կատարել: Ինչո՞ւ
Նազարէթ քաղաքի եկեղեցին չէին գնում: — Ինչո՞ւ փո-
քը գիւղերի բնակիչները տօն օրերին գնում են մօ-
տիկ մեծ գիւղի կամ քաղաքի եկեղեցին: — Նազարէթի
մէջ էլ եկեղեցի, տաճար չըկար: — Ամբողջ երկրի մէջ
միայն մի տաճար կար, այն էլ Երուսաղէմում: Դա մի
հիանալի շէնք էր, որի մասին գեռ շատ պիտի լսէք:
— Նազարէթից մինչև Երուսաղէմ երկար ճանապարհ
էր: Այնքան հեռու էր, որ ստիպուած էին ճանապար-
հին գիշերները քնել: Այդ պատճառով էլ տարուայ մէջ
մի անդամ էին գնում Երուսաղէմի տաճարը: Երբ Յի-
սուսը 12 տարեկան էր դառել, ծնողները վեցցրին
հետները ասածին անդամ ու Զատկի տօնին տարան
Երուսաղէմ: Ինչո՞ւ աւելի վաղ չէին տանում: — (Մեզ
մօտ մեծերն են գնում եկեղեցի թէ փոքրերը): Եկե-
ղեցի գնալիս ձեր ծնողները զաւակներից ո՞րին են
հետները տանում: — Ինչո՞ւ միայն մեծերին: — Այժմ
պարզ է ձեզ համար, թէ ինչո՞ւ Մարիամն ու Յովսէփը
12 տարեկան Յիսուսին տարան Զատկի տօնին, (Կա-
րող էր ոտով գնալ և բազմութեան մէջ չըճիւտել): —
Միթէ ուխտ գնալիս մենակ են գնում: — Ո՞վքեն են
գնում միասին. (ազգականներ, բարեկամներ, հարեան-
ներ): Այն, այդպէս է եղել և այն ժամանակ: Բայց
Զատկի տօնին շատ աւելի մարդիկ էին թափւում ա-
մեն կողմից Երուսաղէմ, քան թէ մեր տօների կամ օ-
բաների ժամանակ մեր սրբատեղիքը, Դրա պատճառն
ի՞նչ էր: — Ի՞նչ կըլինէր Երուսաղէմի փողոցների հալլ:
Անթիւ բազմութիւն, հարհրոց, անընդհատ շարժում,
աղմուկ և այն:

Ամփոփումն. Յիսուսի ծնողները ամեն տարի գը-
նում էին Զատկի տօնին Երուսաղէմի տաճարը: Երբ
Յիսուսը 12 տարեկան դառաւ, նրան էլ տարան հետ-
ները: Ճանապարհին մի քանի գիշեր քնեցին: Նրանք
գնում էին իրանց բարեկամների և ծանօթների հետ
միասին: Երկրի ամեն ծայրերից ժողովուրդը թափում
էր այնտեղ: Այդ պատճառով Երուսաղէմի փողոցների
մէջ բազմութիւնն իրար հրհրելով էր անցնում:

2. Նաև, Տեսնենք, պատանի Յիսուսին Երու-
սաղէմի մէջ ո՞ր տեղն է աւելի դուր եկել:

Մայրաքաղաքի մէջ ինչեր կան տեսնելու: — Ո՞վ
է ապրում այնտեղ: — Թագաւորն ի՞նչ տեսակ տուն
կունենայ: — Ո՞վ է պահպանում թագաւորին: — Ո՞ւր են
ապրում զինուորները: — Բայց ի՞նչ սիրուն, մեծ շէնք
կար էլի Երուսաղէմի մէջ: — Ի՞նչ էր կատարում այն-
տեղ: — Ի՞նչ է լինում մեր ժամերում: — Ո՞ւմ մասին է
քարոզում տէրտէրը: — Պատանի Յիսուսն աւելի սիրով
ուր գնացած կըլինի: — Արդեօք գէպի թագաւորի փա-
ռաւառը պալման ու դէպի զինուորները, թէ դէպի տա-
ճարն ու այն փողոցները, ուր զանազան տեսակ
հագնուած օտարականներ կային: — Յիսուսի ծնող-
ները նոյնպէս չգիտէին այդ: Երբ եօթն օրից ետ
ճամբայ ընկան տուն գալու, տեսան տղան չըկայ և
նրանք չէին իմանում, թէ ուր փնտրեն որ գտնեն: Մտածում
էին կարելի է նա ծանօթների հետ առաջ
է դուրս եկել. նրան կըհանդիպենք երեկոյին իջևա-
նում: Բայց երբ իջևան հասան, տեսան տղան այնտեղ
չի: Այդ ժամանակ ի՞նչպէս կըդառնար ծնողների սիր-
ուը: — Ի՞նչ կանեն նրանք: — Երուսաղէմի ի՞նչ տեղերը
միառմի կըփնտրեն: — Մարդկանց ի՞նչպէս կըհարցնեն: —
Երբ մարդիկ նրանց հարցմունքին շարունակ պա-
տասխաննեն. «ուղային տեսած չըկանք», ի՞նչ կըդառ-
նար նրանց սրտի դրութիւնը: — Մարսափած մայրն ի՞նչ
կանէր: — Վերջապէս ամեն կողմ փնտրելուց ետ ծնող-

ները երբորդ օրը գնացին տաճարը և այնտեղ գտան իրանց տղային:

Ամփոփումն. Տուն դառնալիս ովք էր պակաս: — Ի՞նչ էին մտածում ծնողները: — Ի՞նչ իմացան իջևանում: — Ի՞նչ արին նրանք: — Ո՞ւր գտան նրանք տղային:

3. Նպ. Տղան ինչո՞ւ էր յետ մնացել տաճարում.

Մարդիկ ի՞նչ են անում մեզ մօտ ժամում: — Տէրտէրն ում մասին է խօսում: — Պատանի Յիսուսը նոյնպէս ի՞նչ արած կըլինի: — Բայց նա փոքր ի՞նչ ուրիշ տեսակ արեց, քան թէ մարդկանց ու մանուկների մեծ մասը, Երբ ուսուցիչների ասածներից մի բան չէր հասկանում, ինդրում էր, որ բացարեն: Տղան այնպիսի խելօք հարցմունքներ էր տալիս կամ ուսուցիչների հարցերին այնպէս տեղին էր պատասխանում, որ կողքից ականջ դնողները զարմանում էին: — Ո՞վ գտաւ տղային այդ գըութեան մէջ: — Ծնողներն ի՞նչ ասած կըլինին (գեռ լսել աշակերտների կարծիքները, ապա ասել Մարիամի խօսքերը, «ա՛յ որդի, այս ի՞նչ բերիր մեր գլուխը. հայրդ և ես երկար ժամանակ մղկեսալով քեզ ենք վնարում»): Տղան ի՞նչ պատասխանած կըլինի նրանց: — Միթէ նա վայտ բան էր արել: — Ի՞նչո՞ւ էր տաճարը գնացել: — Ո՞ւմ մասին էր կամենում գեռ էլի լսել: — Ո՞վ էր երկնային Հօր մասին նրան պատմել: — Ո՞վ կարող էր նրան աւելի պատմել: — Ի՞նչո՞ւ էր սիրում երկնային Հօր մասին լսելը: — Նրան ի՞նչ էին պատմել Տէր Աստծու մասին: — Ծնողներն ի՞նչ պատմած կըլինէին նրա մանկութիւնից: — Դրանից նա ի՞նչ տեսած կըլինէր: — Աստուած ի՞նչ աշքով էր նայել նրան: — Ահա այդ պատճառով կամենում էր միշտ հայր Աստծու մասին լսել: Եւ երբ մայրը պատմեց, թէ ի՞նչպէս ամեն տեղ վնարել են ու նրա համար շատ վշտացել տղան պատասխանեց. «Ի՞նչո՞ւ

էիք ի՞նձ ամեն տեղ վնարում: Միթէ չըգիտէիք, որ ես հօրս տանը պիտի լինէի»: Ի՞նչ կանէր Յիսուսը դրանից ետ: — Ո՞ւր գնացած կըլինին միասին: — Աւելի սիրով որտեղ կուգէր մնալ Յիսուսը: — Բայց ի՞նչու գնաց նա ծնողների հետ: — Դրանից ետ ևս ի՞նչպէս կըլինէր գէպի իրա ծնողները: — Ի՞նչ տեսակ մարդ է դուրս եկել, երբ նա այդպէս սիրով ու եռանդով ուսանում էր: — Ո՞վ ուրախացած կըլինի տղայի վրայ:

Ամփոփումն. Ծնողներն ի՞նչպէս գտան տղային: — Ի՞նչո՞ւ այդքան սիրում էր հայր Աստծու մասին լսել: — Ի՞նչ ասեց մայրը: — Ի՞նչ պատասխանեց Յիսուսը: — Ո՞ւր պիտի ծնողներն իսկոյն նրան վնարէին: — Ո՞ւր գնացին ծնողները տղայի հետ: — Ի՞նչ զուրս եկաւ նրանից:

Ի՞նչ կարող ենք սովորել պատանի Յիսուսից: Ամենից աւելի որտեղն է նրան գուր գալիս: — Ո՞ւմ մասին պատմելն էր սիրով լսում: — Ի՞նչո՞ւ էր աւելի սիրով լսում Հայր Աստծու մասին: — Հայր Աստուածը նրան լինչ էր արել: — Հայր Աստուածը ձեզ ի՞նչեր է արել և այժմ էլ ի՞նչ է անում: — Այդ պատճառով մենք ի՞նչ պիտի անենք: — Լսէք ասեմ ձեզ այն աղօթքը, որով Յիսուսը գիմում էր Հայր Աստծուն.

Երկնաւոր Հայր, սուրբ լինի քո անունը, գայ քո թագաւորութիւնը, քո կամքը կատարուի ի՞նչպէս երկնքում, այնպէս էլ երկրի վրայ: Այսօր տնեւր մեղ մեր հանապազօրեայ հացը: Ներիր մեր պարտքերը, ի՞նչպէս մենք ներում ենք մեր պարտապաններին: Մեղ փորձութեան մի տանիլ, այլ փրկիր չար բաներից, որովհետեւ քոնն է թագաւորութիւնը, զօրութիւնը և փառքը յաւիտեան ամեն: (Հարցեր տալ, մաս-մաս կըկնել, մինչև բերան սերտելը):

12. ՅԻՍՈՒԽԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ (մատ. Գ. 1—6,
13—17).

1. Նպ. Ի՞նչպիսի մարդ էր Յովհաննէս մարդարէն.

Յիսուսի ապրած աշխարհում կար մի գետ՝ Յորդանան անունով։ Դա ո՞ր կողմից ո՞ր կողմն է հոսում, նայեցէք քարտէզին։ Այդ գետի ափին բնակւում էր մի արդար և իմաստուն մարդ, Յովհաննէս Հանունով։ Նա մարդարէ էր։ Ուրիշ իմաստուն մարդկանց էլ պատահեցինք, որոնք եկել էին արեւելքից։ Նրանք կոչում էին մոգ, իսկ Յովհաննէսը։—Մարդարէն այն տեսակ մարդ է, որ քարոզելով ամեն բան ասում է համարձակ, թագաւորից էլ չի վախենում։—Դրան ո՞վ ուղարկած կըլինէր։ Աստուած։ Ի՞նչ պատուիրած կըլինէր։ Նա ասում էր. «Ապաշխարեցէք ձեր արած մեղքերը, որ ձեր սրտերը մաքրուեն»։ Աշխարհի ամեն կողմերից գալիս էին նրա քարոզները լսելու «Դուք միայն հոգս էր քաշում լաւ հագնուելու և լաւ ուտել-խմելու վրայ։ աւելի ուշադրութիւն դարձրէք ձեր սրտերը ուղղելու վրայ, որ Աստծու արքայութիւնը գայ երկրի վրայ»։ Սա աշխատում էր որ Աստծու արքայութիւնը շուտ գայ. իսկ Յիսուսն ինչի՞ համար էր աշխատելու։—Որ մարդիկ իրար հետ սիրով լինին եղրօր ու քրոջ պէս։—Յովհաննէս իրա քարոզութիւնով հւմ ճանապահն էր պատրաստում։—Եթէ Յովհաննէսը շուայլ հագնուող և չափազանց զուարճացող մարդկանց դէմ էր, ինըն ի՞նչպէս ապրելիս կըլինէր։—Այո, շատ պարզ կեանք ունինք. ապրում էր անապատ տեղում, հազին ուղտի բրդէ ծածկոց, մէջքին կաշէ գոտիկ, ուտելիքը անտառի մեղք։—Ամեն օր նրա մօտ մարդիկ էին գալիս։—Ի՞նչ էին ուղում։—Խորհուրդ էին հարցնում թէ ի՞նչպէս ապրեն, որ Աստծուն հաճելի լինեն։—Ի՞նչ կըպա-

տասխանէր։—Ովքեր ուղիղ սրտով խոստովանում էին իրանց սխալները ու խոստանում էին այլպիսի բան չըբռնել, նրանց մկրտում էր։—Բայց մի քանիսի վրայ շատ էր բարկանում։—Ի՞նչ տեսակ մարդիկ կըլինէին դրանք։—Կային մարդիկ, որ միշտ տաճարն էին գնում, բարձրածայն աղօթք էին անում, աղքատին ողորմութիւն էին տալիս, որ ցոյց տան թէ իրանք արդար ու բարեպաշտ են. բայց ծածուկ ուրիշ տեսակ էին վարում։ Դրանց նա ասում էր՝ կեղծաւորներ։—Կային ուրիշներ էլ, որոնք մեծ պաշտօններ ունին, շատ հարուստ էին, գոռոզութեամբ էին նայում Յովհաննէսի քարոզների վրայ։—Միթէ դրանց էլ կըմկրտէր Յովհաննէսը։—Ի՞նչո՞ւ ոչ։—Ո՞վքեր կըսիրէին Յովհաննէսին։—Ժողովուրդը, հասարակ մարդիկը։

Ամփոփումն. Յիսուսի ապրած երկրում ի՞նչ գետ կար։—Ո՞ր կողմն էր հոսում։— Ո՞վ էր ապրում նրա ափին։—Ո՞ւմնից էր ուղարկուած։—Իրա մօտ եկողներից ի՞նչ էր պահանջում։—Ի՞նչ տեսակ մարդկանց էր մկրտում։—Ի՞նչ տեսակների վրայ էր բարկանում։

2. Նպ. Ի՞նչպէս Յիսուսն եկաւ Յովհաննէսի մօտ.

Ո՞րտեղ էր ապրում Յիսուս։—Յովհաննէսը ո՞րտեղ էր քարոզում։—Նրա մօտ ովքեր էին գնում։ (Բոլոր ժողովուրդը՝ աղքատ, հարուստ, մեծ, փոքր)։ Արդեօք մարդարէի համբաւը նազարէթ հասած կըլինէր թէ չէ։—Ի՞նչից գիտենք, որ հասել էր։—Որովհետև Յիսուս Յովհաննէսի մօտ։—Ի՞նչո՞ւ էր գալիս։ Մկրտելուց առաջ Յովհաննէսն ի՞նչ էր անում։—Խոստովանեցնում էր։—Արդեօք Յիսուսի արարքները մարդարէին դուր կըգնմը թէ չէ։—Այո, Յիսուսի խոստովանութիւնը լսելուց ետ բարձրածայն ասեց. «ահա Աստծու գառը, որ բոլոր մարդկանց արդարութիւն պիտի սովորեցնի»։ Աստուած Յիսուսին ինչո՞ւ էր աշխարհ ուղարկել։—Յովհաննէսից մկրտուելն ի՞նչ նշա-

Նակութիւն պիտի ունենար 30 տարեկան Յիսուսի համար: Որ ձեռնադրուի մարդարէից և քարողի:—Ինչու ուզում էր Յովհաննէսից ձեռնադրուի և ոչ ուրիշից: Որովհետև ամենը նրանից էին խորհուրդ հարցնում. զօրեղ մարդ էր աշխարհի մէջ: — Բայց Յովհաննէսը Յիսուսի պէս արդարին չէր մկրտում:—Ի՞նչ էք կարծում, ինչու:—Յովհաննէսն ասում էր Յիսուսին. «Դու ինձանից արժանաւոր ես, ևս պիտի գլուխ քո առաջ խոնարհեցնեմ»: Յիսուսն այդ բանը չընդունեց:—Ի՞նչ կասէր:—Չեք տներում ովկ է ուժմ առաջ խոնարհում:—Յիսուսն էլ Յովհաննէսին ասեց. «Դու ինձանից տարիքով միծ ես. ժողովրդի մէջ անուանի ես. ևս պիտի քեզանից մկրտուեմ»: Յովհաննէսը յօժարուեց: Երբ Յիսուս ջրից գուրս էր գալիս, երկնքից Աստծու ձայնը լսուեց. «Դա է իմ սիրելի որդին, դրան հաւանեցի, ինչ ասի, լսեցէք»:—Յիսուս ինչու էր Աստծուն հաճելի դարձել:—Փոքր ժամանակ հնազանդ զաւակ էր ծնողների համար, հասակն առած միջոցին մտածում էր մարդկանց քարողել, որ կրուելը, թշնամանալը թողնեն, իրար հետ սիրով, խաղաղ ապրեն:

Ամփոփումն. Ո՞ւր էր ապրում Յիսուս: — Ինչու եկաւ Յովհաննէսի մօտ:—Յիսուսի խոսառվանութիւնը լսելուց ետ մարդարէն ի՞նչ ասեց բարձրաձայն:—Ի՞նչու չէր ուզում մկրտել:—Յիսուս ջրից գուրս գալիս ի՞նչ ձայն լսուեց:—Ի՞նչով էր Յիսուս հաճելի դարձել Աստծուն:—Մկրտութեան տօնը Երբ ենք կատարում:—Յունվարի 6-ին, որ նոյնպէս կոչւում է Խաջը ջուրք զգել: Ինչու համար:

13. ՊԵՏՐՈՍԻ ԶԿՆՈՐԾՈՒԹԻՒՆԸ (Ղուկ. Ե. 1—11)

1. Նալ. Ինչպէս Յիսուսը ժողի վրայ քարոզում էր.

Ո՞ւր էր քարոզում Յիսուս:—Ո՞ւրտեղ են քարո-

զում առհասարակ մեր տէրտէրները: — Ժամում ի՞նչ տեղ են կանգնում քարոզելիս:—Ինչու բարձր սեղանից:—Ինչու Յիսուսն էլ մի ժամում չէր քարոզում: Յիշում էր թէ 12 տարեկան ժամանակ տաճարում ի՞նչ էր անում:—Ինչու Յիսուսի ապրած աշխարհում աւելի հեշտ էր բացօթեայ քարոզելը քան թէ մեղ մօտ:—Ի՞նչի մասին բարոզելիս կըլինէր Յիսուսը:—Մարդիկ ի՞նչպէս պիտի վարուէին իրար հետ:—Ո՞վքեր կըլինէին Յիսուսին լսողները:—Ո՞վքեր են ապրում ծովի ափին:—Արդեօք ձուկ որսողները սիրով են լսել նրան:—Ինչու էք կարծում, որ նրան սիրով են լսել: Որովհետև Յիսուսին գուր էր եկել ծովի ափը:—Երուսաղէմի մէջ 12 տարեկան Յիսուսին որը տեղն էր ամենից շատ դուր եկել:—Ինչու էր նա տաճարում մնացել:—Իրա անհանգատացած ծնողների ի՞նչպէս էր պատասխանել:—Ինչու ժողովուրդը նրան սիրով ականջ կը դնէր: Որովհետև նա ամենից լաւ գիտէր, թէ հայր Աստուածը մարդկանցից ի՞նչ է պահանջում: Արդեօք Յիսուսին շատերն էին լսում: Այս, խոնըւում էին նրա շուրջը և իրար հարհըրում: Բայց ինչու բազմութիւնը բացօթեայ տեղն էլ դժուարացնում էր քարոզելը: Ամեն մինն ուզում էր մօտիկից լսել:—Յիսուսը դրա հնարը գտաւ. բարձրացաւ ափին կանգնած մի նաւակի վրայ, նրա տէր ձկնորսին խնդրեց, որ ցամաքից փոքր ի՞նչ հեռու քաշի: Նրա միջից սկսեց քարոզել ժողովրդին կասես ժամի սեղանի վրայ կանգնած:

Ամփոփումն. Ի՞նչ էր քարոզում:—Ո՞ւրտեղ:—Ո՞վքեր էին նրա ունկնդիրները:—Նա ի՞նչ բան արեց, որ բազմութիւնը նրա քարոզածը լաւ լսի ու հասկանայ:

2. Նպ. Ինչպէս Յիսուսը վարձատրեց ձըկնորսին.

Զկնորսն ինչով էր արժանի վարձատրութեան:—Ի՞նչ էր արել նա: Մեզ դուր է գալիս, որ նա Յիսուսի խնդրը կատարեց և թողեց իրա նաւակի միջից

քարոզել: Արժէ նրա անունն իմանալ. նա կոչւում էր Սիմոն Պետրոս: — Բայց չէ որ նա արդէն վարձատրուել էր: — Նա ինչի՞ էր ականջ գրել: — Ինչո՞ւ նա կարող էր քարոզն աւելի լաւ լսել: — Միթէ ձկնորսը ուրիշ վարձատրութեան էլ սպասելիս կըլինէր: (Բացի քարոզ լսելուց այլ և փողի): — Յիսուսն ինչպէս կընայէր մի այդպիսի շահասէր ձկնորսի վրայ: — Ի՞նչպէս պիտի Սիմոն Պետրոսը վարուած լինի, որ Յիսուսը կամենում էր նրան առանձնապէս վարձատրել: (Միրով, պարկեցա): Ապա ասէր, Յիսուսը ինչպէս կըվարձատրի: — Որպէսպի դուք աւելի ճիշտ ասէր, Պետրոսի մասին հարկաւոր է ձեզ քիչ էլ տեղիկութիւն տալ, նա ամբողջ գիշերն ուռկան էր զցել և ոչ մի ձուկ չէր բռնել: Նա ինչո՞ւ պիտի գիշերը ուռկան զցէր: Որովհետև ձկները գիշերով աւելի լաւ են բռնըում: Ի՞նչ մտքով էր Պետրոսը մօտեցել ափին. (հանգստանալու): — Յիսուսն ինչ նկատած կըլինէր նրա վրայ: (Ցոգնածութիւն), — Ուրեմն ինչպէս կարող էր նրան վարձատրել: — Յիսուսն ասեց Պետրոսին. «Նաւակը քաշիր ծովի ներսը, դու պիտի առատ ձուկ որսաս»: Պետրոսը կըլիսէ թէ չէ: — Ինչո՞ւ չէր լսիլ: Կասէր՝ ցերեկը ձուկ չի բռնուիլ: — Բայց ինչը Պետրոսին կստիպէր Յիսուսի պատուէրը կատարել: Սէրն ու վստահութիւնը դէպի Յիսուս, որ այնպէս սիրուն պատմում էր Աստծու մասին: Պետրոսը հնագանդեց Յիսուսի պատուէրին: Նաւակը տարաւ ծովի մէջտեղը և այնքան ձուկ բռնեց, որ ուռկանը չէր կարում մենակ ջրից հանել, օգնութեան կանչեց միւս ձկնորսներին: Սրանք բերեն իրանց նաւակը. երկու նաւակներն այնպէս լցուեցին ձկներով, որ մինչև ցամաք հասնելը ջրի մէջ խորասուզուեցին:

Ամփոփումն. Յիսուսն ինչ պատուիրեց Պետրոսին: Ի՞նչ պատասխանեց նրան Պետրոսը: — Ի՞նչ արեց նա: — Ի՞նչպէս վարձատրուեց նրա ուշակալութիւնը:

3. Նպ. ինչպէս Պետրոսը տէր Յիսուսին շնորհակալութիւն արեց.

Յիսուսն ինչ էր ընծայել նրան: — Ինչո՞ւ համարէ էր այնքան ձուկը նրան ընծայել: — Համեմատեցէք Պետրոսի արածը Յիսուսի արածի հետ: Ի՞նչ կասէր Պետրոսն իրան: — Ի՞նչպէս շնորհակալութիւն արած կըլինի: — Երբ կիցէ արդեօք առատօրէն ընծաներ ստացել էր: Ե՞րբ, ո՞ր տօնին: Մեր ծննդեան տօնին, Զրօրհնէքին, Զատկին, Ո՞վ է ձեզ այդքան բաներն ընծայում: — Ինչո՞ւ են ընծայում ձեր ծնողները: — Միթէ միշտ զաւակներն ուշակալ են լինում: — Եթէ անուշակալ էր եղել և ծնողները դարձեալ ընծաներ են տալիս, ինչ պիտի ասէք: (Մենք արժանի չենք): Հենց այդ վիճակում կանգնած էր Պետրոսը Յիսուսի առաջ: Օրհնութիւնը յանկարծ, անակնկալ էր եկել և նրան երկեղի մէջ զցել: Ի՞նչպէս մտածած կըլինէր: (Յիսուսից ստացածս շատ շատ էր, այդքանին արժանի չեմ: Նա չափազանց բարի է դէպի ինձ): Պետրոսն ընկաւ Յիսուսի ոտները և ասեց. «Հեռու գնա ինձնից, Տէր, ես մի մեղաւոր մարդ եմ: Դրանով Պետրոսն ինչ էր պահանջում, Յիսուսից: Ինչո՞ւ պիտի հեռու կենար: — Միթէ Պետրոսը նրան չէր սիրում: — Ուրեմն ինչո՞ւ էր պահանջում, որ հեռու կենար: — Պատճառը նա ինքն ասեց: Իրան ինչպէս էր անոււանում. (մեղաւոր): Դրանով ինչ էր ուղում ասել: (Ես արժանի չեմ, որ մօտիկ կանգնես և ինձ հետ խօսես):

Յիսուսն ինչ կըպատասխանէր այդ խօսքերին: — Միթէ Պետրոսին այնպիսի վատ մարդ էր համարում, որ մօտը կանգնել չուզենար: Ազգբում Պետրոսն ինչ տեսակ էր, (ուշակալ, կամակատար): Ինչո՞վ ցոյց տուեց այդ: Երբ ցերեկով ուռկան զցեց: Զկան առատ որսից ետ ինչպէս էր: (Երախտագէտ, խոնարհ): Ուրեմն Յիսուսն ինչպէս կարծիք կունենար Պետրոսի մասին: (Սա վատ մարդ չէ, ինձ դուք է գալիս): Այդ ժամանակ

Յիսուսի մտքով մի բան անցաւ. մտածեց, «Երբ Պետրոսն այսպիսի լաւ սիրա ունի, աւելի լաւ է միշտ հետո լինի. նա կըդառնայ իմ աշակերտը»: Յիսուսն ի՞նչ կարիք ունէր աշակերտների. (կարող էր պատահել, որ շուտ մեռնէր: Պետրոսի հետ ուրիշ աշակերտներ էին, որ ունենար, իրա տեղ նրանք կըքարողին): Յիսուսն ի՞նչպէս կասէր այդ բանը Պետրոսին: Միթէ Պետրոսը Յիսուսի կամքը կըկատարէր: — Այժմ նա ի՞նչպէս կապացուցանէր, որ իրա երախտագիտութիւնը անկեղծ է: (Նրա ետևից կը գնար), — Պետրոսը և իրա ընկեր ձկնորսները նաւակները ցամաք հասցըրին, ամեն ի՞նչ թողին ու գնացին Յիսուսի ետնից: — Ի՞նչնէ: — Յիսուսի քարոզած խօսքերը նրանց դուր էին եկել: — Պետրոսն ու ընկերները ի՞նչ դառնան: Յիսուսի աշակերտներ, նրա խօսքին հետևողներ:

Ամփոփումն. Զկան առատ որսն ի՞նչպէս ներգործեց Պետրոսի վրայ: — Ի՞նչ ասեց նա: — Ի՞նչպէս միսիթարեց նրան Յիսուսը: — Ձկնորսներից ի՞նչ դուրս եկան:

Երեխէք, ձեզ մօտ նոյնպէս գալիս է Տէր Յիսուսը: — Ի՞նչ է կամենում ձեզանից: — Աշակերտներ շինել, որ նրան հետևենք: — Ի՞նչ տեսակ տղէք կըդառնաք, եթէ նրան հետևէք: Այնպէս խոնարհ տղէք, ի՞նչպէս 12 տարեկան Յիսուսն էր:

14. ՀԻՆԳ ՀԱԶԱՐ ՀՈԳՈՒ ԿԵՐԱԿՐԵԼ. (Մատ. ԺԴ. 13—21)

Նպ. Յիսուսը հասակն առած ժամանակ ի՞նչպէս էր վերաբերում դէպի կարօտեալները.

Ի՞նչպէս վարուած կըլինի կարիք ունեցողների հետ: — Մենք արդէն գիտենք, թէ Աստուած նրան ի՞նչի՞ համար էր աշխարհ ուղարկել: — Նա ի՞նչ պիտի սովորցէր մարդկանց: — Մարդիկ մէկ մէկու հետ ի՞նչպէս

պիտի լինէին: — Բայց միթէ Յիսուսը միայն ուրիշներին պիտի խրատէր, որ նրանք իրար եղար պէս սիրեն: Ինքն ի՞նչպէս եղած կըլինի նրանց հետ: — Մասաւանդ ի՞նչպէս վարուած կըլինի խեղճերի, կարօտեալների հետ: — Ինքն աղքատ էր ծնուած, աղքատներին ևս կարեկցում էր: Մի անգամ Յիսուսը գնացել էր ամայի, անապատ տեղ, որ անչափ խօսելուց ու քարոզելուց հանգստանայ, բայց ժողովուրդը ետնից գնացել էր մինչև այնտեղ, որովհետև նրա քարոզութիւնը լսելուց չէր կշատանում: Ուրիշը նրա տեղ ի՞նչ կասէր ժողովրդին: (Քիչ էլ թող ես հանգստանամ, յոգնած եմ, ինձ շունչ քաշել է հարկաւոր): Արդեօք այսպէս է ասել Յիսուսը: — Հակառակ իրա յոգնածութեան ի՞նչ արած կըլինի: — Ի՞նչնու այսպէս վարուած կըլինի: — Ի՞նչն, էր ստիպում նրան թէ այդպէս վարուիր, (սէրը գէպի աղքատները, գէպի կարօտեալները): — Այսպէս քարոզելով սովորցրեց Յիսուսը մինչև մութն ընկաւ և ընթրիք ուտելու ժամանակը հասաւ:

Ընթրիքի մասին ամեննին չէր մտածել: — Նա միայն ի՞նչի՞ վրայ էր մտածում: — Իրա քարոզներով լսողների սրտերը ուզգելու, լաւացնելու վրայ: — Միթէ ժողովուրդը ընթրիք ուտելու վրայ մտածել էր: Ոչ նրանը յափշտակւած էին Յիսուսի խօսքերով: — Բայց աշակերտները մտածում էին և սկսեցին իրանք իրանց ժողովրդի համար հոգս քաշել: Ի՞նչի՞ վրայ պիտի հոգս քաշէին: — Ո՞րտեղ էին գտնուում այնքան հոգիքը Յիսուսի հետ: — Ո՞րքան ժամանակ էին նրանք այստեղ: — Բոլորովին աղքատները կարող էին անապատում ուտելու բան ճարել: — Ի՞նչնու ոչ: (Քիչ կանաչ խոտից աւելի ուրիշ բան չկար անապատում): Բազմութեան մէջ հաց չունեցողները կարող էին մօտիկ գիւղերը հացթուխի մօտ գնալ: — Առաջին՝ փող չունէին. երկրորդ՝ այժմեան պէս հացթուխ չըկար այն ժամանակ: Մեր գիւղերում ամեն մի տուն թխում է իրա համար:

Յիսուսի աշակերտներն ունէին մի քանի հաց և մի երկու ձուկ։ Այս պաշարն ինչու էին վերցրել։ Գիտէին, որ իրանց ուսուցիչն անապատում մնալու է։—Ուրեմն հեմ համար էին վերցրել այդ ուտելիքը։—Երբ ժողովրդի մեծ մասը հաց չունէր, միթէ Յիսուսն ու աշակերտները կընստէին ու հաց կուտէին։—Յիսուսն միշտ ի՞նչպէս էր սովորցրել։ Որ մարդիկ իրար սիրեն քրոջ ու եղբօր պէս։—Այդ պատճառով այժմ ի՞նչ կանէր։ Իրա ունեցած հացն ու ձուկը ժողովրդին կըտար։—Բայց միթէ այդ ըիչ ուտելիքը բոլորին բաւական կըլինէր։—Եթէ բաժանէր, ամեն մինին ի՞նչքան կընկնէր։—Յիսուսի օրինակից ի՞նչ կըսովորէին բազմութեան մէջ պաշար ունեցողները։ Նրանք էլ չունեցողներին կը բաժանէին։ Յիսուսը աղօթքով գիմեց իրա երկնաւոր չօրը, օրհնեց ըիչ հացն ու ձուկը ու աշակերտներին տալով պատուիրեց բաժանել։ Յիսուսի քարոզի ներգործութեան տակ ամենն էլ դառել էին քոյր ու եղբօր պէս սիրով, շատ ուտելիք ունեցողը տալիս էր չունեցողին։ Հինգ հազար հոգին ամենն էլ կըշտացան ու դեռ տելի կտորտանք էլ մնաց։

Ամփոփումն. Դէպի հեր գնաց Յիսուս։— Ի՞նչու համար։—Բայց մվքեր գնացին նրա ետնից։—Բազմութիւնը նրանից ի՞նչ էր ուղում։—Ի՞նչ արեց Յիսուս։—Ժողովրդի մեծ մասն ի՞նչ գրութեան մէջ էր երեկոյին։—Միայն հեմ համար էին ուտելիքի հոգս քաշել աշակերտները։—Բայց Յիսուսն ի՞նչ պատուիրեց նրանց։—Յիսուսի խօսքն ու օրինակը ի՞նչ ներգործութիւն էր արել բազմութեան վրայ։—Ի՞նչպէս կըշտացան ամենը։

Գիւղի մէջ հարժւատներն են շատ թէ աղքատները։—Անապատ գնացող բազմութեան մէջ պաշար ունեցողներ կըլինէին թէ չէ։ Ինչու էին վերցրել։—Որ քաղցից չընեղանան։—Գիւղի աղքատները ե՞րբ չեն սովից մեռնիլ։—Երբ հարեան հարուստը նրան եղբօր պէս սիրի ու օգնի ուտելիք տալով։—Անապատի մէջ պա-

շար ունեցողներն ի՞նչ արին։—Զունեցող բազմութեան տուին։—Նրանց սրտերն ի՞նչպէս էին դառել։ Բառի։ Ո՞վ էր այդպէս դարձրել։—Յիսուս իրա քարոզներով ու օրինակով։— Յիսուսին ով էր ուղարկել, որ այդպիսի լու բան անի։ Աստուած։ Ուրեմն բազմութեանը կերակրողն ով էր։ Հայր Աստուած։ Ապա կրկնենք այն աղօթքը, որով Յիսուս գիմում էր իրա երկնաւոր Հօրը։ «Երկնաւոր Հայր, սուրբ լինի քո անունը և այն»։ Այժմ սովորենք այս կարճ աղօթքը։ «Ամենի աչքերը քեզ են ուղղած, ով Աստուած, դու ես նրանց կերակրում իրա ժամանակ, բաց ես անում ձեռդ և լիացնում բոլորին քո ողորմութիւնով։»

15. ՅԱՅՐՈՍԻ ԴՈՒՍՏԾՐԸ. (Մարկ. Ե. 22—24, 35—43)։

Նպ. Ի՞նչպէս մի հայր իրա հիւանդ աղջկայ համար Յիսուսի մօտ օգնութեան վազեց։

1. Կտոր. Ի՞նչ են անում ձեր ծնողները, երբ դուք հիւանդ էք։—Երբ նրանք ձեզ օգնել չեն կարողանում, այն ժամանակ ի՞նչ են անում։—Ո՞ւմ են կանչում։—Բժիշկն ի՞նչ է անում հիւանդին։—Միթէ բժիշկը կարող է միշտ օգնել։—Ծնողների սիրան ի՞նչպէս է լինում, երբ նրանց երեխան հիւանդ է։—Ի՞նչու նրանք վախի ու երկիւղի մէջ են։—Ի՞նչից են վախենում, երբ զաւակը ծանը հիւանդ է։— Ահա, հէնց այդպիսի մի տխուր հայր, Յալրոս անունով, եկաւ Յիսուսի մօտ։ Ի՞նչ էր պատահել։—Յայրոսը Յիսուսի վրայ ի՞նչ յոյս ունի։—Ի՞նչ խնդրած կըլինի նրան։—Ո՞ւր պիտի գնայ Յիսուս։—Ի՞նչ պիտի անի։— Արդեօք Յիսուսը կը գնայ թէչէ։—Ի՞նչու էք կարծում, որ կըդնայ։—Մտաբերեցէք, Յիսուսը նեղացածներին, կարիք ունեցողներին ի՞նչպէս էր վերաբերում։

Ամփոփումն. Յայրոս անունով մի մարդ աղջիկ

ունէր, որ շատ ծանր հիւանդ էր: Բայց Յայրոսը լսել էր, որ Յիսուսը նեղութեան մէջ գտնուող մարդկանց օգնում է. այդ պատճառով վազեց նրա մօտ և ինսդրեց. «արի և օգնիր իմ աղջկան, նա շատ ծանր հիւանդ է, վախենում ենք, թէ մեռնի»: Երբ Յիսուսը մարդու վիշտը տեսաւ, իսկոյն կամք տուեց օգնելու. երկուվ գնացին դէպի Յայրոսի առն:

2. Կտոր. Բայց երբ հայրը Յիսուսի մօտ էր զընում, նրա տանը պատահեց այն, օրից վախենում էր: Նա ինչից էր վախեցել: — Աղջիկը վախճանուել էր: — Տանը եղող մարդիկ ինչ կանէին: — Ո՞ւմ մօտ մարդ կուզարկէին: — Յայրոսին ինչ կասէին: — Մահուան լուրը հօր վրայ ինչ տպաւութիւն կանէր: — Գուցէ նա Յիսուսին մի բան ասէր: — Յիսուսն ինչ կանէր: — Ինչու էր կարծում, որ նա ետ է դարձել: — Բայց Յիսուսը ետ չըդպաւ, նա յոյսը գրել էր երկնաւոր հօր վրայ, Յայրոսին մխիթարեց, սիրտ տուեց: Ի՞նչ ասած կըլինէր նրան: — Նա ասեց, «մի վախենալ, հաւատա, որ ողբած Աստուածը քեզ կարող է օգնել»: Ո՞ւր կընային: Ննջեցեալի տանը մեմ տեսան նրանք: — Այնտեղ ինչ էին անում ժողովուածները: — Յիսուսն ինչ կասէր սուգ անողներին: — Նա ասեց. «ինչու էք սուլ ու շիւան սարքել: Երեխան մեռած չէ, այլ քնած է»: Յետոյ տուն մտաւ, ուր աղջիկը պարկած էր, բռնեց նրա ձեռը և ասեց. «աղջիկ, քեզ եմ ասում, վեր կաց»: Եւ գիտէ՞ ինչ պատահեց: — Այո, չափազանց ուրախացան ծնողները: — Ի՞նչ կանէին նրանք: — Ծնորհակալութիւն արին Յիսուսին և նրան ուղարկող Աստծուն:

Ամփոփամն. Ի՞նչ լուր տուին հօրը ճանապարհին: — Ի՞նչ ասեց Յիսուսը նրան: — Ժողովուրդն ինչ էր անում ննջեցեալի տանը: — Ի՞նչ ասեց նրանց Յիսուս: — Ի՞նչպէս եղաւ աղջիկը:

Մարդիկ իրարից բաժանուելիս իրար ինչ են ասում: — Յտեսութիւն, այսինքն մինչև իրար տեսնելը:

— Մեր ազգականներից մէկը որ մեռնում է, նրա հոգին, ուր է գնում: — Աստծու մօտ: — Մենք կարմղ ենք նրան տեսնել: — Ե՞րբ: — Քնած ժամանակ տեսնում ենք երազի մէջ, իսկ մեռնելուց ետ երկնքում: — Ուրեմն կարիք ունենք մահից վախենալու: — Բարեկամին հեռու աշխարհ ճանապարհ դնելիս ինչ ենք ասում: — Յտեսութիւն: — Միրելի բարեկամին կամ ծնողին վերջին բարել տալիս ինչ պիտի ասենք:

16. ՈՂՈՐՄԱԾ ՍԱՄԱՐԱՑԻ (Ղուկ. Ժ. 30—35).

Նպ, Յիսուսը մի առակ պատմեց, որ ժողովրդին ցոյց տայ, թէ ինչպէս պիտի կարեկցել հրար:

Յիսուսն ինքը ինչպէս էր վերաբերում թշուառներին, խեղճերին: — Ի՞նչպիսի կարիք ունեցողներին էր օգնել: — Ի՞նչպէս էր օգնել: — Ի՞նչ էր նրան ստիպում որ օգնի: — Այժմ Յիսուսը ժողովրդին ինչ էր կամենում ասել: Ի՞նչպէս պիտի վերաբերուէին դէպի թշշուառները: — Ի՞նչու պիտի նրանց օգնէին: — Ի՞նչպէս պիտի լինէին մարդիկ իրար ենտ: — Ո՞վ է այս բանը մեզ սովորցրել: — Յիսուսն ինչ որ ուսուցանում էր խօսքով, արդեօք գործով էլ կատարնում էր թէ չէ: — Պատմեմ ձեզ այն առակը, որ Յիսուս մի ժամանակ պատմել է իրա ունկնդիրներին:

1. Կտոր. Մի մարդ երուսաղէմից գնում էր երիքով: Ճանապարհն անցնում էր մի ամայի, անմարդաբնակ տեղով: Այնտեղ ոչ քաղաք կար և ոչ գիւղ: Շատ քիչ մարդիկ էին անց ու գարձ անում այդ ճանապարհով: Դրա հակառակ կային շատ գարաններ ու ծածուկ անկիւններ գողերի ու աւազակների. համար: — Ուրեմն ենշտ կըլինէր այդ ճանապարհով անցնելը: — Ի՞նչպիսի մարդկանց են ասում աւազակներ: — Ի՞նչպիսի կերպարանք ունեն: — Նրանք

ի՞նչ են կամենում մարդկանցից: — Երբ այն մարդը մենակ ճանապարհով գնում էր, յանկարծ աւազակները տռաջը կտրեցին: Ճամբորդի սիրտն ի՞նչ կարող էր լինել: — Աւազակներն ի՞նչ ասած կըլինեն: — Միթէ այդ մարդն իրա ունեցած չունեցածը առանց ընդդմութեան նրանց կըտար: — Եթէ նա իրան պաշտպանէր, աւազակներն ի՞նչ կանէին: — Նրանք խփեցին նրան, վէր գցեցին, ինչ ունէր չունէր խլեցին և թողին կիսամեռ դրութեան մէջ:

Ամփոփումն. Ի՞նչ ճանապարհով էր գնում այն մարդը: — Ո՞վքեր գուրս եկան նրա դէմ: — Ի՞նչ արին աւազակները նրան:

2. Կտոր. Ի՞նչ կըլինէր թշուառի վիճակը: — Ի՞նչ կարող էր պատահել, եթէ երկար ժամանակ մնար իրա արիւնի մէջ լողալիս: — Նա ի՞նչ կըմտածէր կամ ի՞նչ կըցանկանար: — Նրա ցանկութիւնը կատարուեց: Պատահմամբ անցկացաւ այդտեղով մի քահանայ, որ երտսաղէմի տաճարում պաշտօնը կատարած տուն էր վերագանում: — Վերաւոր մարդն ի՞նչ յոյս կունենար, երբ հոգևորականի անցկենալը տեսաւ: — Ի՞նչ կասէր նրան, եթէ կարենար խօսել: — Քահանան ի՞նչ էր անելու: — Ի՞նչու էք կարծում, որ նա վերաւորին կօգնէր: — Բայց գժբաղդաբար դուք սխալ էք կարծել, քահանան մտիկ արեց խեղձի վրայ, բայց առանց օգնելու անցկացաւ գնաց: — Ձեզ համար քիչ անհասկանալի է, թէ ի՞նչպէս կարող է քահանան այդպէս քարասիրտ լինել: — Մտաբերեցէք թէ ի՞նչպիսի տեղ էր վէր ընկած թշուառ մարդը: Քահանան ի՞նչ բանից կարող էր վախենալ: — Ի՞նքն իրան ի՞նչ ասած կըլինի: — Կըկարծէր թէ մօտիկ հվաքեր կան: — Ի՞նչ կարող էր նրան պատահել, եթէ այդտեղ երկար կանգ առնէր: — Ուստի աւելի լաւ համարեց ի՞նչ անել: — Միթէ լաւ բան արեց: — Ի՞նչ կանէիք դուք, եթէ նրա տեղը լինէիք: — Քահանան հեռանալուց ետ այդ ճանապարհով եկաւ, տաճարի մէջ

ծառայող մի ղետացի: — Թշուառ վիրաւորը դարձեալ ի՞նչ կանցկացնէր մտքով: — Ի՞նչ կարող էր անել տաճարի սպասաւորը: — Ի՞նչը կարող էր ստիպել նրան օգնելու: — Ի՞նչը նրան այդ անելուց ետ կըպահէր: — Նա էլ տուեց, անցկացաւ: Նրա սրտի մէջ կարեկցութիւնն էր զօրեղ թէ ուրիշ բան:

Ամփոփումն. Ո՞վ անցկացաւ այդ ճանապարհով: — Ի՞նչ յոյս ունէր վիրաւորը: — Բայց ի՞նչ արեց քահանան: — Ի՞նչու օգնեց նա: — Յետոյ ո՞վ անցկացաւ: — Ի՞նչ արեց ղետացին:

3. Կտոր. Միթէ վիրաւորի համար այլ ևս ոչ մի յոյս չըկար: — Ո՞չ կար: Այդ ճանապարհով էլի մի մարդ անցկացաւ: Նա նստած էր մի աւանակի թէ ջորու վրայ: Բայց երբ նա մօտեցաւ, վիրաւորը նկատեց որ գրաստաւորը մի սամարացի է: Սամարացիք այն տեսակ ժողովուրդ էին, որոնց հրէաները ատելով ատում էին: — Խեղճ վիրաւորը ի՞նչ մտածած կըլինէր: — Այժմ ի՞նչու օգնութեան յոյս չունէր: — Բայց նա սիալուած էր: Սամարացին այնպէս չէր, ինչպէս առաջին երկուսը: — Քահանան և ղետացին ի՞նչպէս էին եղել: — Սամարացին ի՞նչպէս կըլինէր: — Ի՞նչ արած կըլինի: — Նա մօտ գնաց, վէրքը փաթաթեց, դրեց իրա գրաստի վրայ և տարաւ մի պանդոկ, խնամեց նրան: — Միթէ սամարացին աւազակներից չըր վախենում: — Նրան նոյնպէս ի՞նչ կարող էին անել: — Ի՞նչու էր վիրաւորի խնամքն իրա վրայ առնում: — Բայց նա աւելին արեց: Երբ հետեւեալ օրն իրա ճանապարհը պիտի շարունակէր, խեղճ հիւանդի մասին դարձեալ հոգաց: — Պանդոկապետին ի՞նչ ասած կըլինի: — Բայց կարելի է պանդոկապետը ցանկութիւն չունէր անծանօթ հիւանդի ցաւը քաշելու: — Այն ժամանակ սամարացին նրան փող տռաւեց և ասեց. «անհոգ կաց, երբ վերադարձին տեսնեմ, որ աւելորդ ծախսել ես, քեզ կըվճարեմ»: — Պանդոկապետը ի՞նչ արած կըլինի:

Ամփոփումն. Ո՞վ եկաւ զետացուց ետը:—Արդեօք սամարացին էլ տուեց, անցկացմաւ:—Ի՞նչո՞ւ ոչ:—Որովհետև ողորմած սիրտ ունէր: — Ի՞նչ արեց նա:—Ո՞ւր տարաւ նա թշուառին:—Պանդոկապետի հետ ի՞նչ պայման դրեց:

Յիսուսն ինչո՞ւ այս առակը իրա հայրենակիցներին պատմեց:—Ո՞րին չըպիտի նմանուեն:—Ո՞րից նըրանք օրինակ պիտի վերցնեն:—Միթէ այս գեղեցիկ առակը միայն հրէաների համար է ասած:—Մենք ի՞նչ կարող ենք այս առակից ուսանել:—Ի՞նչով կարող ենք օգնութեան հասնել: Սովորենք այս խրատը. «սիրիր քո ընկերին, ի՞նչպէս քո անձը»:

17. ՅԻՍՈՒԻՍ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐ(Մարկ. Ժ. 13—16).

Նալ. Ի՞նչպէս էր վերաբերում Յիսուս դէպի մանուկները.

1. Կտոր. Ի՞նչպէս էր վերաբերում դէպի հասակաւոր մարդիկ: — Ի՞նչպէս վերաբերուեց դէպի քաղցածները: (Կշտացրեց): — Ի՞նչպէս վարուեց վշտահար հօր հետ: (Աղջկան առողջացրեց): — Ուրեմն ի՞նչպէս կըլինէր նու դէպի մանուկները: — Արդեօք նրանց էլ Յիսուս քարողիկ է ինչպէս մեծերին: — Տէրտէրը հւմ համար է քարողում եկեղեցում: — Ի՞նչո՞ւ գուք էլ չէք գնում քարող լսելու: (Որովհետև դեռ փոքր ենք): — Ուրեմն Յիսուս փոքր երեխանց քարողած կըլինի: — Ի՞նչո՞ւ ոչ: — Բայց մի անգամ ժողովլսդից շատերն իրանց մանուկներին բերին նրա մօտ: Ի՞նչո՞ւ բերած կըլինին: — Միթէ նրա համար, որ Յիսուսը նրանց ուսուցանի: — Ոչ, նա պիտի ձեռը գլխներին դնէր և նրանց համար աղօթէր: Նա պիտի երկնաւոր Հօրը խնդրէր, որ մանուկները ժամանակով բարի, աղնիւ մարդիկ դառնային: — Մարդիկն ու կանայք ի՞նչո՞ւ էին խնդրում տէր Յիսուսին, որ իրանց մանուկների համար աղօթի:

Միթէ նրանք չէին կարող իրանց որդոց բարի մարդիկ դարձնել:—Ծնողների բանը երկրագործի ու այգեպանի նման է, երկուան էլ ցանում ու տնկում են, բայց կարող են նոյնպէս բացնել:—Ո՞վ է ցանքը բացնում:—Ահա այդպէս է ծնողների աշխատանքը զաւակների համար:—Ո՞վ պիտի իրա օրհնութիւնը տայ, որ ծնողների աշխատանքը զուր: չըկորչի: — Ուստի ի՞նչ էին ցանկանում ծնողները Յիսուսից:—Ի՞նչո՞ւ ցանկանում էին, որ անպատճառ նա աղօթի մանուկների համար: — Բայց Յիսուսի աշակերտները, որ միշտ նրա հետ էին, բանն ուրիշ կերպ հասկացան: Ի՞նչ կարծած կըլինեն, երբ կըտեսնեն որ ժողովրդից շատերն իրանց փոքր երեխանց նրա մօտ են բերում:—Ի՞նչ են անում մանը երեխէրը, երբ անծանօթ մարդիկ են տեսնում: — Ի՞նչ են անում, երբ նրանց չեն թողնում այնպէս շարժուել, ինչպէս իրանք են ուզում:—Ո՞ւմ են խանգարում նրանը իրանց ճիշ ու աղաղակով:—Ճինց այս բանից էին վախենում աշակերտները. ուստի բարկացան երեխաներ բերողների վրայ ու կոպիտ կերպով վարուեցին:—Ի՞նչ ասած կըլինեն: (Ի՞նչ գործ ունեն այստեղ մանը երեխէրը: Նրանք ամենեին բան չեն հասկանում տէր Յիսուսի քարողածներից: Նրանք կըսկեն բղաւել, և խանգարել բարեպաշտ ունկնդիրներին. շուտով հեռացրէք այստեղից): Այս կոշտ խօսքերն ի՞նչպէս աղդած կըլինեն ծնողների վրայ:

Ամփոփումն. Ո՞ւմ բերին Յիսուսի մօտ: — Ի՞նչ էին կամենում ծնողները Յիսուսից: — Բայց աշակերտներն ի՞նչ արին: — Ի՞նչ խօսքեր ասին ծնողներին: — Ի՞նչ տպաւորութիւն արեց այդ վարմունքը ծնողների վրայ:

2. Կտոր. Արդեօք Յիսուսն էլ այնպէս էր մտածում, ինչպէս իրա աշակերտները: — Մինչև այդ բոպէն ի՞նչպէս էր եղել նա այն մարդկանց հետ, որոնք նըշանից որեւէ բան էին կամենում: — Արդեօք նա ծնողների ի՞նդիրը կըմերժէր: — Արդեօք նա համաձայն էր,

որ աշակերտները ժողովրդի հետ այլպէս կոշտ էին վարուում:—Յիսուս բարկացաւ աշակերտների վրայ և ասեց. «Թողէք, որ մանուկներն ինձ մօտ գան, մի՞ք արդելլ նրանց. որովհետև այլպիսիներին է Աստծու արքայութիւնը»: Եւ յետոյ Յիսուսն ի՞նչ արած կըլինի:—Ծնողներն ի՞նչ էին ցանկացել:—Այդ ցանկութիւնը կատարեց Յիսուսը:—Ուրեմն ի՞նչ արեց: Նա գրկեց մանուկներին, ձեռը գրեց նրանց գլխներին և օրհնեց: Ի՞նչպէս աղօթած կըլինի նա իրա երկնաւոր Հօրը:—Ծնողների սիրտն ի՞նչպէս կըլինէր այս տեսնելիս:

Ամփոփումն. Ո՞վ էր աշակերտների խօսքերը լսել:—Յիսուսն ի՞նչպէս ընդունեց աշակերտների վարմունքը:—Ի՞նչ ասեց նա:—Ի՞նչ արեց յետոյ:—Ծնողները մանուկների հետ ի՞նչ տպաւորութեան տակ հեռացան նրանից:

Արդեօք ծնողները շուտ կըմուանային Յիսուսի օրհնելը մանուկներին:—Ո՞ւս նրանք յետոյ այդ բանը շատ անգամ պատմած կըլինեն:—Միթէ իրանց զաւակներին միայն այս պատմած կըլինեն:—Մանուկներն ում օրինակին պիտի հետեւէին:—Եթէ մանուկները Յիսուսին սրտանց սիրեն, նրա օրինակին միշտ հետեւն և նրա աշակերտները դառնան, մահից ետ ուր կըգնան:

Զեզ էլ, երեխէք, ձեր ծնողները տարել են Յիսուսի մօտ, որ ձեզ օրհնի:—Երբ նոր էիք ծնուել, ձեզ տարել են եկեղեցի. Յիսուսի վոխանորդը՝ որ աէրտէրն է՝ ձեզ նրա անունով օրհնել է, ձեր բերանը մասն է դրել:—Երբ խօսել կարողացաք, ովք պատմեց ձեզ Յիսուսի մասին:—Այժմ այնքան մեծ էք, որ կարող էք աղօթք սովորել և ինքներդ շնորհակալութիւն անել Յիսուսին: Լսէք.—«Գոհ ենք քեզանից, Քրիստոս Աստուած, որ արժանացրիր մեզ ուսումն ստանալու, օրնիր մեր մեծաւորներին, ծնողներին և ուսուցիչներին, որոնք առաջնորդում են մեզ դէպի բարին, մեղ էլ ոյժ և կարողութիւն տուր, որ մեր ուսումը շարունակինք»:

(Հարցեր տալով մաս մաս կրկնել մինչև բերան սերտելը):

18. ՅիՍՈՒԻՍԻ ԵՐՈՒԱԾՈՂԵՄ ՄՏՆԵԼԸ (Մարկ. ԺԱ. 1 11. Մատ. ԻԱ. 14—17).

Նպ. Ինչպէս Յիսուս վերջին անգամ իրամահից առաջ Զատկի տօնին Երուաղէմ գնաց.

Մենք արդէն գիտենք թէ ի՞նչպէս Յիսուսը ծնողների հետ Երուսաղէմ գնաց:—Այն ժամանակ քանի տարեկան էր Յիսուս:—Ո՞ր տեղն էր նրան ամօնից շատ դուր եկել:—Այն ժամանակամիջոցում ի՞նչ ու ի՞նչ է արել:—Այժմ իրկրորդ անգամ գնալու մասին ենք ուզում խօսել:—Այդ ժամանակամիջոցում ի՞նչ է արել: (Քարողի, քաղցածների կերակրել, բժշկել, մեռածին կենդանացրել):—Ո՞վքեր են գնում նրա հետ դէպի տօնախմբութեան քաղաքը: (Աշակերտները):—Էլի հվեր:—Ի՞նչո՞ւ Զատկի ուխտաւորները Յիսուսի հետ միատեղ էին գնում. (որովհետև երեկելի անձնաւորութիւն է):—Ի՞նչ տեսակ ուխտագնացութիւն կըլինէր:—Ի՞նչ տրամադրութեան մէջ կըլինէր այն բազմութիւնը, որ Յիսուսի հետ գնում էր:—Բայց լսեցէք թէ ճանապարհին ի՞նչ պատահեց: Երբ ուխտաւորները հասան մի գիւղի, որ Երուսաղէմին բոլորովին մօտ էր, Յիսուսը աշակերտներին ուղարկեց, որ այստեղից հեծնելու մի անսուն բերեն:—Ի՞նչ անսասոն կըլինէր դա: Յիշեցէք թէ սամարացին ինչի վրայ էր նստած: (Զորի, աւանակ, ձիռւ քուսակ):—Յիսուսն ի՞նչո՞ւ էր կամհնում հեծած մտնի տօնախմբութեան քաղաքը. (Ժողովուրդն աւելի լաւ կըտեսնէր նրան): Աշակերտները բերին նրան մի լաւ կամեցան Յիսուսին պատուի: Այս բանը դուր եկաւ ժողովրդին, նրանք նոյնպէս կամեցան Յիսուսին պատուի: Ի՞նչով կարող էին նրան պատիւ տալ:—Հարսանիքի

Ժամանակ ի՞նչպէս են պատւում նորապսակներին, կամ երբ մեծ մարդ է մտնում քաղաք: (Ծաղիկներ են շաղ տալիս ճանապարհին): —Ահա, հէնց այդպէս էլ ուզում էին մարդիկ անել, բայց որովհետև ծաղիկներ չունէին, արմաւենու ոստեր կտրտեցին և շաղ տուին ճանապարհի վրայ: Այդ բանը թաղման ժամանակ էլ են անում: —Մարդիկ ինչո՞ւ էին այդպէս անում: —Ո՞ւմ համար էր այս ամենը: —Ուխտաւորների ցնծութիւնը հետրզիետէ շատանում էր: Վերջապէս աղաղակեցին նրանք բարձր, ինչ որ սրտներն ուզեց: —Ի՞նչ աղաղակած կը լինեն: —Ի՞նչ հն աղաղակում մեղ մօտ մարդիկ, երբ մէկին պատուել են ուզում: —Ի՞նչ էր աղաղակում երբ վեհափառ փողոցով անցնում է: —Կամ եթէ մեր թագաւորը Պետքը որեւէ փողոցով անցնելիս լինի, ի՞նչ կաղաղակի ժողովուրդը: —Արդպէս էլ աղաղակում էին այն ժամանակ մարդիկ: Բայց նրանք «կեցցէ» կամ «ուռառ» ասելու փոխարէն իրանց լեզուով աղաղակում էին «ովսաննա»: Նրանք ասում էին. «ովսաննա, օրհնեալ լինի նա, որ գալիս է Տիրոջ անունով, Ովսաննա Բարձրեալին»:

Ամփոփումն. Ո՞ւր գնաց Յիսուս: —Ո՞վքեր գնացին նրա հետ: —Ի՞նչո՞ւ միաբանուեցին նրան այնքան մարդիկ: —Ի՞նչ արեց Յիսուս Երուսաղէմի մօտիկ զիւղում: —Ի՞նչպէս պատուեցին աշակերտները նրան: —Ի՞նչպէս պատուեց նրա հետ գնացող բազմութիւնը:

Այսպէս մտաւ Յիսուսը Երուսաղէմ: —Ի՞նչ կասէին մայրաքաղաքի բնակիչները այդ հանդիսաւոր մուտքին: —Մթէ նրանք Յիսուսին ճանաչելիս կըլինէին: —Նրանից տեղեկութիւն չունեցողները ի՞նչ հարցրած կըլինեն: —Աշակերտները և ուխտաւոր ժողովուրդն ի՞նչ պատասխանած կըլինեն: —Նրանք ասում էին «սա Յիսուսն է, Նազարէթի մարգարէն»: —Երուսաղէմի փողոցներում հասակաւորների հետ դարձեալ ովքեր այդ հանդիսին մասնակցած կըլինեն: —Մեղ մօտ եթէ

փողոցում զուռնա կամ զինուորական փող փչելով գընում են, ովքեր են տներից գուրս վազում: —Մանուկներն ի՞նչպէս աղաղակած կըլինեն: —Երուսաղէմ մտած հանդէսը դէպի մուր կըշարժուէր: —12 տարեկան Յիսուսին որտեղ ամենից շատ գուր եկաւ: —Յիսուսն ի՞նչ էր փնտրում տաճարում: —Ի՞նչ արեց նա, երբ առաջին անգամ ոտ զրեց: —Ի՞նչ պիտի անի այսօր. (քառողել, հիւանդներին բուժել):

Ամփոփումն. Ի՞նչպէս էին վերաբերում Երուսաղէմի բնակիչները: —Ի՞նչպէս էին հարցնում նրանք: —Ի՞նչպէս էր պատասխանում բազմութիւնը: —Ո՞վքեր էին գնում Յիսուսի ետևից: —Մանուկներն ի՞նչպէս էին աղաղակում: —Դէպի մուր էր շարժում հանդէսը: —Յիսուսն ի՞նչ էր անում տաճարում:

Երուսաղէմ մտնելու յիշատակը հանդէսով ամեն տարի կատարում ենք մեր եկեղեցիներում: —Ի՞նչպէս է կոչում այդ օրը: —Ի՞նչո՞ւ ենք Ծառզարդար կամ Ծաղկազարդ ասում: —Ե՞րբ է գալիս Ծաղկաղարդի տօնը: —Ի՞նչ է պատահում այդ օրը եկեղեցում. (ուրի ոստեր են բաժանում, նշանուած աղջկերանց ընծաներ են տալիս, բոլոր օրիորդները խոստովանւում և հազրութում են): —Այդպիսով ի՞նչ է լինում: —Յիսուս մուտք է գործում նրանց սրտի մէջ, երբ խոստովանել են իրանց սխալները և տէրտէրի քարոզը ուշագրութեամբ լսել: —Բայց Յիսուսը կը կամենայ մանուկների սրտի մէջ էլ մտնել, միայն ամեն մի սրտի մէջ դուրեկան չի լինի ապրել: —Ի՞նչպէս պիտի լինի սիրաը: —Ի՞նչ չըպիտի լինի նրա մէջ, (հայհոյանք, նախանձ և այլն): —Մաքուր սրտով մանուկները աղօթում են: Դուք գիտէք «Հայր մեր երկնաւոր», կըլինեցէք: Դրաշարունակութիւնն ահա այսպէս է. «Իսկ ես ի՞նչ ունեմ, որ ինչ տամ քեզի, Առջեկ կըլինեմ, կենամ ազօթքի, Շնորքդ տուր ի՞նձ, որ ծնողներիս, Ուսուցիչներիս և իմ մեծերիս լինեմ սիրելի, իսկ քեզ հաճելի»:

19. ՅիՍՈՒԽԻ ԽԱԶԵԼՈՒԹԻՒՆԸ, (Ղուկ. ԻԳ.
Մարկ. ԺԵ. Յով. ԺԹ. Մատ. ԻՒ.

Նպ. Ինչպէս տէր Յիսուսն սպանուեց իրա
թշնամիներից.

Ի՞նչպէս կարելի է, որ Յիսուսի պէս մարդուն
սպանում են: — Մեղ մօտ ի՞նչ տեսակ մարդկանց են
սպանում: — Ի՞նչ ծանր յանցանք են գործած լինում,
որ մահուան՝ պատժի են արժանանում: — Միթէ կարելի
է մտածել, որ Յիսուսն այդ տեսակ յանցանք գործած
լինի: — Միշտ ի՞նչպէս էր վերաբերում դէպի մարդկի:
— Չնայած այդ բանին, նրան մահով պատժեցին: — Եւ-
րեկի դուք գիտէք թէ նրան ինչպէս սպանեցին. պատ-
կերներ կան, որոնք Յիսուսի մահուան ժամն են ներ-
կայացնում: — Թաղման ժամանակ ի՞նչ պատկեր են տա-
նում դագաղից առաջ: (Խաչվառ): — Մեծ պասին եկե-
ղեցու սեղանի վրայ ի՞նչ պատկեր են դնում: — Ուրեմն
նրա թշնամիներն ի՞նչ արին նրան: — Արդեօք խաչի
վրայ իսկո՞յն մեռել է: — Խաչի վրայ երկար ժամա-
նակ ի՞նչքան տանջանքներ կըքաշէր: — Բայց ի՞նչպէս
կարելի է, որ մարդիկ այսքան անդութ լինէին:
— Միթէ մեր ժամանակ էլ մարդիկ այդպէս ապերամիտ
են դէպ իրանց բարերարները: (Ապերախտութիւնը
աշխարհի վարձատրութիւնն է): — Մարդիկ ամենաքիչ
նրանց են ջնորդակալ լինում, որոնք նրանց պակասու-
թիւնները մատնացոյց անելով կամենում են ուղղել: —
Բայց Յիսուսն հւմ մեղքերն էր երեսին բռնել: — Մտա-
բերեցէք ողորմած սամարացու առակը: Այդ առակը
լսողներն ի՞նչ կարծիք պիտի ունենան քահանաների և
դևացոց մասին: — Իսկ քահանաներն ու դևացիք
ի՞նչպէս կընդունէին այդ առակը: — Այդպէս շատ շա-
տերի մեղքերն երեսներին բռնել էր: Յիսուսն ի՞նչու

էր այդ բանն արել: — Միթէ կամենում էր մարդկանց
վատութիւն անել: — Նրա մտադրութիւնն աւելի ի՞նչ
էր: — Քահանաներն իրանց լինչպէս պիտի պահէին: —
Բայց մարդիկը չէին հասկանում Յիսուսի բարի մտադ-
րութիւնը, զայրացան, կատաղեցին նրա վրայ և կա-
մենում էին սպանել: Բայց միթէ կըհամարձակուէին
այդ անել: — Ի՞՞զ է պաշտպանում մեղ չար մարդկան-
ցից: — Ուրեմն ով պիտի պաշտպանէր Յիսուսին իրա-
թշնամիների դէմ: — Ընդհակառակը իշխանութիւնը,
դատարանն ում է սպանել տալիս: — Միթէ Յիսուսը
ոճրագործ էր: — Ուրեմն ի՞նչ չըպիտի պատահէր: — Բայց
տեսէք թէ ինչքան չար էին Յիսուսի թշնամիները:
Նրանք դանդատեցին դատաւորին և ասին, «նա չի կա-
մենում կայսրին հնազանդել և զրգում է մարդկանց»,
որ այլևս հարկ չըտան ու իրան թագաւոր դարձնեն»:
— Միթէ ոյս ճշմարիտ էր: — Ուրեմն ի՞նչ էին անում
մարդիկ Յիսուսի վրայ չարախօսելով: — Միթէ իշխա-
նութիւնը այսպիսի մարդկանց պիտի ականջ դնէր: —
Բայց ի՞նչ արեց նա: — Ինչլիք գիտենք, որ այդ մարդ-
կանց հաւատացել է: — Ի՞նչ արին Յիսուսին:

Ամփոփումն. Մարդիկ ինչո՞ւ էին ատում տէր Յի-
սուսին: — Բայց Յիսուսն ի՞նչպէս էր վարւում նրանց
հետ: — Մարդիկն ի՞նչ արին իրանց ատելութիւնով: —
Իշխանութեան մօտ նրա վրայ չարախօսելով ի՞նչ բան
յաջողեցըրին:

Արդեօք Յիսուսն իրա թշնամիների վրայ զայրա-
ցէլ է: — Ի՞նչ է լինում մեր սիրտը, երբ մէկը մեղ ա-
նիրաւ բան է անում: — Դժբաղդաբար շատ անգամ ի՞նչ
ցանկութիւն ենք ունենում: — Ոմանք մարդկանցից ի՞նչ
են անում, երբ հնար ունեն իրանց հակառակորդներին
մվասելու: — Բայց միայն ով իրաւոնք ունի չարագործ-
ներին պատմելու: — Բայց երբ իշխանութիւնն ինքն է
անիրաւութիւն գործում, ով կարող է նրան պատմել:
— Միթէ Յիսուս ցանկացած կըլինի, որ իրա թշնամի-

Ներին Աստուած պատժէր:—Նա այդ չէր ցանկանում, ընդհակառակ իրա երկնաւոր Հօրից ներողութիւն էր խնդրում նրանց համար: Խաչի վրայ աղօթում էր. «Հայր, ներիր նրանց, որովհետև նրանք չլգիտեն, թէ ի՞նչ են գործում»:—Ի՞նչ ենք հասկանում այս աղօթքից:—Միթէ բարիկանում է նրանց վրայ:— Ընդհակառակ ի՞նչ աշբով է նայում նրանց վրայ:

Ամփոփումն. Յիսուս ի՞նչ էր անում իրա թշնամիների համար:

Մահուան ժամին Յիսուսն ում վրայ մտածած կըլինի:—Բոլոր մարդկանց մէջ ձեր սրտին ամենամօտն ով է:—Զեր մահուան ժամին ով ամենից շատ կըլըսկըծայ:—Յիսուսի հայրը վաղուց էր վախճանուել, բայց մայրը գեռ ողջ էր և այժմ տիսուր արտում կանգնած էր խաչի ներքեւ:—Մօր պէս գարձեալ ովքեր կըլինէին վշտահար:— Ո՞վքեր էին միշտ Յիսուսի հետ եղել և նրա սէրը լիուլի վայելել:—Աշակերտների մեծ մասը փախնէլ էին, նրանք վախենում էին, որ կարող են իշխանք նոյնպէս բռնուել և կախուել: Բայց մէկը՝ Յովհաննէս անունով չէր բաժանուել իրա վարդապետից: Նրա մէջ սէրն աւելի խոր էր, քան թէ վախը: Այժմ կանգնած էր նա մօր կողքին խաչի տակ: Երբ Յիսուսը տիսաւ երկուսին խոր վշտի մէջ կանգնած, ձայն տուեց իրա մօրը. «ահա, քու որդին»: Եւ դառնալով աշակերտին ասեց. «ահա, քու մայրը»: Այդ ժամից աշակերտը ընդունեց Մարիամին իրա մօտ և պահպանեց: Երբ Յիսուսը իրա թշնամիների համար աղօթել էր և իրա մօր պահպանութեան համար հոգացել, արդէն զգաց, որ մահը մօտենում է:—Ի՞նչպիսի մտածմունքով լիք կըլինէր մեռնող Փրկչի հոգին:—Ի՞նչ էր գալու այս կեանքից ետ:—Ի՞նչ կարող էր յուսալ Յիսուս այն կեանքից:—Ի՞նչու:—Մինչև վերջին վայրկեանը ում համար էր աշխատելու հոգացել:—Ուրեմն ի՞նչ կարող էր յուսալ:—Այդ ակնկալութեան մէջ աղօթեց

նա. «Հայր, քու ձեռն եմ աւանդում իմ հոգին»: Այդ ասելուց ետ վախճանուեց:

Ամփոփումն. Ո՞վ էր կանգնած Յիսուսի խաչի տակ:—Ի՞նչ ասեց Յիսուս աշակերտին: — Ի՞նչ ասեց մօրը:—Ի՞նչ աղօթեց Յիսուս իրա համար:

Յիսուսի բարեկամներն ի՞նչ արած կըլինեն նրա մարմինը: — Ի՞նչ են անում մեղ մօտ մեռելներին: — Բայց բոլոր մեռելներին հողի մէջ չեն թաղում: Գերեզմանատանը կան դամբարաններ—մատուի պէս շինած: Այսպէս էր այն գերեզմանը, ուր Յիսուսի մարմինը դրուեց: Նրա չորս կողմը պատեր չէին քաշած, այլ կտրած էր քարի մէջ: Այս քարէ գերեզմանի մէջ դըին բարեկամները Յիսուսի մարմինը և մի մեծ սալ զլորելով փակեցին նրա մուտքը:

Ամփոփումն. Ի՞նչպէս թաղեցին Յիսուսին:

Ուրեմն, ասեցէք, այն ժամանակ մարդիկ ի՞նչպէս վճարեցին Յիսուսի սէրը: — Միթէ ամենն այնպէս չմր էին: — Ո՞վքեր մինչև վերջը մնացին հաւատարիմ: — Արգեօք Յիսուսը դառնացաւ մարդկանց ապերախտութիւնից:—Ի՞նչից ենք իմանում այս: — Ի՞նչպէս էր ներումն ինդրում իրա թշնամիների համար:—Ուրեմն ի՞նչ սրտով էր նայում նրանց վրայ: — Ո՞ր օրն ենք կատարում Յիսուսի մահուան յիշատակը:—Յիսուսի մահը յիշելով միթէ միայն պիտի տխուր տրտում նստենք:—Ընդհակառակ աւելի ի՞նչ պիտի անենք:— Ի՞նչպէս կարող ենք ապացուցանել, որ Յիսուսին ճշմարիտ սիրում ենք:— Նրա աշակերտ դառնանք:

20. ՅիՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ (Մատ. ԻՂ. 1—10).

Նպ. Ի՞նչո՞ւ ենք տօնում Զատիկը.

Երբ ենք տօնում Զատիկը:— Զատիկից առաջ մը գիշերն ենք եկեղեցի գնում: (Սուզի զիշերը, որի հետեւալ օրը կոչւում է Աւագ ուրբար կամ Զարցարանքի

ուրբար: — Աւագ ուրբաթն ի՞նչ է յիշեցնում: — Բայց ի՞նչն է իմացնում մեզ Զատիկլը: — Ուրեմն ի՞նչ է պատահել մեռած Փրկչի հետ: — Այս, այդ պատահեց Զատիկի առաւօտ շատ վաղ: — Ուրախ լուրը ամենից առաջ մով ստացած կըլինի: — Ո՞վքեր ամենից առաջ նկատած կըլինեն, որ գերեզմանը գաղարկ է: — Մեզ մօտ ննջեցեալների գերեզմանները մովքեր են աւելի յաճախ այցելում: — Ննջեցեալների ազգականները ի՞նչ են փընդրում գերեզմանի մօտ: — Ի՞նչ են կամենում հասկացնել գերեզմանը զարդարելով: — Այսպէս Զատիկի առաւօտ երեք կանայք գնացին Յիսուսի գերեզմանի մօտ և կամենում էին ննջեցեալին իրանց սէրն ու երախտագիտութիւնը ցոյց տան: — Գերեզմանն ի՞նչպէս պիտի գտնէին: — Յիսուսն ի՞նչպէս էր թալուած: — Ի՞նչով էին փակել քարէ գերեզմանը: — Բայց երբ կանայք եկան գերեզմանի մօտ, բերանի քարը հեռացրած էր: — Բաց գերեզմանի վրայ նստած էր մի հրեշտակ: Նրա գէմքը շողշողում էր ինչպէս փայլակ և հանդերձը սպիտակ էր ի՞նչպէս ձիւն: — Ի՞նչպէս կըլինէին կանայք բաց գերեզմանը և հրեշտակը տեսնելիս: — Յիշում էր ի՞նչպէս եղան հովիները, երբ հրեշտակը նրանց դաշտում երեաց: — Հրեշտակն այն ժամանակ ի՞նչպէս հանգստացրեց հովիներին: — Նոյն խօսքերով ողջունեց գերեզմանի մօտի հրեշտակը երեք կանանց: — Ուրեմն ի՞նչպէս խօսեց: — Հրեշտակը մի աւետիք էլ ունէր նըրանց հաղորդելու: Օրինակ ի՞նչ: — Ի՞նչ տպաւորութիւն կանէր այս զարմանալի դէպքը կանանց վրայ: — Ո՞ւմ կըկամենային այդ ուրախ լուրը հասցնել: — Այդ բանը պատուիրեց նրանց հրեշտակը նոյնպէս, նա ասեց. «Ճառապեցէք և յայտնեցէք աշակերտներին, որ Յիսուս յարութիւն է առել, կարող են նրան կրկին տեսնել»: Կանայքը գերեզմանի մօտից ի՞նչպէս հեռացած կըլինեն: — Ո՞ւմ մօտ գնացին նրանք: — Ի՞նչ էին կամենում աշակերտներին ասել: — Բայց տեսէք թէ ի՞նչ մեծ ու-

ըախութիւն վիճակուեց կանանց: Երբ նրանք ճանապարհի կիսում էին, հանդիպեց նրանց մի մարդ: Ո՞վ կըլինէր դա: — Յիսուսը կրկնեց կանանց այն, ի՞նչ որ հրեշտակից լսել էին: Ուրեմն ի՞նչ ասեց նրանց: — Կանայք ի՞նչ արին: — Աշակերտների սիրտն ի՞նչ կըլինէր, երբ այս բանը լսեցին:

Ամփոփումն. Ո՞վքեր գնացին Յիսուսի գերեզմանի մօտ: — Կանայք ի՞նչ վիճակում գտան գերեզմանը: — Ի՞նչ ասեց նրանց հրեշտակը: — Ո՞վ պատահեց նրանց տուն վերադառնալիս: — Ի՞նչ ասեց Յիսուսը: — Ի՞նչ արին կանայք: — Աշակերտներն ի՞նչպէս ընդունեցին այդ ուրախ լուրը:

Իանայք և աշակերտներն ի՞նչպէս էին նախքան Յիսուսի յարութեան մասին լսելը: — Ի՞նչ եղաւ նըրանց վիշտն ու սուզը, երբ նրանք յարուցեալին տեսան: — Ո՞վ էր Յիսուսին գերեզմանից յարութիւն տուել: — Մեր մահից ետ մենք ինչի՞ կարող ենք յոյս ունենալ: — Ո՞ւմ կըկին կըտեսնենք: — Ի՞նչպէս պիտի ապրենք, եթէ ուզում ենք երկինք գնալ: — Ի՞նչպէս պիտի լինենք ընկերների հետ: — Արդիօք կարիք ունենք մահից վախինալու: — Ի՞նչու ոչ: — Ի՞նչ միտք կարող է մեզ միխթարել, երբ տեսնում ենք մեր ազգականների մաը: — Այդ մասին կայ զատկական փոքր երգ. —

«Քրիստոսը յարութիւն տուաւ մեռեներից,

իրա մահով յաղթեց մահին և իրա յարութիւնով մեզ կեանք պարգևեց, փառք նրան յաւիտեանս. ամէն»:

**21. Վերջին ՊԱՏՈՒՔԻՐ ՏԱԼՔ ԵՒ ՀԱՄԲԱՌՆԱԼԸ
(Մատ. Իլ. 18—20, Մարկ. ԺԶ. 19).**

Նպ. Ի՞նչ պիտի մտաքերենք Համբարձման տօնին.

Ո՞ւմ մասին էին յիշեցնում այն տօները, որոնց

վրայ խօսեցել ենք: — Ծնունդի տօնը ի՞նչ էր յիշեցնում: — Իսկ Սմբատի գիշերը կամ Աւագ Ո՞ւրբաթը: — Իսկ Զատիկը: — Համբարձման տօնն ում է վերաբերում: — Ո՞ր անցքի մասին պիտի այժմ խօսենք: — Իրա յարութիւնից ետ Յիսուսն երևաց իրա բոլոր աշակերտներին: Շատ անգամ նրանց երևաց և ուսուց: Երբ վերջին անգամ նրանց հետ միասին էր, ասեց նրանց թէ ի՞նչ պիտի անեն, եթէ նա այլ ևս նրանց մօտ չըլինի: — Աշակերտներն ի՞նչ պիտի անէին: — Յիսուսն ի՞նչ էր արել: — Ի՞նչո՞ւ համար էր նա աշակերտներ ընտրել: — Վերջապէս Յիսուսի համար բաժանուելու ժամանակը հասել էր: Աշակերտները պիտի նրա գործը շարունակէին: — Աշակերտներն ի՞նչ պիտի ասէին ժողովրդին: — Ո՞ւմ մասին պիտի նրան պատմէին: — Նրանք ժողովրդին ի՞նչ բանի պիտի յորդորէին: — Ժողովուրդն ում պիտի իրան օրինակ ընդունէր: — Այսօր ՞վ է քարոզում Յիսուս Քրիստոսի մասին և ժողովրդին պատուիրում նրան հետեւ: — Աշակերտները Յիսուս Քրիստոսի յարութեան լուրը ամենից առաջ ում տարած կըլինեն: — Ո՞ր երկրումն էին ապրում աշակերտները: — Ի՞նչպէս էր կոչում ախտեղ ապրող ժողովուրդը: — Ուրեմն աշակերտներն ամենից առաջ ում քարոզած կըլինեն: — Այսօր քրիստոնէութիւնը որտեղ է քարոզւում: — Ի՞նչպէս են կոչում այն մարդիկ, որոնք վայրենի ժողովուրդներին քարոզում են Յիսուսի մասին: (Առաքեալներ): Յիսուսը հրաժեշտ տալիս պատուիրեց իրա աշակերտներին. «Գնացէք աշխարհի բոլոր կողմերը և ուսուցէք բոլոր ժողովուրդներին, մկրտեցէք նրանց Հօր, Որդու և սուրբ Հոգու անունով: Ուսուցէք նրանց, որ պահեն այն ամենը, ինչ որ ես ձեզ պատուիրեցի»: Այսուհետեւ ի՞նչ պատահեց: Մտածեցէք Համբարձում խօսքի վրայ: — Մի ամպ իջաւ ներքեւ, Յիսուս Քրիստոսին պատեց, աշակերտների աշերերի առաջից բարձրացրեց և տարաւ գէպի երկինք:

Ամփոփումն. Ի՞նչ պատուէր տուեց Յիսուս իրա աշակերտներին: — Ո՞ւր պիտի գնային: — Ո՞ւմ պիտի քարոզէին: — Ի՞նչ պիտի ուսուցանէին: — Ի՞նչ սուրբ ծէսով պիտի մարդիկ մտնէին քրիստոնեաների ուխտի: մէջ: — Ո՞ւմ պիտի իրանց օրինակ առնէին: — Ի՞նչ պատահեց, երբ Յիսուսը խօսրը վերջացըրել էր:

Պատուէրը, որ Յիսուսը տուեց աշակերտներին, արդեօք մեզ էլ վերաբերնեմ է: — Զեր ծնունդից ետ ձեր ծնողներն ի՞նչ են արել: — Եկեղեցի են տարել, մկրտիկ տուել: — Կնքահայրը գրկել է, հոգէորդի, սանիկ դարձրել, որ ծնողների բացակայութեան միջոցին նրա համար հոգայ: — Յիսուսի պատուէրն ի՞նչպէս է կատարում, երբ մանուկները մեծանում են: Դպրոց են գնում, այնտեղ սովորում: — Արդեօք բաւական է միայն Յիսուսի մասին լսելն ու ուսանելլ: — Գլխաւոր բանն ի՞նչի մէջն է: — Աշակերտներն ի՞նչ պիտի ուսուցանէին ժողովրդին: — Մենք էլ պիտի Յիսուսի բոլոր պատուէրները պահենք: Բայց ի՞նչն է, որ Յիսուսն ամենից առաջ մարդկանցից պահանջել է: — Ի՞նչպէս պիտի լինեն ընկեր մերձաւորների հետ: — Յիսուսն այն գեղեցիկ առակի մէջ որ մարդուն մեզ օրինակ տուեց: — Յիսուսն ի՞նքը խեղճ ու թշուառներին ի՞նչպէս էր վերաբերում: — Եթէ նրա օրինակին հետեւնք, մահից ետ ի՞նչ բանի կարող ենք յոյս ունենալ: — Հոգով երկինք գնալու և այնտեղ յաւիտեան ապրելու: — Ո՞վ կարող է ամենից լաւ մեզ այնտեղ առաջնորդել:

22. ՔՐԻՍՏՈՆԷԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՅՆՔԸ

(Գործ. առաք. Բ. 1,4, 41. Դ. 32)

Նպ. Արդեօք աշակերտները Յիսուսի պատուէրը կատարեցին թէ չէ.

Ի՞նչից ենք իմանում, որ նրանք կատարել են: — Ո՞ւմ մասին են խօսում մեր ժամերում: — Միթէ միայն

միր գիւղում կամ քաղաքում է ուրախ լուրը քարոզւում: — Ելի որտեղ: — Այդ թնչպէս է լինում: — Ի՞նչ բան կարող էր աշակերտներին հա պահել Տիրոջ պատուէրը կատարելուց: — Իրանց վարդապետի գլուխն թնչ էր եկել: — Ի՞նչ կարող էր նոյնպէս աշակերտներին պատահել: — Մի ուրիշն թնչ կանէր աշակերտների տեղ: — Այսպէս էր նոյնպէս սկզբում աշակերտների վիճակը: Զէին համարձակելում Յիսուսի մասին քարոզել: Երբ նրանք միատեղ ժողովուեցին, փակուեցին դաները, վախենում էին չվլինի թէ իրանց էլ փորձանք պատահի, թնչպէս իրանց վարդապետին: — Ի՞նչ բան նրանց սիրտ տուած կըլինի ժողովրդի առաջ գուրս գալու: — Ո՞վ էր նրանց պատուէր տուել: — Միթէ Յիսուսն էլ այսպէս վախկոտ էր եղել: — Ընդհակառակ նա թնչ էր արել: — Ի՞նչպէս կարող էին վստահ, համարձակ քարոզիչներ դառնալ: — Ո՞ւմ հոգին պիտի նրանց մէջ ապրէր: — Աստծու վրայ յոյս դնելու և աներկիւդ գործելու հոգին վարդապետի մահից ետ չըկար: Բայց մի զարմանալի բան պատահեց: Երբ աշակերտները Համբարձմանից տասն օր ետ միասին նստած էին և միասիրտ աղօթում էին, յանկարծ Յիսուսի հոգին իջաւ նրանց վրայ և իւրաքանչիւրը լցուեց նրանով: — Ի՞նչպէս կըդառնային նրանք այն ժամին: — Ի՞նչ կանէին: — Ի՞նչ կըքարոզէին ժողովրդին: — Ո՞ւմ մասին կըպատմէին նրանք: — Ժողովրդին թնչ բանի կըյօրդորէին:

Ամփոփումն. Ի՞նչպէս էին աշակերտներն իրանց վարդապետի մահից ետ: — Ի՞նչպէս պատահեց, որ նըրանք նրա կերպին պատուէրը կատարեցին: — Ի՞նչ էին քարոզում նրանք:

Ի՞նչ արած կըլինին այն մարդիկ, որոնք Առաքեալների քարոզը լսում էին: — Ամեն բանից առաջ Յիսուսն թնչ էր պահանջում մարդկանցից: — Միթէ ամենը, որ նրա խօսքերը լսում էին, պատրաստ կըլինին իրանց ընկերներին սիրել և նեղացածներին

քարոզթիւն անել: — Ի՞նչ մարդիկ ենք ճանաչել, որ այդ բաները չէին անում: — Անշուշտ այսպիսի մարդիկ կային և նրանց մէջ, որոնք աշակերտների քարոզները լսում էին: — Միթէ այդպիսիները Յիսուսի աշակերտներ կըդառնային: — Յիսուսի աշակերտն թնչպէս պիտի վարուէր ընկերի հետ: — Ի՞նչ սրբազն ծէսի միջոցով էին Յիսուսի աշակերտների շարքն ընդունուում: — Այն մարդիկը, որոնք մկրտում էին, կազմում էին քրիստոնէական առաջին համայնքը: Ի՞նչպէս կըլինէին իւրաք հետ քրիստոնէական առաջին համայնքի անդամները: — Պատմում են՝ որ նրանք մի սիրտ, մի հոգի էին: Այս թնչ է նշանակում: — Երբ նրանցից մէկին մի վէշտ կամ ցաւ էր պատահում, թնչ կանէին միւսները: — Եւ թնչպէս կըվերաբերուէին, երբ մէկը լաւ էր, յաջողակ էր: — Միթէ նրան կընախանձէին: — Ընդհակառակն թնչ կանէին:

Ամփոփումն. Ի՞նչ յաջողութիւն ունեցաւ քարոզը: — Ժողովրդի մի մասն թնչ արեց: — Միւս մասն թնչ արեց: — Ի՞նչպէս էին ընդունուում սրանք քրիստոնէաների ուխտի մէջ: — Ի՞նչպէս էին իրաք հետ քրիստոնէական համայնքի անդամները:

Ի՞նչ տօն ենք կատարում աշակերտների վրայ սուրբ Հոգին իջնելու առիթով: (Հոգեգալուստ): — Քրիստոնէական համայնքի միւս անդամներն էլ լցուեցին սուրբ Հոգու շնորքով: Այս, այսօր էլ սուրբ Հոգին շարունակում է ապրել Յիսուսի աշակերտների մէջ: Յիսուսի այդ աշակերտներն հվիքեր են: — Ի՞նչպէս են նըրանք իրաք հետ: — Միրոյ այդ հոգին թնչպէս է գալիս մեղ մօտ: (Քարոյ լսելով, կարգալով): — Առաջին քըրիստոնէաների մօտ թնչպէս եկաւ: — Առաքեալներն մեծ մասին էին պատմել ժողովրդին: — Մենք որտեղ ենք լսում Յիսուսի մասին: (Եկեղեցում քարոզի ժա-

մանակ): — Յիսուսին սիրողները լինչպէս պիտի վարուեն ընկերների հետ: — Առաջին քրիստոնեաների մասին ի՞նչ լսեցինք, նրանք ի՞նչպէս էին իրար հետ: Այդ սիրով էլ կամենում Յիսուսն իրա աշակերտներին ճանաչել: Ահա թէ ի՞նչ է ասել նա: «Զեզ տեսնող ամեն մի մարդ այն ժամանակ կասի, որ դուք իմ աշակերտներն եք, երբ իրար հետ սիրով լինէք»:



ԱՌԱԿՆԵՐԻՆ ԵՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԿՅՈՒԱԾ ԵՐԳԵՐՆ ՈՒ
ԱՇՈՐԵՏԵՐԸ.

	Էջ
1. Նանիկ	22
2. Հայր մեր երկնաւոր	34
3. Այսօր տօնն է	41
4. Խորհուրդ մեծ	42
5. Մելքոն, Գասպար և	46
6. Բարեբար Աստուած	49
7. Ով տէր մեր գթոտ	—
8. Երկնաւոր Հայր	53
9. Ամենի աչքերը քեզ	63
10. Գոհ ենք ըեզանից	70
11. Իոկ ես ինչ ունիմ	73
12. Քրիստոս յարութիւն առաւ	79

«Ազգային գրադարան



NL0150922

ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱԿԱՆ ՎԱՃԱՌԻՈՒՄ ԵՆ
ՄԵՐ ՄԻՒԾ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

	Գինը
1. Ծովինար, բ. տպ.	20
2. Երկու աղքելացեղ, բ. տպ.	30
3. Շէն թագաւորի աղջիկը, բ. տպ.	25
4. Աստուած աղքատի կերպում .	20
5. Անմեռ աշխարհ.	8
6. Հէքեաթներ	30
7. Աստուած չըճանաչող,	10
8. Գալօ Ափօ և Խաչան, բ. տպ.	12
9. Ժամանակը ոսկի, (պատկերազարդ).	40
10. «Սիրտ» գրքից, (պատկերազարդ)	40
11. Քաջ Աղասի,	25
12. Սասունցի Յովսան,	30
13. Երկու զրոյց, (ա. Երեք խոստովանութիւն, բ. Երեք ոսկու պատմութիւն),	25
14. Ազգային առակներ,	25
15. Խուլ Խաչիկ, բ. տպ.	25
16. Երկասիրութիւններ,	50
17. Փոքրոգի բարեկամներ,	15

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊ.

Հեղինակի հասցէն՝ Թիֆլիս, Միքայէլեան փողոց
№ 82.